Իրավունքների Պաշտպանություն
Ազգային Ասամբլեայի ՀԿ

Ժողովրդավարության
զարգացման
հիմնադրամ

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ

2023 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

2024

Սույն զեկույցի թողարկումը հնարավոր է դարձել Ժողովրդավարության զարգացման հիմնադրամի օժանդակության շնորհիվ «Արդարացի դատաիրավական բարեփոխումներ» ծրագրի շրջանակներում: Զեկույցում տեղ գտած տեսակետները և վերլուծությունները արտահայտում են հեղինակների կարծիքը և կարող են չհամընկնել Ժողովրդավարության զարգացման հիմնադրամի տեսակետների և դիրքորոշումների հետ:

Զեկույցի հեղինակներն են Անահիտ Մկրտչյանը, Աննա Մելիքյանը:

Հետազոտությունն իրականացրել է Անահիտ Մկրտչյանը: Հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց ընտրության գործընթացի մշտադիտարկումն իրականացրել է Աննա Մելիքյանը: Զեկույցը խմբագրել է Արաքս Մելքոնյանը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 4

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 5

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ..... 7

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ՀԱՍՏԻՔՆԵՐԻ ՀԱՄԱԼՐՈՒՄ 8

ԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ..... 17

ՀԿԿ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՎ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ..... 25

ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՍՏԵՂԾՈՒՄ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԿԱՐԳԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄ..... 29

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ՔՆՆԻՉՆԵՐԻ ԾԱՆՐԱԲԵՌՆՎԱԾՈՒԹՅՈՒՆ. ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐ..... 38

ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՀԱՆՑԱՆՔՆԵՐՈՎ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ..... 43

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ԲՅՈՒՋԵ, ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ ԵՎ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱԳԵՑՎԱԾՈՒԹՅՈՒՆ 45

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 47

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՔՀԿ	Քաղաքացիական հասարակության կազմակերպություն
ԻՊԱՍ	«Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպություն
ԶԼՄ	Զանգվածային լրատվության միջոցներ
ԿԿՀ	Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով
ՀԿԿ	Հակակոռուպցիոն կոմիտե
ՆԱՎ	Ներքին անվտանգության վարչություն
Ինքնավար պաշտոն զբաղեցնող անձ	Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը, նրա տեղակալները, Հակակոռուպցիոն կոմիտեի վարչությունների պետերը, նրանց տեղակալները, բացառությամբ Հակակոռուպցիոն կոմիտեի՝ օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող վարչության ղեկավարի (հետաքննության մարմնի պետի) և նրա տեղակալի, հակակոռուպցիոն Կոմիտեի բաժինների պետերը, նրանց տեղակալները, բացառությամբ օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող բաժինների ղեկավարների և նրանց տեղակալների, հակակոռուպցիոն Կոմիտեի հատկապես կարևոր գործերով ավագ քննիչները, հատկապես կարևոր գործերով քննիչները, ավագ քննիչները, քննիչները
Օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող անձ	օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող վարչության ղեկավարը և նրա տեղակալը, բաժինների ղեկավարները և նրանց տեղակալները, ավագ օպերլիազորները, օպերլիազորները

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հակակոռուպցիոն կոմիտեն ստեղծվել է 2021թ. -ի հոկտեմբերի 23-ին՝ Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022թթ. -ի միջոցառումների շրջանակներում[1]: 2021-2022թթ. -ի ընթացքում Հակակոռուպցիոն կոմիտեն անցել է օրենսդրական և գործնական փոփոխությունների շրջափուլով, որի շրջանակներում Ազգային ժողովի կողմից ընդունվել է Հակակոռուպցիոն կոմիտեի մասին ՀՀ օրենքը[2], անցկացվել է Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի ընտրության մրցույթ և նշանակում[3] Կառավարության կողմից, այնուհետև Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի կողմից ընդունվել են իրավական ակտեր, որոնց հիման վրա անցկացվել են կոմիտեի ծառայողների թեկնածուների ընտրության մրցույթներն և պաշտոնին նշանակումները:

2021թ. -ին ընդունվել են ՀՀ քրեական և քրեական դատավարության նոր օրենսգրքերը, որոնցով ընդլայնվել է կոռուպցիոն հանցագործությունների շրջանակը, բազմիցս փոփոխությունների են ենթարկվել Հակակոռուպցիոն կոմիտեի քննչական ենթակայության հետ կապված հարցերը: Քննչական ենթակայության կանոնների փոփոխությունները առավելապես պայմանավորված են եղել Հակակոռուպցիոն կոմիտեի սահմանափակ ռեսուրսներով, ներառյալ՝ բյուջեն, հաստիքները, շենքային պայմանները և այլն: Հակակոռուպցիոն կոմիտեի և դատարանների շենքերի կառուցման աշխատանքների ուղղությամբ միջոցներ ձեռնարկվել են սկսած 2021թ. -ից, որոնք ներառել են շենքի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման, գնման գործընթացի հետ կապված աշխատանքները: 2022թ. -ից Հակակոռուպցիոն կոմիտեն պետական բյուջեով դիտարկվել է որպես առանձին մարմին[4]: Հակակոռուպցիոն կոմիտեի աշխատողների առավելագույն թիվն ի սկզբանե սահմանված է եղել 170 հաստիքային միավոր, հետագայում՝ 2022թ. -ին[5] Կոմիտեի հաստիքների թիվը ավելացվել է ևս 100-ով՝ ընդհանուր կազմելով 270 հաստիք, որից 80-ը նախատեսված է ինքնավար պաշտոնների, իսկ 120-ը՝ օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող պաշտոնների համար[6] (70-ը՝ քաղաքացիական, հայեցողական ծառայության պաշտոնների, քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց համար): Ավելացված հաստիքների համալրման գործընթացը սկսվել է 2023թ. -ին:

---

[1] Տե՛ս ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության 73 կետը, 2019-2022թթ.-ի միջոցառումների ծրագրի 2-րդ միջոցառումը

[2] Տե՛ս Հակակոռուպցիոն կոմիտեի մասին ՀՀ օրենքը, հղումը՝ https://www.arlis.am/documentview.aspx?docid=186236

[3] Տե՛ս ՀՀ կառավարության 2021թ.-ի սեպտեմբերի 16-ի 1479 – Ա որոշումը, հղումը՝ https://www.e-gov.am/gov-decrees/item/36876/

[4] Մինչև 2022թ.-ը հակակոռուպցիոն կոմիտեին առնչվող համապատասխան ծրագրերի և միջոցառումների գծով կատարող էր սահմանվել ՀՀ արդարադատության նախարարությունը

[5] Տե՛ս ՀՀ վարչապետի 2022թ.-ի դեկտեմբերի 6-ի N 1450- Ա որոշումը

[6] Տե՛ս ՀԿԿ 21.05.24թ. գրությունը՝ ի պատասխան ԻՊԱՍ 13.05.24թ.-ի հարցմանը:

Գծապատկեր 1. ՀԿԿ աշխատակազմի բաշխվածությունը՝ ըստ հաստիքի տեսակի

Վերոնշյալ գործողությունները կատարվել են ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022թթ. -ի միջոցառումների[7] շրջանակներում, որը ևս հընթացս ենթարկվել է փոփոխությունների[8]: Ռազմավարության գործողության ժամկետն ավարտվել է 2022թ. -ի տարեվերջին, իսկ հաջորդ՝ 2023-2026թթ. հակակոռուպցիոն ռազմավարությունը՝ դրա իրականացման միջոցառումների ծրագրով, ուժի մեջ է մտել 2023թ. -ի նոյեմբերի 3-ին[9]: Այսինքն, **Հայաստանի Հանրապետությունը 2023թ. -ի գրեթե ողջ ընթացքում չի ունեցել գործող հակակոռուպցիոն ռազմավարություն և չի նախատեսել ռազմավարական որևէ գործողություն ընթացիկ տարվա համար**[10]:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության պատշաճ կազմակերպման համար հիմնական նախադրյալները օրենսդրական մակարդակով նախատեսվել են, սակայն առանձին իրավական ակտերի ընդունումը և գործնական մարտահրավերները դեռևս գտնվում են հաղթահարման և կատարելագործման փուլում, ուստի սույն հետազոտությամբ անդրադարձ կկատարվի Հակակոռուպցիոն կոմիտեի 2023թ. -ի ընթացիկ գործունեության հետևյալ հիմնական ասպեկտներին. Հակակոռուպցիոն կոմիտեի հաստիքների համալրում, Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների

[7] Տե՛ս ՀՀ կառավարության 3 հոկտեմբերի 2019 թվականի N 1332-Ն որոշումը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=168051

[8] Տե՛ս ՀՀ 2019-2022թթ.-ի հակակոռուպցիոն ռազմավարության փոփոխված տարբերակը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=168051

[9] Տե՛ս ՀՀ կառավարության 26 հոկտեմբերի 2023 թվականի N 1871-Լ որրոշումը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=184674

[10] Հատկանշական է, որ 2023թ.-ին գործողություն նախատեսված չլինելու պայմաններում, ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունից բխող 2023-2026 թթ.-ի գործողությունների ծրագրի ֆինանսական գնահատականով 2023թ.-ի համար նախատեսվել է 1,250.0 հազ. դրամ տրամադրել Հակակոռուպցիոն կոմիտեի (…) գործունեության թվայնացմանն ուղղված միջոցների իրականացման, 625.0 հազ. դրամ՝ կոռուպցիոն հանցագործությունների շրջանակի և դրանց քննչական ենթակայության վերանայման իրականացման նպատակով, հղումը՝ https://www.arlis.am/Annexes/7/2023_N1871hav.3.pdf

թեկնածուների մասնագիտական պատրաստում և ծառայողների վերապատրաստում, կարգապահական հանձնաժողովի ստեղծում և համապատասխան կարգերի ընդունում, Հակակոռուպցիոն կոմիտեի քննիչների ծանրաբեռնվածություն. ազդող գործոններ, կոռուպցիոն հանցանքներով փորձաքննություններ, Հակակոռուպցիոն կոմիտեի բյուջե, շենքային պայմաններ և նյութատեխնիկական հագեցվածություն:

Հակակոռուպցիոն կոմիտեի ընթացիկ գործունեության մշտադիտարկումը կարևոր է, քանի որ այն նորաստեղծ ինստիտուտ է, ինստիտուցիոնալ առումով ոչ անկախ գործադիրից, առնչվում է բարձր մակարդակի կոռուպցիայի, հաշվետվողականության բացակայության, ընտրովի արդարադատության ռիսկի հետ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել Հակակոռուպցիոն կոմիտեի (այսուհետ՝ ՀԿԿ) 2023թ. -ի գործունեությունը՝ վեր հանելով դրա արդյունավետության վրա ազդող գործոնները՝ մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների բավարարությունը, ոլորտը կարգավորող իրավական ակտերի ամբողջականությունը, և ներկայացնել դրանցից բխող առաջարկություններ:

Հետազոտությունը ներառում է 2023թ. -ի հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածը, միաժամանակ հղումներ կատարելով ավելի ուշ ընդունված իրավական ակտերին և իրադարձություններին՝ որպես ի գիտություն:

Հետազոտության շրջանակներում իրականացվել է՝

Կոռուպցիոն ոլորտի ներպետական օրենսդրության ուսումնասիրություն. ուսումնասիրվել և վերլուծության են ենթարկվել ոլորտային օրենսգրքերը, օրենքները, ենթաօրենսդրական ակտերը, օրենքներում փոփոխություն կամ լրացում նախատեսող նախագծերը, ռազմավարությունները, այլ իրավական փաստաթղթերը:

Պետական կառույցների պաշտոնական և զանգվածային լրատվության միջոցների (այսուհետ՝ ԶԼՄ) կայքերի ուսումնասիրություն. ուսումնասիրվել են Հակակոռուպցիոն կոմիտեի[11], ՀՀ արդարադատության նախարարության[12], ՀՀ ֆինանսների նախարարության[13], ՀՀ ազգային ժողովի[14], ՀՀ կառավարության[15] պաշտոնական կայքերը, իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքը[16], Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգի կայքը[17] և այլն:

Հարցումներ. հարցումներ են ուղարկվել Հակակոռուպցիոն կոմիտեին՝ Կոմիտեի բյուջեի, հաստիքացուցակի, կարգապահական հանձնաժողովի աշխատանքների, ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց/թեկնածուների մասնագիտական պատրաստման և վերապատրաստումների վերաբերյալ տեղեկատվության ստացման նպատակով, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին՝ թեկնածուների բարեվարքության վերաբերյալ տեղեկատվության ստացման նպատակով:

---

[11] Տե՛ս ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի պաշտոնական կայքը՝ https://anticorruption.am/hy
[12] Տե՛ս ՀՀ արդարադատության նախարարության պաշտոնական կայքը՝ https://www.moj.am/page/583
[13] Տե՛ս ՀՀ ֆինանսների նախարարության պաշտոնական կայքը՝ https://www.minfin.am/hy/page/petakan_byuj/
[14] Տե՛ս ՀՀ ազգային ժողովի պաշտոնական կայքը՝ http://www.parliament.am/
[15] Տե՛ս ՀՀ կառավարության պաշտոնական կայքը՝ https://www.gov.am/am/, https://www.e-gov.am/
[16]Տե՛ս իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքը՝ https://www.e-draft.am/projects?q=%D5%B0%D5%A1%D5%AF%D5%A1%D5%AF%D5%B8%D5%BC%D5%B8%D6%82%D5%BA%D6%81%D5%AB%D5%B8%D5%B6+%D5%AF%D5%B8%D5%B4%D5%AB%D5%BF%D5%A5&in=all&start_date=&end_date=
[17] Տե՛ս Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգի կայքը՝ https://www.arlis.am/

Մրցույթների մշտադիտարկում. մշտադիտարկման են ենթարկվել 2022թ. -ի նոյեմբերից 2023թ. -ի դեկտեմբերը ներառյալ ընկած ժամանակահատվածում Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից հայտարարված 7՝ կայացված 6 մրցույթ՝ համալրելու ինքնավար պաշտոններ զբաղեցնող անձանց թափուր հաստիքները:

Խորին հարցազրույցներ. խորին հարցազրույցներ են անցկացվել Հակակոռուպցիոն կոմիտեի թվով երեք ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց հետ[18], բացահայտելու համար Կոմիտեի շենքային պայմանների և նյութատեխնիկական միջոցների բավարարության, կատարվող փորձաքննությունների որակի և ժամկետների, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձանց հետ համատեղ աշխատանքի, քննիչների ծանրաբեռնվածության վրա ազդող այլ գործոնների, օտարերկրյա պետությունների հետ համագործակցության, վերապատրաստումների, էլեկտրոնային եղանակով փաստաթղթաշրջանառության, e-criminal case- քրեական գործերի մինչդատական վարույթի էլեկտրոնային կառավարման համակարգի գործարկման հետ կապված խնդիրները:

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ՀԱՍՏԻՔՆԵՐԻ ՀԱՄԱԼՐՈՒՄ

ՀՀ-ում ՀԿԿ ծառայողներն ընտրվում են մրցութային կարգով և պաշտոնի նշանակվում Կոմիտեի նախագահի կողմից: Այսպես, Հակակոռուպցիոն կոմիտեում թափուր պաշտոն առաջանալու դեպքում հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը նշանակում է մրցույթ պաշտոնը թափուր մնալուց հետո՝ երեք ամսվա ընթացքում[19]՝ այդ մասին մրցույթն անցկացնելուց ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ հրապարակելով նաև հայտարարություն՝ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքէջում (www.azdarar.am[20]) և Կոմիտեի պաշտոնական ինտերնետային կայքէջում[21]: Կոմիտեի ծառայողների[22] թեկնածուների ընտրության համար ձևավորվում է **մրցութային հանձնաժողով[23]՝ կազմված Կոմիտեի նախագահի նշանակած Կոմիտեի երեք ծառայողից, Կառավարության առաջադրած մեկ անձից, քաղաքացիական հասարակության մեկ ներկայացուցչից (ընդհանուր՝ 5 անդամ):** Խորհրդակցական ձայնի իրավունքով կարող է ներգրավվել միջազգային փորձագետ, ինչպես նաև հոգեբան: Սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀԿԿ նախագահից բացի, մնացած բոլոր աշխատակիցները ժամանակավոր պաշտոնակատար էին 2022թ. -ին կազմակերպված առաջին մրցույթի հայտարարման և անցկացման պահին[24], սահմանվեց, որ Կոմիտեի ծառայողների առաջին կազմի ընտրության համար ձևավորվող մրցութային հանձնաժողովի կազմն այլ է, դրա մեջ մտնում են հակակոռուպցիոն ոլորտի քաղաքականությունը մշակող լիազոր մարմնի երկու և Գլխավոր դատախազության, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի և քաղաքացիական հասարակության մեկական ներկայացուցիչ (ընդհանուր՝ 5 անդամ): Խորհրդակցական ձայնի իրավունքով ներգրավվել է միջազգային փորձագետ Վ. Կասկոն: Կոմիտեի ծառայողների առաջին կազմի ընտրության

---

[18] Մուշեղ Բաբայան՝ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալ, Դավիթ Կոստանդյան՝ Հակակոռուպցիոն կոմիտեի քննչական երկրորդ վարչության պետի տեղակալ, Գեղամ Մարգարյան՝ Հակակոռուպցիոն կոմիտեի քննչական առաջին վարչության պետի տեղակալ

[19] Տե՛ս Հակակոռուպցիոն կոմիտեի մասին ՀՀ օրենքը՝ https://www.arlis.am/documentview.aspx?docid=195944

[20] Տե՛ս, օրինակ՝ https://www.azdarar.am/announcments/org/117/00995313/

[21] Տե՛ս, օրինակ՝ https://www.facebook.com/photo/?fbid=1305536327613 27&set=pb.100074200721560.-2207520000.

[22] Կոմիտեի նախագահի տեղակալ, Կոմիտեի վարչության, այդ թվում՝ տարածքային վարչության պետ և նրա տեղակալ, հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ, հատկապես կարևոր գործերով քննիչ, Կոմիտեի բաժնի պետ և նրա տեղակալ, ավագ քննիչ, քննիչ, ավագ օպերլիազոր, օպերլիազոր:

[23] Մրցութային հանձնաժողովի կազմավորման և գործունեության կարգը հաստատվել է Կոմիտեի նախագահի 16.11.2021թ.-ի N 20-Լ հրամանով

[24] Մրցույթը հայտարարվել է 2022թ.-ի հուլիսի, թեստավորման թուլը տեղի է ունեցել օգոստոսի , իսկ հարցազրույցի փուլը՝ հեկտեմբերի 3-ին և 4-ին:

մրցութային հանձնաժողովը (այսուհետ՝ առաջին կազմի մրցութային հանձնաժողով) ձևավորվել է 2021թ. -ի դեկտեմբերի 2-ին[25]:

Չնայած այն հանգամանքին, որ մինչև Կոմիտեի ծառայողների առաջին կազմի ամբողջական համալրումը, պետք է շարունակեր գործել վերը նշված կազմով հանձնաժողովը, Կոմիտեի կողմից նախաձեռնվել է օրենսդրական փոփոխությունների նախագիծ[26], որով նախատեսվել է դադարեցնել առաջին կազմի ընտրության մրցութային հանձնաժողովի գործունեությունը ոչ թե Կոմիտեի ծառայողների կազմի ամբողջական համալրման, այլ Կոմիտեի օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող ստորաբաժանման և ինքնավար թափուր պաշտոնների 60 տոկոսի համալրման պահից[27]: Այս օրենքն ուժի մեջ է մտել 2022թ. -ի նոյեմբերի 24-ին, որից հետո Կոմիտեի մնացած թափուր պաշտոնների համալրման համար **նոր մրցույթներն արդեն անցկացվել են օրենքով նախատեսված հիմնական մրցութային հանձնաժողովի կողմից՝ կազմված Կոմիտեի նախագահի նշանակած Կոմիտեի երեք ծառայողից, Կառավարության առաջադրած մեկ անձից և քաղաքացիական հասարակական կազմակերպության (ՔՀԿ) մեկ ներկայացուցչից:** Սա պայմանավորված է նրանով, որ մրցութային հանձնաժողովին են վերապահված տարատեսակ այլ գործառույթներ (*օրինակ՝ Կոմիտեի ծառայողների հերթական և արտահերթ ատեստավորումները, առաջխաղացման ցուցակների կազմման աշխատանքները*), որոնք չեն կարող իրականացվել առաջին կազմի մրցութային հանձնաժողովի կողմից, քանի որ դրանում ընդգրկված չէ Կոմիտեի որևէ ներկայացուցիչ:

ՀԿԿ ծառայողների ընտրության մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ Մրցութային հանձնաժողով) անդամ են նշանակվել Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալ Մուշեղ Բաբայանը, ՀԿԿ քննչական 3-րդ վարչության պետ Արշալույս Մինասյանը, Ներքին անվտանգության վարչության պետ Գարեգին Բեգոյանը, Կառավարության ներկայացուցիչ, ՀՀ վարչապետի աշխատակազմի իրավաբանական վարչության պետի տեղակալ Նաիրա Ճնգրյանը և «Իրազեկ քաղաքացի» հասարակական կազմակերպության ներկայացուցիչ Վաղարշ Աղաբեկյանը: Ինչպես և առաջին մրցութային հանձնաժողովի դեպքում, Մրցութային հանձնաժողովի աշխատանքներին /որոշ մրցույթներին/ խորհրդակցական ձայնի իրավունքով ներգրավվել է միջազգային փորձագետ Վիտալի Կասկոն, ով ներկայացնում էր Զարգացման իրավունք միջազգային կազմակերպությունը (IDLO): Վերջինս մասնակցել է դիտարկված 6 մրցույթներից միայն 3-ին: Մրցութային հանձնաժողովի աշխատանքներին մրցույթի արդյունքում խորհրդակցական ձայնի իրավունքով ներգրավվել է նաև հոգեբան Մարինե Սահակյանը, ով մասնակցել է դիտարկված մրցույթներից միայն 1-ին, որին չի մասնակցել միջազգային փորձագետը:

Մրցութային հանձնաժողովի աշխատանքների և մրցույթի թափանցիկությունն ապահովելու նպատակով 2022թ. -ի նոյեմբերի 25-ին հայտատարվել է նաև քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից դիտորդ ներգրավելու մրցույթ, որի հաղթող է ճանաչվել ԻՊԱՍ-ի ներկայացուցիչը[28] /ինչպես և առաջին մրցույթի ժամանակ/: Հատկանշական է, որ ի տարբերություն դիտորդի[29], Հանձնաժողովի՝ քաղաքացիական հասարակության կազմակերպություն ներկայացնող անդամի ընտրության համար նոր մրցույթ չէր հայտարարվել[30]:

---

[25] Տե՛ս Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի 02.12.2021թ.-ի՝ «Կոմիտեի ծառայողների առաջին կազմի ընտրության մրցութային հանձնաժողով ձևավորելու մասին» № 45-Ա հրամանը

[26] Տե՛ս «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին ՀՀ օրենքը՝ https://www.arlis.am/documentview.aspx?docid=170549

[27] Տե՛ս նախագծի հիմնավորումները՝ https://www.e-draft.am/projects/4180/about

[28] Տե՛ս ՀԿԿ պաշտոնական կայքում հրապարակված տեղեկատվությունը՝ https://www.anticorruption.am/hy/announcement/view/131

[29] Տե՛ս ՀԿԿ պաշտոնական կայքում հրապարակված հայտարարությունը՝ https://www.anticorruption.am/hy/announcement/view/151

[30] Տե՛ս քաղաքացիական հասարակության ներկայացուցչի ներգրավման համար հայտարարված մրցույթի 2022թ.-ի հայտարարությունը՝ https://anticorruption.am/hy/announcement/view/245?fbclid=IwZXh0bgNhZW0CMTAAAR1GQtwVuhnCL-XU1eYgMLQ4-tj1buXTS8FolvF9HHW5i-Bawqa3eds7z1o_aem_cnaNVLevhTl3C-LQR6_cxQ ,

2022թ. -ի նոյեմբերից 2023թ. -ի դեկտեմբերը ներառյալ ընկած ժամանակահատվածում ՀԿԿ-ն հայտարարել է ինքնավար պաշտոններ զբաղեցնող անձանց թափուր հաստիքները համալրելու 7 մրցույթ, որոնցից կայացել է 6-ը.

1. 2022թ. -ի նոյեմբերի 25-ին՝ առաջին կազմի 7 հաստիքի համար[31]: Առաջին կազմի մրցույթի թեստավորման փուլը տեղի է ունեցել դեկտեմբերի 29-ին, իսկ հարցազրույցի փուլը՝ 2023թ. -ի փետրվարի 10-ին[32] (այսուհետ՝ 7 հաստիքի համար մրցույթ):
2. 2022թ. -ի նոյեմբերի 25-ին՝ երկրորդ կազմի 1 հաստիքի համար[33]: Նշված մրցույթը չէր կայացել՝ դիմողների բացակայության պատճառով:
3. 2023թ. -ի հունվարի 5-ին[34]՝ երկրորդ կազմի 1 հաստիքի համար (կրկին հայտարարված), որի թեստավորման փուլը տեղի է ունեցել փետրվարի 10-ին, իսկ հարցազրույցը՝ մարտի 20-ին (այսուհետ՝ 1 հաստիքի համար մրցույթ):
4. 2023թ. -ի հունվարի 18-ին[35]՝ 39 հաստիքի համար, որի թեստավորման փուլը տեղի է ունեցել փետրվարի 27-ին, իսկ հարցազրույցը՝ ապրիլի 14-ին և 15-ին (այսուհետ՝ 39 հաստիքի համար մրցույթ):
5. 2023թ. -ի մայիսի 2-ին[36]՝ 32 հաստիքի համար, որի թեստավորման փուլը տեղի է ունեցել հունիսի 13-ին, իսկ հարցազրույցը՝ հուլիսի 31-ին (այսուհետ՝ 32 հաստիքի համար մրցույթ):
6. 2023թ. -ի մայիսի 19-ին[37]՝ 1 հաստիքի համար, որի թեստավորման փուլը տեղի է ունեցել հունիսի 26-ին, իսկ հարցազրույցը՝ հուլիսի 31-ին (այսուհետ՝ 1 հաստիքի համար մրցույթ):
7. 2023թ. -ի սեպտեմբերի 1-ին[38]՝ 29-ը հաստիքի համար, որի թեստավորման փուլը տեղի է ունեցել հոկտեմբերի 13-ին, իսկ հարցազրույցը՝ դեկտեմբերի 18-ին և 19-ին (այսուհետ՝ 29 հաստիքի համար մրցույթ):

Դիտարկված մրցույթներից կեսի դեպքում թափուր հաստիքները չեն համալրվել, ի սկզբանե դիմողների թիվը պակաս է եղել առկա թափուր հաստիքներից:

2023 թվականին գործող կարգի համաձայն՝ Կոմիտեի ինքնավար պաշտոնների համալրման մրցույթն անցկացվել է փաստաթղթերի ուսումնասիրության, թեստավորման/գրավոր փուլի, բարեվարքության ուսումնասիրության, հարցազրույցի և արդյունքների ամփոփման փուլերով:

Բոլոր մրցույթների վերաբերյալ Կոմիտեի կողմից իրականացվել է պատշաճ հանրային իրազեկում, պաշտոնական կայքում մրցույթների հայտարարությունների, ինչպես նաև մրցույթների արդյունքների

---

https://www.facebook.com/permalink.php?story_fbid=pfbid029yt6jvHxSTHuyPBMKGpnA9EmW4Nr1ozrAw1mbKU7ZhcbMvR4Ei1A4pB3htH9UTtfl&id=100074200721560&rdid=sJO9G4nNOnRzNkWt

[31] Երկրորդ կազմի մեկ հաստիքի համար մրցույթը չէր կայացել:

[32] Տե՛ս Հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոնների համալրման նպատակով անցկացվող մրցույթի հայտարարությունը՝ https://anticorruption.am/hy/announcement/view/149

[33] Տե՛ս Հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոնների համալրման նպատակով անցկացվող մրցույթի հայտարարությունը՝ https://anticorruption.am/hy/announcement/view/149

[34] Տե՛ս Հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոնների համալրման նպատակով անցկացվող մրցույթի հայտարարությունը՝ https://anticorruption.am/hy/announcement/view/161

[35] Տե՛ս Հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոնների համալրման նպատակով անցկացվող մրցույթի հայտարարությունը՝ https://anticorruption.am/hy/announcement/view/165

[36] Տե՛ս Հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոնների համալրման նպատակով անցկացվող մրցույթի հայտարարությունը՝ https://anticorruption.am/hy/announcement/view/199

[37] Տե՛ս Հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոնների համալրման նպատակով անցկացվող մրցույթի հայտարարությունը՝ https://anticorruption.am/hy/announcement/view/200

[38] Տե՛ս Հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոնների համալրման նպատակով անցկացվող մրցույթի հայտարարությունը՝ https://anticorruption.am/hy/announcement/view/220

հրապարակման միջոցով, ինչը դրական է գնահատվում Կոմիտեի գործունեության թափանցիկության ու հաշվետվողականության տեսանկյունից:

Թեստավորման փուլի շրջանակներում ստուգվել է հետևյալ օրենսդրական ակտերի և Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային դատարանի կամ այլ միջազգային ատյանի կայացրած ակտերը, վերաբերելի նախադեպային որոշումների իմացությունը՝

1) Սահմանադրությունը,

2) Մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում ՀՀ մասնակցությամբ միջազգային դատարանի կամ այլ միջազգային ատյանի կայացրած ակտերը, վերաբերելի նախադեպային որոշումները,

3) Քրեական օրենսգիրքը,

4) Քրեական դատավարության օրենսգիրքը

5) Քաղաքացիական օրենսգրքի գլուխ 5-ը,

6) «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքը,

7) «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքը,

8) «Հաշվապահական հաշվառման մասին» օրենքը,

9) «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքի գլուխ 11-ը, 12.1-ը[39]:

Պետք է նշել, որ ինքնավար պաշտոնների համար կազմված հարցաշարերը նույնն են բոլոր տեսակի հաստիքների համար, այսինքն՝ և՛ ՀԿԿ նախագահի տեղակալի, և՛ վարչության պետի, և՛ քննիչի թեկնածուն պետք է պատասխանեն նույն հարցերին և անցողիկ միավորը նույնն է: Նշված մոտեցումը թույլ չէր տալիս թեկնածուների գիտելիքների տարբերակված՝ խորացված ստուգում իրականացել՝ ըստ պաշտոնի համար անհրաժեշտ գիտելիքների: Ավելին՝ գրավոր քննության միջոցով հնարավոր չէր ստուգել թեկնածուի կարողությունը, օրինակ՝ որակել որոշակի իրավիճակներ՝ կարողություն, որը բացարձակապես անհրաժեշտ է քննիչի աշխատանքում:

Թեստավորման փուլի առավելագույն միավորը 50-ն էր, անցողիկը՝ 35-ը: Գրավոր փուլը հաղթահարած թեկնածուների վերաբերյալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (այսուհետ՝ ԿԿՀ) կողմից իրականացվում է բարեվարքության ստուգում, որից հետո Մրցութային հանձնաժողովը կազմակերպում է հարցազրույցի փուլը: Հարցազրույցի շրջանակներում քննարկվում են բարեվարքության եզրակացությունում բարձրացված հարցեր, արգելվում է ստուգել մասնագիտական գիտելիքներ:

Հարցազրույցի փուլի համար առավելագույն միավորը 50-ն է, անցողիկը՝ 35-ը, բայց այն նախապայմանով, որ բարեվարքության միավորը առնվազն 22 է:

Հարցազրույցի փուլի համար առավելագույն 50 միավորն իր հերթին բաշխվում է ըստ գնահատման ենթակա առանձին պահանջների՝ հետևյալ համամասնությամբ՝

- անձնական որակներ՝ 15 միավոր,
- բարեվարքություն՝ 29 միավոր,

[39] Տե՛ս Հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոնների համալրման նպատակով անցկացվող մրցույթի հայտարարությունը՝ https://anticorruption.am/hy/announcement/view/149?fbclid=IwAR3ZlMtO23X26ce6GBwusevelxWnKX7E4E0bhQPFjSPp_m2vLpOQNEr1idQ

- պաշտոնը զբաղեցնելու համար անհրաժեշտ աշխատանքային ձեռքբերումներ՝ 6 միավոր:

Պետք է ընդգծել, որ եթե առաջին կազմի մրցույթի համար ռուսերենից, անգլերենից կամ ֆրանսերենից ստանդարտացված թեստային համակարգով կամ Կառավարության սահմանած (2021թ. -ի հունիսի 17-ի N 989-Ն որոշում[40]) այլ կարգով ստուգվող լեզվական գիտելիքների համապատասխան մակարդակի իմացությունը պարտադիր չէր, ապա երկրորդ կազմի համար այն համարվում է պարտադիր պահանջ: Ըստ կառարավարության որոշման՝ թեկնածուն օտար լեզուների իմացության մակարդակը ստուգելու նպատակով մրցութային հանձնաժողովին է ներկայացնում օտար լեզուներից առնվազն մեկի իմացության մակարդակը հավաստող փաստաթուղթ: Միևնույն ժամանակ պետք է նշել, որ հարցազրույցի ժամանակ լեզվի իմացության մասին որևէ հանգամանք չի քննարկվել դիտարկված ոչ մի մրցույթի դեպքում, ուստի հնարավոր չի եղել գնահատել լեզվի իմացության մակարդակը:

Հարցազրույցի փուլի դիտարկման արդյունքները

Դիտարկված վեց կայացած մրցույթների գրավոր փուլին մասնակցել է ընդհանուր առմամբ 76 թեկնածու (որոնցից 13-ը՝ կին (17%-ը))[41], որոնցից 59-ը (թեստավարման մասնակցածների 78%-ը) հաղթահարել են այդ փուլը:

Դիտարկված մրցույթների հարցազրույցի փուլին մասնակցել է թեստավորման փուլը հաղթահարած 59 թեկնածուներից միայն 45-ը, որոնցից միայն 7-ն են եղել իգական սեռի ներկայացուցիչներ: Դիտարկված մրցույթներում ընդհանուր առմամբ հաղթող է ճանաչվել 40 թեկնածու (թեստավորման մասնակցած թեկնածուների 53%-ը), որոնցից 6-ը՝ կին (հաղթող ճանաչվածների 15%-ը):[42]

Ի տարբերություն առաջին կազմի մրցութային հանձնաժողովի՝ Մրցութային հանձնաժողովը հաղթող է ճանաչել նաև նախկինում քննչական մարմիններում փորձառություն չունեցող թեկնածուների: Ուսումնառռությունից ազատվելու պայմաններին չհամապատասխանելու դեպքում, վերջիններս պետք է անցնեն ուսումնառություն: Ավելին՝ առաջին մրցույթը չհաղթահարած 10 թեկնածուներ հաջողության են հասել երկրորդ կամ երրորդ անգամ դիմելիս:

Ի համեմատ առաջին կազմի ընտրության մրցութային հաձնաժողովի, տարբերվել են Մրցութային հանձնաժողովի հարցերը, ինչպես նաև մոտեցումները թեկնածուների ընտրության հարցում: Փաստացի նվազեցվել է նաև միջազգային փորձագետի դերը, որից թեկնածուի մասին անգամ խորհրդատվական բնույթի բանավոր կարծիք չի հարցվել հարցազրույցից հետո: Հիշեցնենք, որ առաջին մրցույթի ժամանակ միջազգային փորձագետը Հանձնաժողովին տրամադրել է ընդհանուր բնույթի բանավոր գնահատական-կարծիք թեկնածուի վերաբերյալ: Թեև առաջին կազմի ընտրության մրցութային հանձնաժողովը կաշկանդված չի եղել միջազգային փորձագետի կարծիքով, այնուամենայնիվ կարծիքների համընկման պարագայում առավել հստակ էր թեկնածուի բարեվարքության և մասնագիտական հմտությունների վերաբերյալ կոնսենսուսի առկայությունը:

Անձնական որակների ստուգում

Թեկնածուներին հարցեր են ուղղվել իրենց կրթության, մասնագիտական փորձի, տվյալ պաշտոնում նշանակվելու նրանց շարժառիթի ու ակնկալիքի, ՀԿԿ առանձնահատկությունների՝ ի տարբերություն այլ

---

[40] Տե՛ս ՀՀ կառավարության 17 հունիսի 2021 թվականի N 989-Ն որոշումը՝ https://www.arlis.am/documentview.aspx?docid=153713

[41] Որոշ իգական սեռի թեկնածուներ մասնակցել են մրցույթի մի քանի անգամ:

[42] Նշված թվերն արտացոլում են մրցույթում մասնակցած և հաղթող ճանաչված անձանց թիվը, սակայն ոչ բոլոր հաղթողներն են անցել ՀԿԿ-ում ծառայության:

քննչական մարմինների, կոռուպցիայի վտանգավորության, կաշառք վերցնելու կամ տալու ավելի վտանգավոր լինելու վերաբերյալ և այլն: Ստուգվել է թեկնածուի ընկալումը որոշակի դրսևորումների՝ կոռուպցիա հանդիսանալու վերաբերյալ, օրինակ՝ *արդյո՞ք թեկնածուն կոռուպցիա կհամարի, եթե քաղաքացին քննիչին շնորհակալական նվեր տա այն դեպքում, երբ վերջինս չի պահանջել այն*: Որոշ թեկնածուներ պնդել են, որ երբևիցե չեն առնչվել կոռուպցիոն բնույթի դրսևորումների հետ, իսկ թեկնածուներից մեկը նշել է, որ լսել է, մինչդեռ մեկ այլ թեկնածու կոռուպցիայի դրսևորումների մասին դեպքերի հանդիպել է լրատվամիջոցների նյութերում:

Աշխատանքի համար անհրաժեշտ ունակությունները ստուգելու նպատակով թեկնածուներին հարցրել են քննիչի կողմից նախաձեռնողականություն ցուցաբերելու, ինչպես նաև թիմային աշխատանքի անհրաժեշտության, այդ առումով թեկնածուի նախապատվության, քննչական խմբում աշխատելու կամ այն ղեկավարելու փորձ ունենալու, որոշումներ ինքնուրույն կայացնելու մասին, այդ թվում՝ ինչ-որ որոշում կայացնելն այն դեպքում, երբ քննիչը տեղյակ է, որ այն վերադասին չի գոհացնի, իսկ նման հարցում որոշում կայացնելը հենց թեկնածուի իրավասությունների մեջ լինի: Սեփական զգացմունքները կառավարելու ունակությունն ու ինքնատիրապետումը ստուգելու նպատակով թեկնածուներին հարցրել են, թե ինչպիսի վարքագիծ կդրսևորեն, եթե իրենց վիրավորեն քաղաքացիները կամ գործընկերները, այդ թվում՝ վերադասին զեկուցելու հավանականությունը:

Հարցեր են ուղղվել ստուգելու աշխատանքում առաջնահերթություններ սահմանելու ունակության, հաղորդակցման հմտությունների, օրինակ՝ տարբեր սեռի, տարիքի մարդկանց լսելու, կոնտակտ հաստատելու, նոր միջավայրում արագ ինքնադրսևորվելու ունակությունը՝ նոր կոլեկտիվում մերվելու խնդիրները, այլ անձանց նկատմամբ հարգալիրությունը և այլն:

Քննարկվել է պաշտոնական լիազորությունները չարաշահելու միջոցով հարազատին կամ ծանոթին՝ աջակցություն ցուցաբերելը, տեղեկատվություն տրամադրելը և նման խնդրանքները մերժելու ունակությունը, իրավիճակներ, երբ ստելն ընդունելի է, գործընկերոջ կողմից էթիկայի կանոնների խախտման դեպքում վերջինիս նկատողություն անելու պատրաստակամությունը և այլն: Իգական սեռի թեկնածուներին հնչել են հարցեր նաև սեռով պայմանավորված, օրինակ, արդյոք համարձակություն կունենան ամուսնու խնդրանքը՝ պաշտոնական լիազորությունների շրջանակներում գտնվող որևէ գործողություն կատարելը, օրինակ՝ որոշ տեղեկություններ ճշտելը ու փոխանցելը մերժել կամ ինչպես են կազմակերպելու երեխաների խնամքը աշխատանքի անցնելու դեպքում:

Որոշ դեպքերում հարցրել են, թե թեկնածուին պատկանող ավտոմեքենան ինչպիսի համարանիշ ունի, և արդյոք վերջինս վճարել է այդ համարանիշի համար, ու եթե այո, ապա ո՞րն էր նպատակը[43]:

Պատասխանատվության զգացումը, մասնավորապես սեփական սխալներն ու թերություններն ընդունելու և դրանց մասին բարձրաձայնելու ունակությունը ստուգելու նպատակով թեկնածուներին հարցրել են, օրինակ՝ թե վերջինս ե՞րբ է որոշում կայացրել, որը հետագայում սխալ է հանդիսացել, որի համար պատասխանատվություն է ստանձնել: Որոշները պատասխանել են, որ «նման բան չի եղել»: Հատկանշական է, որ նման պատասխան տվել են անգամ այն դեպքում, երբ թեկնածուները ունեցել են բազմաթիվ վարչական տույժեր կամ ենթարկվել են կարգապահական պատասխանատվության:

Որոշ թեկնածուներ դժվարացել են պատասխանել իրենց թույլ կամ ուժեղ կողմերի մասին՝ նշելով, որ հանձնաժողովը պետք է գնահատական տա կամ որ չի կարող իրեն գովաբանել: Դժվարացել են նաև գիտակից կյանքում ամենադժվար կայացրած որոշման մասին խոսել, իսկ որոշները պնդել են, որ սթրեսային

[43] Հիշեցնենք, որ առաջին մրցութային հանձնաժողովի աշխատանքների ընթացքում միջազգային փորձագետը բոլոր թեկնածուներից հարցնում էր ավտոմեքենայի մակնիշը, և այն դեպքում, երբ մեքենան համարվում էր ներկայանալի դասի, հարց էր ուղղում հասարակության կողմից ՀԿԿ ավտոկայանատեղու մոտ անցնելիս ՀԿԿ քննիչների եկամտի ընկալման մասին: Ավելի մանրամասն տե՛ս Զեկույց. Հակակոռուպցիոն կոմիտեի ստեղծման և ընթացիկ գործունեության ուսումնասիրություն, ԻՊԱՍ, 2023, հասանելի է https://prwb.am/2023/09/13/zekuyc%e2%80%a4-hakakorupcion-komitei-steghtcman-ev-ehnthacik-gortcuneuthyan-usumnasiruthyun/

կամ լարված իրավիճակում երբևէ չեն հայտնվել: Նմանատիպ հարցերին պատասխանելուց խուսափելը ինքնաքննադատության պակասի ցուցիչ է:

Ստուգվել է վերաբերմունքը պաշտոնական դիրքից ելնելով որևէ արտոնություն ստանալու ընդունելի լինելու վերաբերյալ, օրինակ՝ հյուրանոցում ավելի լավ սենյակ ավելի մատչելի գնով ստանալու կամ արտահերթ սպասարկվելը ավտոմեքենաների լվացման կետում: Վերջին երևույթը որոշ թեկնածուներ որոշակի հանգամանքներում համարել են ընդունելի:

Ճշտապահությունը՝ աշխատանքից ուշանալու հակումը, սեղմ ժամկետներում աշխատելու կարողությունը ստուգելու նպատակով պարզապես հարցրել են, թե արդյոք թեկնածուն կարողանում է սերտ ժամկետում որոշում կայացնել: Նման հարց ստացած որևէ թեկնածու չի պատասխանել, որ չի կարող: Այս համատեքստում շատ ավելի արդյունավետ կարող էր լինել այլ կերպ ձևակերպված հարցը, օրինակ՝ նախկին փորձից բերված որևէ օրինակ, երբ թեկնածուն սեղմ ժամկետում որոշում է կայացրել ու դրա արդյունքները, հատկապես աշխատանքի բնագավառում: Հատկանշական է, որ որոշ թեկնածուներ արդեն իսկ ենթարկվել կարգապահական պատասխանատվության դատավարական ժամկետները չպահպանելու պատճառով: Որպես բացատրություն վերջիններս նշել են գերծանրաբեռնված լինելը: Այս առումով կարևոր է հասկանալ, թե արդյոք ՀԿԿ քննիչների ծանրաբեռնվածության և կոռուպցիոն բնույթի հանցագործությունների վաղեմության ժամկետի կիրառման բարձր մակարդակի համատեքստում թեկնածուները կարողանալու են ավելի արդյունավետ կազմակերպել իրենց աշխատանքը:

Հարցեր են հնչեցվել քրեական ենթամշակույթի նկատմամբ վերաբերմունքը ստուգելու նպատակով, օրինակ՝ վերաբերմունքն այն դեպքում, եթե խնդիրը լուծելու համար քաղաքացին դիմում է թաղային հեղինակությանը, կամ արդյո՞ք թեկնածուի բնակության վայրում (թաղամասում) բնակվում են քրեական ենթամշակույթին հարող անձինք: Պետք է նշել, որ նման հարց ոչ բոլոր թեկնածուներին է տրվել ու ոչ բոլոր մրցույթների համատեքստում: Որոշ դեպքերում քննիչի ստաժ ունեցող թեկնածուներ պնդել են, որ երբևէ չեն առնչվել քրեական ենթամշակույթին հարող անձանց:

Որոշ դեպքերում պարզվել են քաղաքական հայացքները (չեզոքությունը) կամ դրանց մասին արտահայտվելու փորձը, սոցիալական ցանցերում կամ ԶԼՄ-ներում հրապարակված կարծիք արտահայտելու դեպքերը: Նշված տեսակի հարցեր ևս ոչ բոլոր թեկնածուներին է տրվել:

Առանձին հարց է տրվել ստուգելու գործընկերոջ կամ հարազատի կողմից առերևույթ կոռուպցիայի մեջ ներգրավված լինելու փաստի կամ կասկածի մասին վերադասին զեկուցելու պատրաստակամությունը և ազդարարման եղանակը՝ բացահայտ, թե գաղտնի: Հատկանշական է, որ թեկնածուների ճնշող մեծամասնությունը զեկուցելու և, անհրաժեշտության դեպքում, անգամ ձերբակալելու պատրաստակամություն է հայտնել:

Դիմելու շարժառիթը ճշտելիս Մրցութային հանձնաժողովը որոշ դեպքերում հարցրել է, թե արդյո՞ք հիմնական պատճառը ՀԿԿ-ում բարձր վարձատրությունը կամ, օրինակ, երկարաժամկետ աշխատանքային փորձ ունեցող թեկնածուների դեպքում, համեմատաբար բարձր կենսաթոշակը չէ: Հարցեր են հնչել ստուգելու ՀԿԿ-ում երկարաժամկետ աշխատելու թեկնածուի պատրաստակամությունը:

Բացառիկ դեպքերում Մրցութային հանձնաժողովը հարցրել է թեկնածուի վերաբերմունքը ոչ ավանդական սեռական կողմնորոշում ունեցող ենթակա ունենալու դեպքում:

Վարչական տույժերի մեծաքանակ լինելու դեպքում նաև ճշտվել է, թե իրավախախտում փաստացի կատարողը հենց թեկնածուն է, թե այլ անձ, ու պատասխանատվությունը անհատականացնելու մոտեցումը: Որոշ թեկնածուները նման դեպքում վարչական տույժը դիտարկել են որպես պարզապես ֆինանսական գանձում, այլ ոչ թե բիծ հանրային ծառայողի վրա, ուստի որևէ քայլ չեն ձեռնարկել վարչական իրավախախտում կատարած անձին հստակեցնելու ուղղությամբ: Հնչել է, օրինակ, այսպիսի պատասխան. «*Ի՞նչ տարբերություն, նույն բյուջեից է վճարվում տուգանքը*»:

Այսպես, թեկնածուների անձնական որակները գնահատելու նպատակով ուղղված հարցերը եղել են ինչպես ընդհանրական բնույթի, այնպես էլ ավելի տեղայնացված: Ընդհանրական բնույթի հարցերը, օրինակ՝ ՀԿԿ-ի այլ քննչական մարմիններից տարբերվելու առանձնահատկությունների, կոռուպցիայի նկատմամբ վերաբերմունքի վերաբերյալ ընդհանուր առմամբ որևէ հավելյալ արժեք չեն ներկայացնում թեկնածուին գնահատելու համար, դրանք մշտապես կրկնվում են, այսինքն՝ դրանց պատասխանելը դժվարություն չի ներկայացնում թեկնածուի համար: Օրինակ՝ ՀԿԿ-ի այլ քննչական մարմիններից տարբերվելու առանձնահատկությունների մասին հարցը տրվում է բոլոր հարցազրույցների ժամանակ և ակնկալվում է որոշակի պատասխան, որը չստանալու դեպքում անգամ հնչում են ուղղորդող հարցեր: Հարցազրույցին պատրաստվելիս, իմանալով, որ այդ հարցը հնչելու է, թեկնածուն՝ հատկապես երկրորդ անգամ դիմող, նախապես գիտի, թե ինչ պատասխան է ակնկալում Մրցութային հանձնաժողովը: Կոռուպցիայի նկատմամբ վերաբերմունքի մասին ուղիղ հարց հնչեցնելը նույնպես արդյունավետ չէ, քանի որ շատ քիչ հավանական է, որ հարցազրույցի ընթացքում ՀԿԿ դիմող թեկնածուն կպատասխանի, որ դրական է վերաբերվում այդ երևույթին: Այս առումով շատ ավելի արդյունավետ են ավելի տեղայնացված հարցեր, օրինակ՝ որոշակի իրավիճակի քննարկում: Դրանց շարքին են դասվում Մրցութային հանձնաժողովի կողմից հնչեցված այսպիսի հարցեր. *արդյո՞ք թեկնածուն կարող է օգտվել արտոնություններից կամ ստանալ նվեր ամանորի/հարսանիքի/կնունքի կապակցությամբ* որոշակի անձից: Մեկ այլ դեպքում, երբ հարցվում է թիմային աշխատանքի նկատմամբ վերաբերմունքը կամ նախասիրությունը՝ խմբով կամ միայնակ աշխատելու, հարցը կարող է ավելի արդյունավետ լինի, եթե ընդհանրական հարցի փոխարեն ուղղվի ավելի հստակ հարց՝ աշխատանքային փորձի համատեքստում թիմում/ քննչական խմբում աշխատելու կամ այն ղեկավարելու հաջողված ու չհաջողված փորձի օրինակի մասին ու քաղած դասերի: Նույն խնդիրն առկա է նախաձեռնողականության մասին տրվող հարցում, օրինակ՝ «*Արդյո՞ք թիմային աշխատանքի դեպքում անձը կորցնում է նախաձեռնողականությունը*», որը նման ձևակերպմամբ թույլ չի տալիս լիարժեք գնահատել թեկնածուի՝ գործնականում, փաստահեն նախաձեռնող լինելու ունակությունը և պատրաստակամությունը, որի նպատակով էլ այդ հարցը տրվում է:

Պաշտոնը զբաղեցնելու համար անհրաժեշտ աշխատանքային ձեռքբերումների ստուգում

Թեկնածուի պաշտոնը զբաղեցնելու համար անհրաժեշտ աշխատանքային ձեռքբերումները գնահատվում են մասնագիտական փորձի և հմտությունների հիման վրա, ներառյալ՝ մասնագիտական փորձառության ընդհանուր ժամկետը և մասնագիտական գործունեության հիմնական ուղղությունները:

Մրցութային հանձնաժողովը հարցեր է ուղղել պարզելու, թե նախ թեկնածուն որևէ փորձ ունի՞ կոռուպցիոն բնույթի հանցագործություններ քննելու: Այս համատեքստում հարկ է նշել, որ թեկնածուներից շատերը նման փորձ չեն ունեցել կամ դժվարացել են իրենց վարույթում գտնվող, հաջողությամբ քննված կոռուպցիոն բնույթի քրեական գործ մատնանշել: Որոշ թեկնածուներ դժվարացել են որևէ գործ առանձնացնել, որը համարում են հաջողություն, ձեռքբերում:

Բարեվարքության ստուգում

Թեկնածուի բարեվարքությունը գնահատվում է հետևյալ չափանիշների հիման վրա՝ հաշվի առնելով նաև ԿԿՀ տրամադրած բարեվարքության վերաբերյալ եզրակացությունը՝

- գույքային դրության համապատասխանությունն օրինական եկամուտներին.
- շահերի բախման առաջացման ռիսկը և շահերի բախման իրավիճակում ճիշտ գործելու կարողությունը.

- նախկինում քրեական կամ կարգապահական կամ վարչական պատասխանատվության ենթարկված չլինելը.
- էթիկայի կանոններին տիրապետելը.
- վերաբերմունքը քրեական ենթամշակույթի ու դրա բաղադրիչների նկատմամբ և անօրինականության մասին ազդարարելու պատրաստականությունը.
- զբաղեցրած պաշտոնից դուրս պաշտոնական դիրքը չօգտագործելը, հեղինակություն և ազդեցություն չկիրառելը.
- քաղաքական չեզոքությունը, քաղաքական և այլ ճնշումներին դիմագրավելու կարողությունն ու ցանկությունը:

Որպես ընդհանուր դիտարկում հարկ է նշել, որ 2023 թվականին տեղի ունեցած մրցույթների շրջանակներում ԿԿՀ կողմից տրված բարեվարքության բացասական եզրակացություն ստացած որևէ թեկնածու մրցույթը չի հաղթահարել: Մրցութային հանձնաժողովը սկզբունքային դիրքորոշում է որդեգրել թեկնածուին ծառայության վերցնելիս պատշաճ ուշադրություն դարձնել վերջինիս հնարավոր կոռուպցիոն ռիսկերը գնահատելու (պայմանավորված թե՛ թեկնածուի անձով, թե՛ իրեն հետ փոխկապակցված անձանցով), այդ թվում՝ հանրության շրջանում ընկալման առումով: Ընդհանուր առմամբ Մրցութային հանձնաժողովը պատշաճ ուշադրություն է դարձրել ԿԿՀ կողմից արձանագրված խնդիրներին և ջանքեր է գործադրել հարցադրումների միջոցով պարզել արձանագրված խնդիրների պատճառը: Նշված մոտեցումն արձանագրվել է նաև թեկնածուների կողմից: Արձանագրվել են դեպքեր, երբ թեկնածուն դիմել է, սակայն չի ներկայացել հարցազրույցի, իսկ հաջորդ անգամ դիմելիս նախորդին չներկայանալու պատճառը բացատրելիս նշել է, որ ԿԿՀ եզրակացությունը բացասական է եղել, իսկ այդ դեպքում արդեն՝ դրական՝ վերապահումով:

Հատկանշական է, որ նախկինում մրցույթին մասնակցած թեկնածուներից ոմանք դիմում են ներկայացրել ԿԿՀ՝ շտկելու թույլ տված սխալները, որոնց մասին տեղեկացել են նախկինում ՀԿԿ մրցույթին մասնակցելիս: Որոշ դեպքերում լրացուցիչ ստացված տեղեկատվության լույսի ներքո ԿԿՀ-ն վերանայել է իր գնահատականը, օրինակ՝ նախկինում բացասական եզրակացությունը դարձնելով դրական՝ վերապահումով:

Այս առումով կարևոր է արձանագրել նաև, որ ՀԿԿ-ն մրցույթների ժամանակահատվածում հրապարակում է տեղեկություններ առ այն, որ թեկնածուները կարող են պահանջել և ծանոթանալ իրենց վերաբերյալ բարեվարքության եզրակացությանը մինչև բարեվարքության փուլին ներկայանալը:

Մինչև ՀԿԿ մրցույթին դիմելը թեկնածուներից ոմանք տեղյակ չեն եղել գույքի համասեփականատեր լինելու հանգամանքի մասին, նրանցից մի մասը տեղեկացել է ԿԿՀ եզրակացությունը ստանալուց հետո, իսկ ոմանք՝ բարեվարքության թերթիկը լրացնելու նպատակով Կադաստրի կոմիտե հարցում անելու արդյունքում:

Հարցազրույցի ընթացքում քննարկված հարցերից պարզ է դարձել, որ թեկնածուների մոտ բարեվարքության ստուգման համատեքստում արձանագրված հիմնական խնդիրներ են. համատեղ բնակվող ընտանիքի անդամի կողմից հայտարարագիր չներկայացնելը; հայտարարագրում ոչ բոլոր եկամուտները նշելը եկամուտների բաժնում, այդ թվում՝ օտարված գույքից ստացված, տարեվերջի ու տարեսկզբի մնացորդի անհամապատասխանությունը և այլն: Այս առումով պետք է նշել, որ թեկնածուներից ոմանք տարիներ շարունակ չեն տիրապետել հայտարարագիր լրացնելու հմտություններին, թույլ են տվել համանման սխալներ, որոշներն ընդունել են, որ իրենց փոխարեն այլ անձ է լրացրել այն և այլն: Այս առումով աչքի է ընկնում այն հանգամանքը, որ թեկնածուն, չտիրապետելով հայտարարագիր ներկայացնելու գիտելիքին, դիմում է ՀԿԿ-ում քննիչի պաշտոնին այն պարագայում, որ ակնկալվում է բարդ կոռուպցիոն հանցագործություններով քննություն վարելու ունակություն, այդ թվում՝ հայտարարագրում նշված տվյալների շուրջ:

Ե՛վ ԿԿՀ-ն, և՛ Մրցութային հանձնաժողովը խնդրահարույց (ռիսկային) են համարել այն հանգամանքը, որ թեկնածուներից ոմանք խոշոր գումար են պահում կանխիկ եղանակով, որը կարող է ստեղծել կոռուպցիոն ռիսկեր: Հատկանշական է, որ որպես նման պրակտիկայի բացատրություն թեկնածուները նշում են չպլանավորված բժշկական ծախսեր կատարելու անհրաժեշտության դեպքում կանխիկ գումարի արագ հասանելիության անհրաժեշտությունը, որին ի պատասխան հանձնաժողովը հիշեցրել է, որ ՀՀ օրենսդրությամբ բժշկական ծախսերը պետք է վճարվեն անկանխիկ եղանակով: Օրենսդրության նման կարգավորման համատեքստում կանխիկ գումար վճարելու պատրաստակամ լինելը վկայում է կոռուպցիոն դրսևորումներ խրախուսելու մասին, կամ էլ օրենսդրության չտիրապետման: Մտահոգիչ է նաև քննիչ աշխատող կամ քննիչի թեկնածու հանդիսացող անձանց մոտ ՀՀ բանկային համակարգի հանդեպ հայտարարված անվստահությունը: Այս գործոնը նշվել է որպես երկրորդ առավել տարածված բացատրություն խոշոր չափի կանխիկ գումար պահելու պատճառների մասին: *«Բանկային անվտանգության հետ խնդիր էի տեսնում, բանկային քարտերի հետ կապված խարդախությունները շատ էին»* կամ ընտանիքի անդամի պարագայում՝ *«Սովետից կորցրել են բանկում պահվող միջոցներ, այդպես ավելի ճիշտ են գտնում»:*

Վեց դիտարկված մրցույթներում մասնակիցների թեստավորման նվազագույն ու առավելագույն արդյունքները տարբերվել է: Այս առումով հատկանշական է, որ թեստավորման փուլի միջին արդյունքների նվազման միտում է առկա:

Գծապատկեր 2. 2023 թվականին դիտարկված մրցույթների միջինացված արդյունքները.



ԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ

- **7 հաստիքի (առաջին կազմի) համալրման համար կազմակերպված մրցույթ**

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2022 թ.-ին կայացած (հարցազրույցի փուլը տեղի էր ունեցել հոկտեմբերի 3-ին և 4-ին) առաջին մրցույթի արդյունքում ՀԿԿ ինքնավար պաշտոնների առաջին կազմն ամբողջությամբ չէր համալրվել, թափուր էին մնացել 7 հաստիքներ, 2022թ.-ի նոյեմբերի 25-ին հայտարարվեց առաջին կազմը համալրելու երկրորդ մրցույթը՝ 7 հաստիքների համար.

- Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալի՝ 1,
- քննչական առաջին, երկրորդ և երրորդ վարչությունների հատկապես կարևոր գործերով ավագ քննիչի՝ 1,
- հատկապես կարևոր գործերով քննիչի՝ 2,
- ավագ քննիչի՝ 1,
- քննիչի՝ 2 թեկնածուների ընտրության համար[44]:

Նշված մրցույթի գրավոր փուլը տեղի ունեցավ 2022թ.-ի դեկտեմբերի 29-ին: 7 հաստիքի համար հայտարարված մրցույթի գրավոր փուլին մասնակցած 11 թեկնածուներից միայն 1-ն էր իգական սեռի ներկայացուցիչ: Հատկանշական է, որ թեկնածուների թվում էին առաջին մրցույթի հարցազրույցի փուլը չհաղթահարած 3 թեկնածու (մասնակցողների 27%-ը), որոնցից 2-ը՝ բարեվարքության ստուգման ցածր միավորի հիմքով:

Գրավոր փուլը հաղթահարել են միայն 8 թեկնածուներ (դիմողների 73%): Նրանց թեստավորման արդյունքների միջին միավորը կազմում էր առավելագույն 50-ից 46. 4, նվազագույնը՝ 38, առավելագույնը՝ 49. 5:

7 հաստիքի համար կազմակերպված մրցույթի գրավոր փուլը հաղթահարած 8 թեկնածուների (բոլորն արական սեռի ներկայացուցիչներ են) հարցազրույցի փուլը տեղի ունեցավ 2023թ.-ի փետրվարի 10-ին, որի արդյունքում 8 թեկնածուից 7-ը հաղթահարել են հարցազրույցի փուլի անցողիկ շեմը: Մրցույթը հաղթահարած թեկնածուների թվում էին նաև առաջին մրցույթը չհաղթահարած 2 թեկնածու:

Հարցազրույցի փուլին ներկա էին հանձնաժողովի 5 անդամներից միայն 4-ը, բացակայել է ՔՀԿ ներկայացուցիչը: Հանձնաժողովի ներկա 4 անդամներից թեկնածուին հարցեր տրվել են միայն մեկ կամ առավելագույնը երկու անդամների կողմից: Մնացածները հարցեր չեն ունեցել: Հարցազրույցի փուլին տեսակապի միջոցով մասնակցել է նաև միջազգային փորձագետ Կասկոն, վերջինս հնարավորություն է ունեցել թեկնածուներին հարցեր հղելու: Որոշ դրվագներում տեխնիկական խնդիրներ են արձանագրվել, թարգմանությունը լսելի չէր, թեկնածուի առաջարկով հարցն ուղղվել է ռուսերեն:

Մրցույթը հաղթահարած թեկնածուներից բոլորն ունեցել են որպես քննիչ կամ/և օպերլիազոր աշխատելու փորձ:

Ի տարբերություն առաջին մրցույթի, որի շրջանակներում 2022թ. -ի հոկտեմբերի 1-ին և 3-ին տեղի ունեցած հարցազրույցի փուլը տևել է միջինում 27, ամենակարճը՝ 14, իսկ ամենաերկարը՝ 50 րոպե, 2023թ. -ի փետրվարի 10-ին տեղի ունեցած հարցազրույցները տևել են միջինում 1 ժամ 15 րոպե, իսկ առավելագույնը՝ 1 ժամ 54 րոպե:

Մրցույթը հաղթահարած 7 թեկնածուները հարցազրույցի արդյունքում ստացել են միջինում 39.5 (հնարավոր 50-ից), նվազագույնը՝ 37.5, իսկ առավելագույնը՝ 42.9 միավոր:

Հարցազրույցի փուլին մասնակցած 8 թեկնածուներից 3-ի վերաբերյալ ԿԿՀ-ն տվել է դրական, իսկ 5-ի՝ դրական՝ վերապահումով եզրակացություն: Բացասական եզրակացություն չի տրամադրվել: Դրական վերապահումով եզրակացություն ստացած թեկնածուներից մեկը մրցույթը չի հաղթահարել:

Գծապատկեր 3. 2023թ. փետրվարի 10-ին տեղի ունեցած հարցազրույցին մասնակցած թեկնածուների վերաբերյալ ԿԿՀ բարեվարքության եզրակացության տեսակները.

---

[44] Տե՛ս Հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոնների համալրման նպատակով անցկացվող մրցույթի հայտարարությունը՝ https://anticorruption.am/hy/announcement/view/148



Ըստ ԿԿՀ-ի՝ բարեվարքության դրական՝ վերապահումով եզրակացություն տալու հիմք են հանդիսացել մրցույթը հաղթահարած թեկնածուներից մեկի դեպքում գույքային դրության առնչությամբ արձանագրված անհամապատասխանությունները, մյուս թեկնածուի դեպքում՝ գույքային դրության առնչությամբ արձանագրված անհամապատասխանությունները, վարչական պատասխանատվության ենթարկված լինելու հանգամանքը և ներկայացված տվյալների անարժանահավատությունը, երրորդ թեկնածուի դեպքում՝ վարչական պատասխանատվության ենթարկված լինելու հանգամանքը և աշխատանքային գործունեության ընթացքում դրսևորած վարքագիծը, իսկ չորրորդ թեկնածուի դեպքում՝ գույքային դրության առնչությամբ արձանագրված անհամապատասխանությունները և կարգապահական պատասխանատվության ենթարկված լինելու հանգամանքը[45]:

8 թեկնածուներից առնվազն 5-ն ունեցել են վարչական տույժեր, հիմնականում ՃԵԿ խախտումների համար: *Հատկանշական է, որ որոշ դեպքերում թեկնածուները պնդել են, որ վարչական իրավախախտումը կատարել է իրենց ընտանիքի անդամներից մեկը, սակայն իրենց անվամբ է ձևակերպվել, քանի որ որևէ քայլ չեն ձեռնարկել հստակեցնելու իրավախախտում կատարող անձին:*

Թեկնածուներից առնվազն 1-ն անցել է քրեական գործով, իսկ առնվազն 2-ը ենթարկվել են կարգապահական պատասխանատվության[46]:

- **1 հաստիքի (երկրորդ կազմի) համալրման համար կազմակերպված մրցույթ**

2022թ. -ի նոյեմբերի 25-ին և կրկին նաև՝ 2023թ. -ի հունվարի 5-ին հայտարարվեց Հակակոռուպցիոն կոմիտեի 2-րդ կազմի ինքնավար պաշտոնի՝ քննչական երկրորդ վարչության հատկապես կարևոր գործերով ավագ քննիչի՝ 1, թեկնածուի ընտրության համար մրցույթ[47]: Այսինքն, հոկտեմբերին ծառայության անցած ՀԿԿ ծառայողներից մեկն արդեն իսկ ազատվել էր աշխատանքից: 2022թ. -ի նոյեմբերի 25-ին հայտարարված մրցույթը չկայացավ՝ դիմողների բացակայության պատճառով:

2023թ. -ի հունվարի 5-ին կրկին հայտարարված մրցույթի գրավոր փուլը տեղի ունեցավ 2023թ. -ի փետրվարի 10-ին: Դրան մասնակցեց ընդամենը մեկ թեկնածու, որը հաջողությամբ այն հաղթահարեց: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նույն օրը Մրցութային հանձնաժողովը կազմակերպել էր նաև այլ թափուր հաստիքները համալրելու հարցազրույցի փուլ, թեստավորման փուլը սկսվել է ժամը 21.30՝

[45] ԿԿՀ գրություն 01/367-2023 առ 21.02.2023թ.

[46] Բարեվարքության եզրակացությունները հասանելի չեն հանրությանը, ուստի տեղեկությունները արտացոլում են միայն այն դեպքերը, երբ նշված հարցը քննարկվել է հարցազրույցի ընթացքում:

[47] Տե՛ս Հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոնների համալրման նպատակով անցկացվող մրցույթի հայտարարությունը՝ https://anticorruption.am/hy/announcement/view/161

հարցազրույցների ավարտից հետո: Հարցազրույցի փուլը տեղի ունեցավ մարտի 20-ին, որը միակ թեկնածուն հաջողությամբ հաղթահարեց[48]:

- **39 թափուր հաստիքների համալրման համար կազմակերպված մրցույթ**

Ինչպես նշվեց, 2022թ.-ի դեկտեմբերի 6-ին ՀՀ վարչապետի N 1450- Ա որոշմամբ[49] Կոմիտեի 170 հաստիքների թիվն ավելացվել էր ևս 100 հաստիքով, ընդհանուր կազմելով՝ 270 միավոր, որոնցից 80-ը՝ ինքնավար պաշտոն զբաղեցնող[50]: Նշված հաստիքները պետք է համալրվեին փուլային կարգով՝ 2023թ.-ի ընթացքում:

2023թ.-ի հունվարի 18-ին հայտարարվեց Հակակոռուպցիոն կոմիտեի 39 ինքնավար պաշտոնների մրցույթ .

- առաջին, երկրորդ, երրորդ և ներքին անվտանգության վարչությունների հատկապես կարևոր գործերով ավագ քննիչի՝ 16,
- հատկապես կարևոր գործերով քննիչի՝ 6,
- ավագ քննիչի՝ 6,
- քննիչի՝ 11 հաստիքի համար[51]:

39 հաստիքի համար մրցույթի թեստավորման փուլը տեղի ունեցավ 2023թ.-ի փետրվարի 27-ին, որին մասնակցեց 15 թեկնածու, որոնցից 5-ը (33%)՝ իգական սեռի ներկայացուցիչներ: Այսինքն՝ ի սկզբանե մրցույթը մրցակցային չէր, քանի որ **դիմողների թիվն ավելի քան կրկնակի անգամ պակաս էր թափուր հաստիքներից**: Հատկանշական է, որ մրցույթի մասնակիցներից 3-ը նախկինում մասնակցել են մրցույթին, սակայն չէին հաղթահարել այն[52]:

Գրավոր փուլին հրավիրված 17 թեկնածուներից 2-ը չեն ներկայացել, իսկ ներկայացած 15 թեկնածուներից 13-ը (87%) հաղթահարել են գրավոր փուլը[53]: Նրանց թեստավորման արդյունքների միջին միավորը կազմել է 42. 5, նվազագույնը՝ 37, առավելագույնը՝ 50 միավոր (երկու թեկնածու):

Մրցույթի հարցազրույցի փուլը տեղի է ունեցել ապրիլի 14-ին և 15-ին համապատասխանաբար, որին 13 թեկնածուներից մեկը չի ներկայացել:

Հարցազրույցի փուլին ներկա էին հանձնաժողովի 5 անդամներից միայն 4-ը, բացակայել է ՔՀԿ ներկայացուցիչը: Հարցազրույցի փուլին տեսակապի միջոցով մասնակցել է նաև միջազգային փորձագետ Վ. Կասկոն:

Թեկնածուներից 3-ը մրցույթին մասնակցելու պահին հանդիսացել են Քննչական կոմիտեի քննիչ, 3-ը՝ գործազուրկ, 2-ը՝ փաստաբան, 2-ը՝ Քրեակատարողական ծառայության ծառայող, 1-ը՝ հասարակական

---

[48] ԻՊԱՍ-ը չի դիտակել հարցազրույցի փուլը:

[49] Տե՛ս ՀՀ վարչապետի 6.12.2022թ.-ի N 1450-Ա որոշումը, հասանելի է https://www.arlis.am/documentview.aspx?docid=171313

[50] Տե՛ս ՀՀ վարչապետի 11.06.2018թ.-ի N 706-Ա որոշումը, հասանելի է https://www.arlis.am/documentview.aspx?docid=173380

[51] https://anticorruption.am/hy/announcement/view/165

[52] Նրանցից մեկը հայց էր ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ Հակակոռուպցիոն դատարանի Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոնների համալրման նպատակով անցկացվող մրցույթի հարցազրույցի փուլը հաղթահարելու և մրցույթում հաղթող ճանաչվելու իրավահարաբերության առկայությունը ճանաչելու, որպես հետևանք՝ Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի՝ թեկնածուին աշխատանքից ազատելու մասին հրամանն անվավեր ճանաչելու, միջին աշխատավարձ հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար՝ սկսած 24.10.2022թ. բռնագանձելու, Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեի նախագահին թեկնածուին համապատասխան պաշտոնին նշանակել պարտավորեցնելու պահանջ, որը 2023թ. դեկտեմբերի 18-ին մերժվել է:

[53] Տե՛ս ՀԿԿ պաշտոնական կայքում հրապարակված տեղեկատվությունը՝ https://anticorruption.am/hy/announcement/view/182

կազմակերպության իրավաբան, 1-ը՝ թոշակառու[54]: Թեկնածուներից միայն մեկը չի ունեցել քննիչ աշխատելու փորձ:

Թեկնածուներից մի մասը թեև ունեցել են քննիչ աշխատելու փորձ, սակայն չեն քննել կոռուպցիոն բնույթի գործեր, որոշները չեն վարել կալանավորված մեղադրյալով քրեական գործեր:

Հարցազրույցները տևել են միջինում 43, նվազագույնը՝ 33, իսկ առավելագույնը՝ 63 րոպե:

Հարցազրույցի փուլին մասնակցած 12 թեկնածուներից 9-ը (75%) հաղթահարել է հարցազրույցի փուլի անցողիկ շեմը, այդ թվում՝ 4 իգական սեռի ներկայացուցիչ[55]: Նրանցից 2-ը մրցույթը հաղթահարել են երկրորդ փորձից: Այսինքն, 39 հաստիքի համար հայտարարված մրցույթի արդյունքում միայն 9-ը թեկնածու է հաղթող ճանաչվել:

Քննիչի փորձ չունեցող թեկնածուն չի հաղթահարել այս փուլը:

Մրցույթը հաղթահարած 9 թեկնածուների հարցազրույցի միջին միավորը եղել է 40. 4 (հնարավոր 50-ից), նվազագույնը՝ 37.5, իսկ առավելագույնը՝ 43.8:

Հարցազրույցի փուլին հրավիրված 13 թեկնածուներից 6-ի վերաբերյալ ԿԿՀ-ն տվել է դրական, 5-ի՝ դրական՝ վերապահումով և 2 բացասական եզրակացություն: Մրցույթը հաղթահարած թեկնածուների վերաբերյալ տրվել է 6 դրական և 3 դրական՝ վերապահումով եզրակացություններ: 3-ի դեպքում էլ դրական՝ վերապահումով եզրակացություն տրամադրելու հիմք են հանդիսացել գույքային դրության առնչությամբ արձանագրված անհամապատասխանությունները:

Գծապատկեր 4. 2023թ. -ի ապրիլի 14-15-ին տեղի ունեցած հարցազրույցին մասնակցած և հաղթահարած թեկնածուների վերաբերյալ ԿԿՀ բարեվարքության եզրակացության տեսակները.



Մրցույթը չհաղթահարած 4 թեկնածուներին, որոնցից մեկը չէր ներկայացել հարցազրույցին, ԿԿՀ-ի կողմից տրվել է երկու դրական՝ վերապահումով և երկու բացասական եզրակացություն: Դրական՝ վերապահումով եզրակացություն տալու հիմք են հանդիսացել. մեկ թեկնածուի դեպքում՝ գույքային դրության առնչությամբ արձանագրված անհամապատասխանությունները, իսկ մյուսի՝ թեկնածուի բարեվարքությունն աշխատանքային գործունեության ընթացքում դրսևորած վարքագծի և կարգապահական

[54] Քննչական կոմիտեի ծառայողի կենսաթոշակ նշանակելու կարգի իմաստով կենսաթոշակառու:
[55] Տե՛ս ՀԿԿ պաշտոնական կայքում հրապարակված տեղեկատվությունը՝ https://anticorruption.am/hy/announcement/view/191

պատասխանատվության համատեքստում: Բացասական եզրակացություն տալու հիմք են հանդիսացել երկու դեպքում էլ գույքային դրության առնչությամբ արձանագրված անհամապատասխանությունները[56]:

Որոշ թեկնածուներ խոստովանել են, որ ինքնուրույն չեն լրացրել հայտարարագիրը՝ վկայակոչելով հմտությունների պակասը: «*Տեխնիկապես չեմ տիրապետում այդ հարթակում ներբեռնելու հմտությունների*» կամ «*Մի հասկացող մարդ էի նստացնում, նա էլ լրացրել է: Ես սկի չեմ էլ ստուգել*»:

Որոշ թեկնածուներ հայտարարագրում չեն նշել փաստացի տիրապետման տակ գտնվող գույքը, օրինակ՝ այլ անձանց անվամբ ձևակերպված ավտոմեքենաները, որոնք փաստացի վարել են թեկնածուները: «*Ես չգիտեի, որ ընկերոջս մեքենան, որ վարել եմ, պետք է նշեմ: Կարծել եմ, որ միայն ինձ պատկանող մեքենան պետք է նշեի*»:

Հարցազրույցին մասնակցած 12 թեկնածուներից առնվազն 4-ը (25%-ը) ենթարկվել են կարգապահական պատասխանատվության, առնվազն 3-ը՝ վարչական, 2-ը՝ անցել քրեական գործով[57]: Նրանցից մեկը վարչական պատասխանատվության է ենթարկվել ԿԿՀ-ի կողմից հայտարարագիր չներկայացնելու համար:

- **32 թափուր հաստիքների համալրման համար կազմակերպված մրցույթ**

2023թ. -ի մայիսի 2-ին հայտարարվեց հերթական մրցույթը Հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոնների հետևյալ 32 հաստիքների համար.

- առաջին, երկրորդ, երրորդ և ներքին անվտանգության վարչությունների հատկապես կարևոր գործերով ավագ քննիչի՝ 11,
- հատկապես կարևոր գործերով քննիչի՝ 6,
- ավագ քննիչի՝ 5,
- քննիչի՝ 10 հաստիքների համար[58]:

Մրցույթի թեստավորման փուլն անցկացվել է 2023թ. -ի հունիսի 13-ին:

32 հաստիքի համար հայտարարված մրցույթի թեստավորման փուլին մասնակցել է 19 թեկնածու (որից 2-ը (11%) իգական սեռի ներկայացուցիչ են), որոնցից 15-ը (79%)[59] հաղթահարել է այդ փուլը (բոլորը արական սեռի ներկայացուցիչներ): *Մրցույթի 19 մասնակիցներից 1-ը նախկինում մասնակցել են մրցույթին, սակայն չէր հաղթահարել այն*[60]*:*

Գրավոր փուլը հաղթահարած թեկնածուների թեստավորման արդյունքների միջին միավորը կազմել է 42. 8, նվազագույնը՝ 35, առավելագույնը՝ 49. 5 (4 թեկնածու):

---

[56] ԿԿՀ գրություն 01/2517-2023 առ 14.11.2023թ.

[57] Նման տվյալները ամբողջական չեն, քանի որ ի հայտ են գալիս միայն այն դեպքում, երբ Մրցութային հանձնաժողովը հարց է ուղղում թեկնածուին:

[58] Տե՛ս Հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոնների համալրման նպատակով անցկացվող մրցույթի հայտարարությունը՝ https://www.anticorruption.am/hy/announcement/view/199

[59] Տե՛ս ՀԿԿ պաշտոնական կայքում հրապարակված տեղեկատվությունը՝ https://www.anticorruption.am/hy/announcement/view/204

[60] Նրանցից մեկը հայց էր ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ Հակակոռուպցիոն դատարանի Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոնների համալրման նպատակով անցկացվող մրցույթի հարցազրույցի փուլը հաղթահարելու և մրցույթում հաղթող ճանաչվելու իրավահարաբերության առկայությունը ճանաչելու, որպես հետևանք՝ Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի՝ թեկնածուին աշխատանքից ազատելու մասին հրամանն անվավեր ճանաչելու, միջին աշխատավարձ հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար՝ սկսած 24.10.2022թ. բռնագանձելու, Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեի նախագահին թեկնածուին համապատասխան պաշտոնին նշանակել պարտավորեցնելու պահանջ, որը 2023թ. դեկտեմբերի 18-ին մերժվել է:

Մրցույթի հարցազրույցի փուլը տեղի ունեցավ հուլիսի 31-ին, որին 15 թեկնածուներից մեկը չի ներկայացել:

Մրցույթի հարցազրույցի փուլին ներկա են եղել հանձնաժողովի 5 անդամները: Հարցազրույցի փուլին այլևս ներգրավված չէր միջազգային փորձագետ Վ. Կասկոն[61]:

32 հաստիքի համար հարցազրույցի փուլին մասնակցած 14 մասնակիցներից 10-ը (71%) հաղթահարել է հարցազրույցի փուլի անցողիկ շեմը, որից 2-ը՝ կին: ***Մրցույթը չհաղթահարած 4 թեկնածուներից 3-ն ունեցել են ԿԿՀ բացասական եզրակացություն****, ինչը, կարելի է ասել, որոշիչ դեր է ունեցել Մրցութային հանձնաժողովի համար:*

Մրցույթը հաղթահարած 10 թեկնածուների հարցազրույցի միջին միավորը եղել է 40. 05 (հնարավոր 50-ից), նվազագույնը՝ 37.2, իսկ առավելագույնը՝ 43.4:

Մրցույթը հաղթահարած թեկնածուներից միայն մեկը չի ունեցել քննիչ աշխատելու փորձ:

Թեկնածուներից առնվազն 4-ը ենթարկվել են կարգապահական, իսկ առնվազն 3-ը՝ վարչական պատասխանատվության:

Հարցազրույցին հրավիրված, սակայն մրցույթը չհաղթահարած 5 թեկնածուներից (այդ թվում՝ մրցույթին չներկայացած) 1-ի վերաբերյալ ԿԿՀ-ն տրամադրել է դրական, մեկի՝ դրական վերապահումով, իսկ 3-ի՝ բացասական եզրակացություն:

- **1 թափուր հաստիքների համալրման համար կազմակերպված մրցույթ**

2023թ. -ի մայիսի 19-ին Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների թեկնածուների ընտրության մրցութային հանձնաժողովը Հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոնների՝ քննչական երրորդ վարչության հատկապես կարևոր գործերով ավագ քննիչի՝ 1, թեկնածուի ընտրության համար հայտարարել է մրցույթ[62]: Նշված հաստիքը համալրելու մրցույթի թեստավորման փուլն անցկացվել է 2023 թ. -ի հունիսի 26-ին: Թեստավորման փուլին մասնակցել է 1 թեկնածու (իգական սեռի ներկայացուցիչ), ով հաղթահարել է թեստավորման փուլի անցողիկ շեմը՝ ստանալով 37 միավոր (անցողիկ միավորը 35-ն է)[63]:

Այս մրցույթով հարցազրույցի փուլը կազմակերպվել է մեկ այլ մրցույթի հետ նույն օրը՝ 2023թ. -ի հուլիսի 31-ին: Հարցազրույցի փուլի արդյունքում միակ թեկնածուն հաղթահարել է հարցազրույցի փուլի անցողիկ շեմը՝ ստանալով 39.2 միավոր[64]: *Ի դեպ, այս թեկնածուն դիմել էր արդեն երկու անգամ նախորդիվ անցկացվող մրցույթներին, սակայն չէր հաղթահարել մրցույթը:*

Մրցույթի հարցազրույցի փուլին ներկա են եղել հանձնաժողովի 5 անդամները: Հարցազրույցի փուլին ներգրավված չէր միջազգային փորձագետ[65]:

Վերը նշված երկու մրցույթը հաղթահարած ընդհանուր թվով 11 թեկնածուներից 8-ի վերաբերյալ ԿԿՀ-ն տրամադրել է դրական, իսկ 3-ի դեպքում՝ դրական՝ վերապահումով եզրակացություն: 3 դեպքում էլ վերապահման հիմք են հանդիսացել գույքային դրության առնչությամբ արձանագրված անհամապատասխանությունները:

---

[61] Տե՛ս ՀԿԿ պաշտոնական կայքում հրապարակված տեղեկատվությունը՝ https://www.anticorruption.am/hy/announcement/view/210

[62] Տե՛ս Հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոնների համալրման նպատակով անցկացվող մրցույթի հայտարարությունը՝ https://www.anticorruption.am/hy/announcement/view/200

[63] Տե՛ս ՀԿԿ պաշտոնական կայքում հրապարակված տեղեկատվությունը՝ https://www.anticorruption.am/hy/announcement/view/207

[64] Տե՛ս ՀԿԿ պաշտոնական կայքում հրապարակված տեղեկատվությունը՝ https://www.anticorruption.am/hy/announcement/view/213

[65] Տե՛ս ՀԿԿ պաշտոնական կայքում հրապարակված տեղեկատվությունը՝ https://www.anticorruption.am/hy/announcement/view/210

- **29 թափուր հաստիքների համալրման համար կազմակերպված մրցույթ**

2023թ. -ի սեպտեմբերի 1-ին հայտարարվել է ՀԿԿ ինքնավար պաշտոններ զբաղեցնող անձանց 29 թափուր հաստիքների հերթական մրցույթը.

- հատկապես կարևոր գործերով ավագ քննիչի՝ 8,
- հատկապես կարևոր գործերով քննիչի՝ 6,
- ավագ քննիչի՝ 6
- քննիչի 9 հաստիքների համար[66]:

Մրցույթի թեստավորման փուլն անցկացվել է 2023 թվականի հոկտեմբերի 13-ին:

29 հաստիքի համար հայտարարված մրցույթի թեստավորման փուլին հրավիրվել է 30 թեկնածու (որից 4-ը (13%)՝ իգական սեռի ներկայացուցիչներ), նրանցից 4-ը մրցույթին մասնակցել են երկրորդ կամ երրորդ անգամ: 30-ից մեկը չի ներկայացել, մեկը՝ հեռացվել է քննասենյակից, իսկ 21-ը հաղթահարել են թեստավորման փուլը[67]:

Նրանց թեստավորման արդյունքների միջին միավորը կազմել է 41.3, նվազագույնը՝ 36.5, առավելագույնը՝ 49:

Մրցույթի հարցազրույցի փուլը տեղի է ունեցել դեկտեմբերի 18-ին և 19-ին, որին մասնակցել է 16 թեկնածու, որից 2-ը (13%)՝ իգական սեռի ներկայացուցիչ:

Հարցազրույցի փուլին ներկա են եղել հանձնաժողովի 4 անդամները, բացակայում էր քաղաքացիական հասարակության ներկայացուցիչը: Հարցազրույցի փուլին ներգրավված չէր միջազգային փորձագետ[68]: ՀԿԿ-ն մի քանի անգամ հրապարակել է հայտարարություն՝ Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների թեկնածուների ընտրության մրցութային հանձնաժողովի աշխատանքներին խորհրդակցական ձայնի իրավունքով միջազգային փորձագետի ներգրավման համար, սակայն հայտարարված մրցույթին հայտեր չեն ներկայացվել[69]: Փորձագետի թեկնածություն կարող են առաջադրել վերջին երկու տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետության հետ հակակոռուպցիոն ոլորտում համագործակցող միջազգային կամ միջկառավարական կազմակերպությունները[70]:

2023թ. հոկտեմբերի 18-ին ՀԿԿ-ն հայտարարություն է տարածել Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների (ինքնավար և օպերատիվ-հետախուզական) թեկնածուների ընտրության մրցութային հանձնաժողովի աշխատանքներին խորհրդակցական ձայնի իրավունքով հոգեբանի ներգրավման վերաբերյալ[71]: Հայտարարված մրցույթին դիմել է մեկ թեկնածու՝ հոգեբան Մարինե Սահակյանը: Վերջինս ներգրավվել է որպես հոգեբան՝ Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների պաշտոնների համալրման մրցույթների հարցազրույցների /բարեվարքության/ փուլերին[72]: Արդյունքում **2023թ. -ի դեկտեմբերի 18-ին անցկացված ՀԿԿ ինքնավար պաշտոններ զբաղեցնող պաշտոնների համալրման մրցույթի**

---

[66] Տե՛ս Հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոնների համալրման նպատակով անցկացվող մրցույթի հայտարարությունը՝https://anticorruption.am/hy/announcement/view/220

[67] ԻՊԱՍ-ը չի դիտարկել թեստավորման փուլը:

[68] Տե՛ս ՀԿԿ պաշտոնական կայքում հրապարակված տեղեկատվությունը՝ https://www.anticorruption.am/hy/announcement/view/225 , https://www.anticorruption.am/hy/announcement/view/223

[69] Տե՛ս միջազգային փորձագետների ներգրավման վերաբերյալ հայտարարությունը՝ https://anticorruption.am/hy/announcement/view/242?fbclid=IwAR3Ldgn1w3_0k51abbBIHvJPGyNvcQ8-wN-6e4kTiDVybjHSypAnofKJHq8

[70] Տե՛ս միջազգային փորձագետների ներգրավման վերաբերյալ հայտարարությունը՝ https://anticorruption.am/hy/announcement/view/242?fbclid=IwAR2_-VZ7yT53hN-koPo8dPKS2ZPbKvAcObTf24ybl5C7OFxtDeldtLf3oDM

[71] Տե՛ս հոգեբանի ներգրավման վերաբերյալ հայտարարությունը՝ https://anticorruption.am/hy/announcement/view/234

[72] Հակակոռուպցիոն կոմիտեի մասին օրենքը թույլ է տալիս հարցազրույցի փուլին խորհրդակցական ձայնի իրավունքով Հանձնաժողովում ներգրավելու նաև հոգեբանի:

հարցազրույցի փուլին առաջին անգամ ներկա է եղել հոգեբան[73]: Հատկանշական է, որ հարցազրույցի փուլին հոգեբանի ներգրավման հնարավորություն նախատեսված է եղել դեռևս 2021թ. -ի հոկտեմբերից[74]: Վերջինս հնարավորություն է ունեցել հարցեր ուղղել թեկնածուներին հարցազրույցի ավարտական մասում և կարծիք հայտնել թեկնածուի անձնական որակների վերաբերյալ:

Հարցազրույցին մասնակցած 16 թեկնածուներից հարցազրույցի օրվա դրությամբ շուրջ կեսը նախկին պաշտոնից ազատված են եղել՝ գործազուրկ էին, 2-ը՝ Քննչական կոմիտեում քննիչ, 2-ը՝ ՀԿԿ-ում զբաղեցնում էին այլ պաշտոններ, 1-ը՝ դատախազ էր և այլն:

Մրցույթը հաղթահարած 12 թեկնածուներից 2-ը չեն ունեցել որպես քննիչ կամ/և օպերլիազոր աշխատեու փորձ:

Հարցազրույցները տևել են միջինում 40 րոպե, նվազագույնը՝ 15, իսկ առավելագույնը՝ 1 ժամ 09 րոպե:

Մրցույթը հաղթահարած 12 թեկնածուների հարցազրույցի միջին միավորը եղել է 39.1 (հնարավոր 50-ից), նվազագույնը՝ 36.8, իսկ առավելագույնը՝ 43.1:

Այս մրցույթի համատեքստում անցկացրած հարցազրույցի շրջանակներում, ի տարբերություն առաջին մրցույթների, թեկնածուներին հարցեր են ուղղել արդեն իսկ հանձնաժողովի երեք անդամներ, որոշ դեպքերում՝ ներկա բոլոր չորսը:

Երկրորդ կամ երրորդ անգամ դիմած թեկնածուները, հատկապես նրանք, ում վերաբերյալ ԿԿՀ-ն տվել էր բացասական եզրակացություն, քայլեր են ձեռնարկել որոշ թերությունները շտկելու ուղղությամբ:

Թեկնածուներից առնվազն 5-ը ունեցել են կարգապահական տույժ, այդ թվում՝ որպես քննիչ աշխատելու ընթացքում, օրինակ՝ քրեական գործի շրջանակներում տևական ժամանակ գործողություններ չնախաձեռնելու համար:

Հատկանշական է, որ թեև թեկնածուներից ոմանք նշել են, որ համաձայն չեն եղել կարգապահական տույժի հետ, նրանցից ոչ ոք այն չի բողոքարկել՝ հարաբերությունները չվատթարացնելու կամ ներքին բողոքարկման մեխանիզմի արդյունավետ չլինելու նկատառումից ելնելով:

Թեկնածուներից առնվազն 4-ը-ը ստացել են վարչական տույժեր, հիմնականում ՃԵԿ կամ կայանելու կանոնները խախտելու համար: Թեկնածուներից 5-ը անցել են քրեական գործով (նրանցից միայն մեկն է մրցույթը հաղթահարել), որոնցից մեկը՝ երկու քրեական գործով:

ՀԿԿ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՎ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Մրցույթը հաղթահարած՝ ինքնավար պաշտոնների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձինք մինչև Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի կողմից համապատասխան պաշտոնում նշանակվելը, մասնագիտական պատրաստում են անցնում Արդարադատության ակադեմիայում:

ՀՀ արդարադատության ակադեմիայի պաշտոնական կայքում[75] Հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոնների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց **մասնագիտական պատրաստման ուսուցման ծրագրերը[76] առաջին անգամ հրապարակվել են 2023թ. -ին**, մինչ այդ մրցույթը

[73] Դեկտեմբերի 19-ին տեղի ունեցած հարցազրույցներին հոգեբանը ներկա չէր:

[74] Տե՛ս Հակակոռուպցիոն կոմիտեի մասին ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 10-րդ կետի 4-րդ ենթակետը, հղումը՝ https://www.arlis.am/documentview.aspx?docid=151799

[75] Տե՛ս ՀՀ արդարադատության ակադեմիայի պաշտոնական կայքէջը՝ https://aoj.am/full-time-education

[76] https://aoj.am/full-time-education/training-programs/2023/investigator

հաղթահարած թեկնածուները չեն անցել մասնագիտական պատրաստում, քանի որ համապատասխանել են օրենքով սահմանված ուսումնառությունից ազատման պահանջներին:

Ուսումնառությունից անձը ազատվում է, եթե ունի դատավորի, դատախազի, քննիչի, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնողի պաշտոնում կամ փաստաբանի երկու տարվա մասնագիտական աշխատանքի ստաժ, եթե այդ պաշտոնը թողնելուց կամ գործունեությունը դադարեցնելուց հետո չի անցել հինգ տարի[77]:

2023թ. -ի ընթացքում ուսումնառությունից ազատված են եղել 19 թեկնածու[78]:

Մասնագիտական պատրաստման ուսուցման ծրագրերը 2023թ. -ին իրականացվել են 3 փուլով՝ ՀՀ քրեական իրավունքի արդի հարցերի, ՀՀ քրեական դատավարության արդի հարցերի, կրիմինալիստիկական տակտիկայի և մեթոդիկայի, փորձաքննությունների արդի հնարավորությունների և իրավաբանական գրագրության, հաշվապահական հաշվառման և ֆինանսական իրավունքի վերաբերյալ: Ուսուցման ժամկետները սահմանել է Ակադեմիայի կառավարման խորհուրդը[79]:

1. Հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց (քննիչների) թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման ուսուցման ծրագիրը[80] /2023թ. փետրվար-մարտ ամիսներին/,
2. Հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց (քննիչների) թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման ուսուցման ծրագիրը[81] /2023թ. մայիս-հունիս ամիսներին/,
3. Հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոնների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման ուսուցման ծրագիրը[82] /2023թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին/:

2023թ. -ի ընթացքում մասնագիտական պատրաստում են անցել Հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոնների թեկնածուների ցուցակում ընդգրկված 6 անձինք: Մասնագիտական պատրաստումը չհաղթահարած թեկնածուներ չեն եղել[83]:

Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը մասնագիտական պատրաստման ուսումնառությունից ազատված անձանց նշանակում է համապատասխան պաշտոնի և նշանակումից հետո՝ մեկ տարվա ընթացքում, արդարադատության ակադեմիայի ռեկտորի հետ համատեղ սահմանում է վերջիններիս վերապատրաստման կարգը և կազմակերպում վերապատրաստման գործընթացը: Այսպես,

---

[77] Տե՛ս Հակակոռուպցիոն կոմիտեի մասին ՀՀ օրենքի 17 հոդվածի 14-րդ կետը՝ https://www.arlis.am/documentview.aspx?docid=186236

[78] Տե՛ս ՀԿԿ 08.05.2024թ.-ի գրությունը ի պատասխան ԻՊԱՍ 30.04.2024թ.-ի հարցմանը

[79] Արդարադատության ակադեմիայի մասին ՀՀ օրենք, հոդված 22, մաս 2.3, հղումը՝ https://www.arlis.am/documentview.aspx?docid=172511

[80] Տե՛ս համապատասխան ուսուցման ծրագիրը՝ https://aoj.am/storage/full-time-education/training-program/BjHK8jc3KfLks1C9eyd6fMuz9iCB8FuzHKyrf9X6.pdf

[81] Տե՛ս համապատասխան ուսուցման ծրագիրը՝ https://aoj.am/storage/full-time-education/training-program/lgJiTJrPPowQmRzYSYxCK4K882KqdWKseiiwaFsa.pdf

[82] Տե՛ս համապատասխան ուսուցման ծրագիրը՝ https://aoj.am/storage/full-time-education/training-program/o2vIOvXrevBfQZIukOlso6Bp5mcBSLownagKjwb1.pdf

[83] ՀԿԿ 08.05.2024թ.-ի գրությունը ի պատասխան ԻՊԱՍ 30.04.2024թ.-ի հարցմանը

Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի 30. 05. 2023թ. -ի թիվ 27-Լ հրամանի հավելվածով սահմանվել է Հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոն զբաղեցնող ծառայողների վերապատրաստման կարգը, ըստ որի ուսումնառությունից ազատված ծառայողները ևս վերապատրաստումն անցնում են սահմանված ընդհանուր կարգով՝ արդարադատության ակադեմիայում «Արդարադատության ակադեմիայի մասին» օրենքով սահմանված կարգով[84]:

Կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ վերապատրաստումների պահանջը բխում է ինչպես Հակակոռուպցիոն 2023-2026թթ. -ի ռազմավարության[85], այնպես էլ ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2022-2026թթ. -ի ռազմավարության[86] գործողությունների ծրագրերից: Սակայն, 2023թ. -ին կոռուպցիային առնչվող դասընթացներ Արդարադատության ակադեմիայում նախատեսված են եղել միայն հեռաուսուցման տարբերակով՝ «Կոռուպցիոն հանցագործություններ և անդրազգային կազմակերպված հանցավորություն. կոռուպցիոն հանցագործությունների և կազմակերպված հանցավորության դեմ պայքարի քրեադատավարական գործիքակազմը»[87] թեմայով */առաջին անգամ Հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց (քննիչների) պարտադիր վերապատրաստման ծրագիր հրապարակվել է 2024թ. -ին[88]՝ հունվար-դեկտեմբեր ամիսների համար/[89]:*

Նոր նշանակված կադրերի համար կոռուպցիայի դեմ պայքարի թեմաներով միջազգային կամ ներպետական սեմինարները շատ կարևոր նշանակություն ունեն և պահանջված են՝ հաշվի առնելով, որ նրանք մասնագիտորեն ամբողջությամբ խորացված չեն կոռուպցիոն հանցագործությունների քննության մեջ:

Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայող

Ինչպես նշվեց, ինքնավար պաշտոններ զբաղեցնող անձանց (քննիչների) վերապատրաստումն իրականացվում է «Արդարադատության ակադեմիայի մասին» օրենքով սահմանված կարգով[90]՝ Արդարադատության ակադեմիայի կողմից[91]: Տարբերակվում են պարտադիր և ոչ պարտադիր վերապատրաստումներ: Պարտադիրի շրջանակներում Կոմիտեի ծառայողները պարտավոր են անցնել վերապատրաստում ոչ պակաս, քան երկու տարին մեկ, որի ժամկետը կարող է տևել մինչև մեկ ամիս:

---

84 ՀԿԿ 08.05.2024թ.-ի գրությունը ի պատասխան ԻՊԱՍ 30.04.2024թ.-ի հարցմանը

85 https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=184674

86 Տե՛ս ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2022-2026թթ-ի ռազմավարությունը՝ https://www.moj.am/page/491

87 Տե՛ս հետևյալ հղումները՝ https://justiceacademy.am/#2563 , https://aoj.am/distance-learning/courses/book/31

88 Տե՛ս համապատասխան ուսուցման ծրագիրը՝ https://aoj.am/storage/full-time-education/training-program/fc7Vp6wopT9ev3cdCuC8u1CUb2b6isJRbYoGLoxN.pdf

89 2024թ.-ի վերապատրաստման ծրագիրը նպատակաուղղված է Հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց մասնագիտական գիտելիքների և հմտությունների շարունակական կատարելագործմանը կոռուպցիայի դեմ պայքարի արդի հարցերի, կոռուպցիոն հանցագործությունների որակման և քննության մեթոդիկայի, հանցավոր ճանապարհով ստացված գույքի օրինականացման (փողերի լվացում) հանցագործության որակման և քննության մեթոդիկայի, կոռուպցիոն հանցատեսակների քրեագիտական տակտիկայի տեսական ու պրակտիկ գիտելիքների ամրապնդմանը և կատարելագործմանը, ՀՀ Սահմանադրական դատարանի, ՀՀ Վճռաբեկ դատարանի և ՄԻԵԴ վերաբերելի նախադեպային որոշումների ներկայացմանը և քննարկմանը:

90 Տե՛ս Արդարադատության ակադեմիայի մասին ՀՀ օրենքը՝ https://www.arlis.am/documentview.aspx?docid=164915

91 Ակադեմիան անցկացնում է նաև Կոմիտեի քննիչների թեկնածությունների ցուցակներում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստումը, ինչպես նաև Կոմիտեի քննիչների հատուկ ուսուցումը՝ հատուկ միջոցների և հրազենի գործադրման ունակություններն ուսուցանելու նպատակով:

2023թ. -ի ընթացքում Հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոն զբաղեցնող անձինք պարտադիր վերապատրաստում չեն անցել[92]:

Նշենք, որ նախկին իրավակարգավորումներով վերապատրաստումներից ազատման հիմքերը տարբեր էին Կոմիտեի ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձանց համար: Մասնավորապես, Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի 2021թ. -ի հոկտեմբերի 15-ի թիվ 03Լ հրամանով սահմանված էր, որ **վերապատրաստում չեն անցնում օպերատիվ հետախուզական գործունեություն իրականացնող այն ծառայողները, որոնց ծառայության սահմանային տարիքը լրանալուն մնացել է երկու տարվանից պակաս ժամանակ, ինչպես նաև այն կին ծառայողները, որոնք ունեն մինչև երեք տարեկան երեխա:** Մինչդեռ, վերապատրաստումներից ազատման նման հիմքեր նախատեսված չէին Կոմիտեի ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց համար:

2023թ. -ին համապատասխան կարգերում կատարված փոփոխությունների արդյունքում **վերապատրաստումներից ազատման վերը նշված հիմքերը հեռացվել են և սահմանվել են վերապատրաստումներից ազատման միանման հիմքեր**[93]: Միաժամանակ, նախատեսվել է առավել համապարփակ կարգավորում, ըստ որի վերապատրաստումը տեղափոխվում է ըստ ժամանակացույցի, եթե Ծառայողը գտնվում է արձակուրդում, գործուղման կամ ժամանակավոր անաշխատունակության մեջ կամ կասեցվել են լիազորությունները կամ գրանցված է կադրերի ռեզերվում:

Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողն իրավունք ունի մասնակցելու նաև կրթական վերապատրաստման այլ ծրագրերի, համաժողովների և իրավաբանների մասնագիտական այլ հավաքների:

2023թ. -ի ընթացքում Հակակոռուպցիոն կոմիտեի 87 ծառայող /ինքնավար պաշտոն զբաղեցնող և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձինք/ անցել է ոչ պարտադիր միջազգային և տեղական վերապատրաստում *հետևյալ թեմաներով.*

- *Կիբեր շահագործում և հետաքննություն,*
- *ՓԼԱՖ և զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման դեմ պայքարի արդի առանձնահատկությունները,*
- *Փողերի լվացում, ապօրինի հարստացում, միջազգային իրավական փոխօգնություն, թվային հետախուզություն,*
- *IAACA Կոռուպցիոն բնույթի և փոխկապակցված հանցագործությունների բացահայտման, կանխարգելման և քննության ընթացքում փորձաքննությունների դերը,*
- *Փողերի լվացման և կոռուպցիոն բնույթի հանցագործությունների հետ կապված ֆինանսական հետաքննությունների, ինչպես նաև քրեական դատավարության կարգով բռնագանձումներ,*

[92] Տե՛ս ՀԿԿ 08.05.2024թ.-ի գրությունը ի պատասխան ԻՊԱԱ 30.04.2024թ.-ի հարցմանը

[93] Փոփոխությունները կատարվել են ԻՊԱԱ առաջարկությունների հիման վրա. հիմք՝ Հակակոռուպցիոն կոմիտեի ստեղծման և ընթացիկ գործունեության ուսումնասիրություն 2022թ.-ի ԻՊԱԱ զեկույց՝ առաջարկություններով և Զեկույցի վերաբերյալ Հակակոռուպցիոն կոմիտեի դիտարկումները:

- *Հանցագործությունների կանխարգելման պրակտիկայի և բարեփոխումների վերաբերյալ եվրոպական և տարածաշրջանային միտումները և հնարավորությունները Հայաստանի համար,*
- *Միջազգային իրավական փոխօգնություն,*
- *Բջջային հեռախոսների տվյալների բեռնում,*
- *Կոռուպցիոն բնույթի գործերով իրավաբանական անձանց պատասխանատվություն,*
- *ՍԵՊՈԼ Միջազգային համագործակցության մեթոդները ապօրինի միգրացիայի դեմ պայքարում,*
- *Սեպոլ Ակտիվների վերականգնում,*
- *Փողերի լվացման դեպքերի ֆինանսական քննություն և քրեական հետապնդում,*
- *Ահաբեկչության ֆինանսավորման գործերի քննություն և հետապնդում,*
- *Ինտերներտայի հեռուստատեսություն, տեսահեռնություն,*
- *Արտաքին դիտում,*
- *Փողերի լվացում և ֆինանսական քննություններ[94]:*

Միջազգային հանդիպումներին և վերապատրաստումներին Հակակոռուպցիոն կոմիտեից մասնակցել են ինչպես ինքնավար պաշտոն զբաղեցնող անձինք /քննիչներ, վարչության պետեր/, այնպես էլ օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող անձինք, քանի որ թեմաները, որոնց վերաբերյալ անցկացվել են հանդիպումները, վերաբերելի են եղել երկուսին էլ. *շատ երկրներում վերջիններիս գործառույթները տարանջատված չեն և իրականացվում են մեկ հաստիքի՝ դետեկտիվի կողմից[95]:*

Շատ եմ կարևորում միջազգային սեմինարները փողերի լվացման, ապօրինի հարստացման, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման թեմաներով, քանի որ այս կատեգորիայի հանցանքների արտահայտությունը հատում է պետական սահմանները՝ որպես կանոն հանցանքը նաև Հայաստանից դուրս է տեղափոխվում, հետևաբար սեմինարի արդյունքում դրական փորձ ենք ձեռք բերում, որը որոշ դեպքերում, և շատ հաջողված կիրառվում է մեր աշխատանքում: Շատ հաճախ այդ շփումների ընթացքում փոխանակվում ենք կոնտակտներով, հետագայում այդ պետության հետ աշխատանքային կարգով համագործակցելու նպատակով, այդ թվում՝ միջազգային իրավական օգության միջնորդությունների պատրաստման հարցում:

Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայող

ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՍՏԵՂԾՈՒՄ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԿԱՐԳԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄ

Դեռևս «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի նախագծի[96] սկզբնական տարբերակում, հակակոռուպցիոն կոմիտեի համակարգում նախատեսվել էր ունենալ 7 անդամից կազմված կարգապահական հանձնաժողով[97], որի բոլոր անդամների նշանակումը իրականացվելու էր Կոմիտեի

[94] ՀԿԿ 08.05.2024թ.-ի գրությունը ի պատասխան ԻՊԱՍ 30.04.2024թ.-ի հարցմանը

[95] Տեղեկատվությունը ՀԿԿ ծառայողի հետ հարցազրույցից:

[96] Տե՛ս նախագիծը՝ https://www.e-draft.am/projects/2256/about

[97] Հանձնաժողովի կազմում են հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալներից մեկը՝ Կոմիտեի նախագահի որոշմամբ, Կոմիտեի՝ վիճակահանությամբ ընտրվող 3 ծառայող և երեք իրավաբան-գիտնական

նախագահի կողմից, ինչը խնդրահարույց էր վերահսկողության տեսանկյունից[98]: Այս կարգավորումները նախագծից հեռացվեցին և ընդունվեց օրենքի նախագծի փոփոխված տարբերակը[99], ըստ որի՝ կարգապահական տույժերը հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի նկատմամբ կիրառում է նրան պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը՝ իր տեղակալներից կամ Կոմիտեի վարչությունների և բաժինների պետերից ստացված միջնորդությունների հիման վրա:

2022թ. -ի սեպտեմբերի 7-ին շրջանառության դրվեց «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին օրենքի նախագիծը[100], որով կրկին նախատեսվեց Կոմիտեում ձևավորել 7 անդամից[101] բաղկացած կարգապահական հանձնաժողով[102], որի անդամներից Կոմիտեի նախագահն իր որոշմամբ նշանակելու էր միայն իր տեղակալներից մեկին՝ ի տարբերություն նախորդ նախագծի: Սակայն այս նախագիծը նույնպես անցնելով հանրային քննարկումների շրջափուլով[103] ենթարկվեց մի շարք փոփոխությունների՝ հանձնաժողովի կազմի փոփոխության, ծառայողական քննության փուլերի ընթացակարգային հարցերի, ծառայողական քննության հարուցման առիթների ընդլայնման առումով:

Կարգապահական հանձնաժողովի ստեղծում նախատեսող օրենսդրական նախագիծն[104] Ազգային ժողովի կողմից ընդունվեց երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ 26. 06. 2023թ. -ին և ուժի մեջ մտավ 29.07.2023թ. -ին[105]: Հընթացս հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի կողմից ընդունվեցին նաև ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի կարգապահական հանձնաժողովի աշխատակարգը սահմանելու մասին N 56-L հրամանը, ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում ծառայողական քննություն իրականացնելու կարգը սահմանելու մասին N 57-L հրամանը, ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի վարքագծի կանոնները սահմանելու մասին N 30-L հրամանը և այլն:

Այսպես, հակակոռուպցիոն կոմիտեում ստեղծված **կարգապահական հանձնաժողովը բաղկացած է ութ անդամից**.

1. Հանձնաժողովի կազմում են հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալներից մեկը՝ կոմիտեի նախագահի որոշմամբ /Մուշեղ Բաբայան/,
2. Հակակոռուպցիոն կոմիտեի՝ վիճակահանությամբ ընտրվող[106] մեկ քննիչ /ՀԿԳ ավագ քննիչ Ալիկ Ստեփանյան/,

---

[98] Տե՛ս ԻՊԱՍ առաջարկները «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ՝ https://prwb.am/2020/02/17/%d5%a1%d5%bc%d5%a1%d5%bb%d5%a1%d6%80%d5%af%d5%b6%d5%a5%d6%80-%d5%b0%d5%a1%d5%af%d5%a1%d5%af%d5%b8%d5%bc%d5%b8%d6%82%d5%ba%d6%81%d5%ab%d5%b8%d5%b6-%d5%af%d5%b8%d5%b4%d5%ab%d5%bf%d5%a5%d5%ab/

[99] Տե՛ս Հակակոռուպցիոն կոմիտեի մասին ՀՀ օրենքը՝ https://www.arlis.am/documentview.aspx?docid=151799

[100] Նախագծի հղումը՝ https://www.e-draft.am/projects/4723/about, http://www.parliament.am/draft_history.php?id=14118&lang=arm

[101] Հանձնաժողովի կազմում են հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալներից մեկը՝ կոմիտեի նախագահի որոշմամբ, հակակոռուպցիոն կոմիտեի՝ վիճակահանությամբ ընտրվող մեկ քննիչ, մեկ օպերատիվ-հետախուզական ստորաբաժանման ծառայող, ՀՀ փաստաբանական պալատի մեկ ներկայացուցիչ, երկու իրավաբան-գիտնական և Կառավարության նշանակած մեկ ներկայացուցիչ

[102] Կոմիտեի նախագահի տեղակալներից մեկը՝ Կոմիտեի նախագահի որոշմամբ, հակակոռուպցիոն կոմիտեի՝ վիճակահանությամբ ընտրվող մեկ քննիչ, մեկ օպերատիվ-հետախուզական ստորաբաժանման ծառայող, ՀՀ փաստաբանական պալատի մեկ ներկայացուցիչ, երկու իրավաբան-գիտնական և Կառավարության նշանակած մեկ ներկայացուցիչ

[103] Տե՛ս ԻՊԱՍ կարծիքը՝ «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու նախագծի վերաբերյալ՝ https://prwb.am/2023/05/10/kartcikh%e2%80%a4-hakakorupcion-komitei-masin-orenkhum-phophoxuthyunner-katarelu-naxagtci-veraberyal/

[104] Տե՛ս նախագծի պատմությունը՝ http://www.parliament.am/draft_history.php?id=14118&lang=arm

[105] Տե՛ս «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքը՝ https://www.arlis.am/documentview.aspx?docid=180535

[106] Տե՛ս Հակակոռուպցիոն նախագահի՝ 2023թ.-ի օգոստոսի 16-ի թիվ 43-Լ հրամանի հավելվածով սահմանված Հակակոռուպցիոն կոմիտեի կարգապահական հանձնաժողովի կազմում վիճակահանությամբ ընտրվող հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների վիճակահանության անցկացման կարգը

3. մեկ օպերատիվ-հետախուզական ստորաբաժանման ծառայող /օպերլիազոր Գրիշա Բաղումյան/,
4. Գլխավոր դատախազության ներկայացրած մեկ դատախազ /ՀՀ գլխավոր դատախազության հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետի տեղակալ Կորյուն Սերոբյան/,
5. Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացրած մեկ ներկայացուցիչ /ՄԻՊ աշխատակազմի քրեական արդարադատության ոլորտում իրավունքների պաշտպանության վարչության պետ Էդգար Մարտիրոսյան/,
6. Մեկ իրավաբան գիտնական[107] /Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Գագիկ Գրիգորյան/,
7. Վարչապետի առաջարկությամբ ներկայացված հակակոռուպցիոն ոլորտի քաղաքականության մշակումն իրականացնող մարմնի երկու ներկայացուցիչ /ՀՀ արդարադատության նախարարի՝ համապատասխան ոլորտը համակարգող տեղակալ Կարեն Կարապետյան և ՀՀ արդարադատության նախարարության հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչության հակակոռուպցիոն քաղաքականության մշակման բաժնի պետ Եփրեմ Կարապետյան/:

Կարգապահական հանձնաժողովի անդամները նշանակվում են երեք տարի ժամկետով, բացառությամբ հանձնաժողովի առաջին կազմի անդամների նշանակման դեպքերի[108]:

«Կարգապահական հանձնաժողովը անաչառության, անկախության նաև թափանցիկության երաշխիք է: Հանձնաժողովի աշխատանքը հենց աշխատողի շահերից է բխում, որովհետև հակակոռուպցիոն կոմիտեն 8 անդամից 3 ձայն ունի: Ծառայողն ավելի անվտանգ է լինում, ավելի ինքնուրույն և համարձակ: Նախկինում կոմիտեի նախագահի կողմից ծառայողական քննություն նշանակելը և կարգապահական պատասխանատվության, տույժի ենթարկելը նույնն էր, թե՝ դատավորն ինքը գործով մեղադրանք առաջադրեր ու դատապարտեր մարդուն»:

Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայող

Հանձնաժողովի կազմում ընդգրկված չեն ներկայացուցիչներ քաղաքացիական հասարակության կառույցներից, ինչպես նաև նախատեսված չէ հանձնաժողովի նիստերին դիտորդների ներկայության հնարավորություն: Եթե հիմնական մտավախությունը պայմանավորենք գաղտնիության պահպանման խնդրի հետ, ապա այն արդարացված չէ քանզի, օրինակ՝ հանցագործությունների և իրավախախտումների դեմ պայքարող մեկ այլ կառույցում՝ ՀՀ ոստիկանության կարգապահական հանձնաժողովի կազմում[109] քաղաքացիական հասարակության կառույցներն ունեն ներգրավման հնարավորություն /հանձնաժողովի 11 անդամներից 5-ը հասարակական միավորումների

[107] Տե՛ս Հակակոռուպցիոն նախագահի՝ 2023թ.-ի օգոստոսի 16-ի թիվ 43-Լ հրամանի հավելվածով սահմանված Հակակոռուպցիոն կոմիտեի կարգապահական հանձնաժողովի կազմում իրավաբան գիտնականի ընտրության կարգը

[108] Հանձնաժողովի առաջին կազմում հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալը, Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացրած անձը, իրավաբան գիտնականը, վարչապետի առաջարկությամբ ներկայացված հակակոռուպցիոն ոլորտի քաղաքականության մշակումն իրականացնող մարմնի ներկայացուցիչները նշանակվում են երկու, իսկ հակակոռուպցիոն կոմիտեի՝ վիճակահանությամբ ընտրվող քննիչը, օպերատիվ-հետախուզական ստորաբաժանման ծառայողը, գլխավոր դատախազության ներկայացրած դատախազը՝ մեկ տարի ժամկետով, հղումը՝ https://www.arlis.am/documentview.aspx?docid=180535

[109] Տե՛ս ՀՀ ոստիկանության կարգապահական կանոնագիրքը հաստատելու մասին ՀՀ օրենքը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=175839, ՀՀ ոստիկանության պետի 29 ապրիլի 2013 թ.-ի թիվ 9-Ն հրամանը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=106054, ՀՀ կառավարության 27 դեկտեմբերի 2012 թվականի N 1672-Ն որոշումը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=80623

ներկայացուցիչներ են[110]/: Վերջիններիս ներկայացվող հիմնական պահանջը «առնվազն երեք ամսվա գործունեություն ունենալն է»:

Ինչ վերաբերում է կարգապահական հանձնաժողովի աշխատանքներին դիտորդներ չներգրավելու խնդրին, ապա դրա լուծումը պետք է փնտրել պատշաճ վերահսկողության մեխանիզմներ ստեղծելու՝ գաղտնիության համաձայնագիր կնքելու, դիտորդի ընտրության և ներգրավման հստակ կարգի սահմանման, ոչ թե ներգրավման արգելքի մեջ: Հաջողված օրինակ է Բարձրագույն դատական խորհուրդը, որի կողմից դատավորների նկատմամբ իրականացվող կարգապահական վարույթներն[111] անցկացվում են դռնբաց՝ ապահովելով դիտորդների ներգրավվածությունը:

Հակակոռուպցիոն կոմիտեում ստեղծված կարգապահական հանձնաժողովն իր լիազորությունների շրջանակներում անցկացնում է նիստեր, իրականացնում լսումներ, անհրաժեշտության դեպքում դիմում է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, կազմակերպություններին և այլ սուբյեկտներին՝ կարգապահական վարույթին վերաբերելի նյութեր տրամադրելու համար, իր իրավասության շրջանակներում ընդունում է որոշումներ և այլն:

Հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով, որոնք կարող են անցկացվել Կոմիտեի կենտրոնական վարչական շենքում կամ հեռավար եղանակով՝ կապի ժամանակակից միջոցների կիրառմամբ: Անհրաժեշտության դեպքում կարող են անցկացվել նաև արտագնա նիստեր: Հանձնաժողովի անդամները և նիստին հրավիրված անձինք Հանձնաժողովի նիստերին մասնակցում են իրենց համար նախընտրելի եղանակով:

Կարգապահական հանձնաժողովի ձևավորման օրվանից մինչև 2023թ. -ի դեկտեմբերի 31-ը հրավիրվել է հանձնաժողովի 2 նիստ[112]:

Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է կարգապահական հանձնաժողովի անդամների կեսից ավելին: Կարգապահական հանձնաժողովի որոշումներն ընդունվում են հանձնաժողովի անդամների ձայների մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում ընդունված է համարվում առերևույթ կարգապահական խախտման մեջ մեղադրվող Կոմիտեի ծառայողի համար առավել բարենպաստ որոշումը: Հանձնաժողովի նիստն արձանագրվում է: **Հանձնաժողովի որոշմամբ՝ կողմի միջնորդությամբ կամ սեփական նախաձեռնությամբ, նիստերը կարող են ձայնագրվել կամ տեսաձայնագրվել:** Ձայներիզներն ու տեսաերիզները կցվում են արձանագրությանը՝ որպես հավելված:

Նախկին իրավակարգավորումներով չէին սահմանվում ծառայողական քննության փուլերը, ընթացակարգային հարցերը, ծառայողական քննություն իրականացնող վարչությունները, ծառայողները: Միայն հակակոռուպցիոն կոմիտեի կանոնադրության ուսումնասիրությունից կարելի էր ենթադրել, որ ծառայողական քննության շրջանակներում նախնական ուսումնասիրությունը կոմիտեի ներքին անվտանգության վարչության իրավասությունն է: Օրենսդրական փոփոխություններով Հակակոռուպցիոն կոմիտեի մասին ՀՀ օրենքով նշված բացերը լրացվել են, սահմանվել են կարգապահական հանձնաժողովի և ներքին անվտանգության վարչության լիազորությունները, ծառայողական քննության փուլերը՝ նախնական ուսումնասիրություն և կարգապահական վարույթ և այլն:

---

[110] Տե՛ս 2023 թ.-ին ՀՀ ոստիկանության կարգապահական հանձնաժողովի կազմում ընդգրկված հասարակական միավորումների ցանկը՝ https://www.police.am/news/view/%D5%AF%D5%A1%D6%80%D5%A3%D5%A1%D5%BA%D5%A1%D5%B0%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6010323.html ,

[111] Տե՛ս ԲԴԽ կարգապահական վարույթների նիստերի ժամանակացույցը՝ https://court.am/hy/disciplinary/3

[112] Տե՛ս ՀԿԿ 08.05.2024թ.-ի գրությունն ի պատասխան ԻՊԱՍ 30.04.2024թ.-ի հարցմանը

Նախնական ուսումնասիրություն

Կարգապահական խախտման փաստի առթիվ հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի նկատմամբ **ծառայողական քննություն հարուցվում է** կարգապահական հանձնաժողովի որոշմամբ՝ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի, նրա տեղակալի կամ կարգապահական հանձնաժողովի որևէ անդամի, ինչպես նաև դատախազի՝ օրենքով սահմանված կարգով ներկայացված ծառայողական քննություն անցկացնելու վերաբերյալ միջնորդության հիման վրա:

Կարգապահական խախտման փաստի առթիվ հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի նկատմամբ **ծառայողական քննություն հարուցվում է նաև ֆիզիկական կամ իրավաբանական անձի, պետական և տեղական ինքնակառավարման մարմնի կամ պաշտոնատար անձի հաղորդումների, զանգվածային լրատվության միջոցների հրապարակումների հիման վրա:** Այս դրույթի օրենսդրական ամրագրումը դրական առաջընթաց է ծառայողական քննության հարուցման առիթների շրջանակի ընդլայնման առումով: Նշենք, որ ֆիզիկական և իրավաբանական անձանց հաղորդումներին իրավական ընթացք տալու համար դրանք պարտադիր պետք է ձևակերպվեն գրավոր:

- ***Ֆիզիկական կամ իրավաբանական անձը, որի հաղորդման հիման վրա հարուցվել է ծառայողական քննությունը, ինչպես նաև այլ անձը, ում կարող է հայտնի լինել ծառայողական քննությանը հետաքրքրող հարցերի ու հանգամանքների վերաբերյալ տեղեկություններ, կարող են քննության ընթացքում ներգրավվել որպես «ծառայողական քննությանն առնչվող անձ»:*** *Վերջիններս կարող են տալ բացատրություններ, ծանոթանալ իրենց մասնակցությամբ կատարած գործողությունների արձանագրություններին, ծառայողական քննություն իրականացնող անձի գործողությունները բողոքարկել Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահին:*

Ստանալով վերը նշված միջնորդությունը, հաղորդումը կամ հրապարակումը, Հանձնաժողովի քարտուղարն այն անհապաղ ուղարկում է հանձնաժողովի անդամներին, ովքեր ոչ ուշ, քան 2 օրյա ժամկետում ներկայացնում են իրենց դիրքորոշումը՝

- կա՛մ ծառայողական քննություն հարուցելը մերժելու մասին, որի մասին Հանձնաժողովը պատշաճ ծանուցում է հաղորդում կամ միջնորդություն ներկայացրած անձին,

- կա՛մ ծառայողական քննություն հարուցելու մասին, որի դեպքում որոշումը և ծառայողական քննության նյութերը Հանձնաժողովը ուղարկում է Կոմիտեի նախագահին՝ Կոմիտեի ներքին անվտանգության վարչության (այսուհետ նաև ՆԱՎ) միջոցով նախնական ուսումնասիրության կատարումը կազմակերպելու համար: ՆԱՎ-ի պետը նախնական ուսումնասիրության կատարումը հանձնարարում է նույն վարչության ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի կամ անձանց:

Այսինքն, **Հանձնաժողովի կողմից ծառայողական քննություն հարուցելու մասին որոշում կայացնելու դեպքում, նախնական ուսումնասիրությունը կատարում է ոչ թե Հանձնաժողովը, այլ կոմիտեի ներքին անվտանգության վարչության աշխատակիցը:**

Նախնական ուսումնասիրության ընթացքում պարզվում են՝ կարգապահական խախտման դեպքը և կատարման հանգամանքները (կատարման ժամանակը, տեղը, եղանակը և այլն), կարգապահական խախտման կազմի տարրերը, Կոմիտեի ծառայողի մեղավորությունը կարգապահական խախտում կատարելու մեջ, կարգապահական խախտումը ծնող պատճառները և դրանց նպաստող պայմանները:

Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են.

1) Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի վարքագծի կանոնները խախտելը. կանոններն ունեն պարտադիր և խրախուսելի բաղադրիչներ[113]: Ծառայողը կարող է ենթարկվել կարգապահական պատասխանատվության պարտադիր կանոններին չհետևելու համար: Պարտադիր կանոններն ընդգրկում են բարեխղճության և հանրային շահին հավատարմության, թափանցիկություն և հաշվետվողականության, շահերի բախման կառավարման, նվերներ ընդունելու արգելքի, բարեկրթության, հարգալիրության, հանրային լրատվամիջոցներով և սոցիալական ցանցերով հաղորդակցության, պաշտոնական տեղեկատվություն հրապարակելու, հանրային ռեսուրսներն օգտագործելու, օբյեկտիվության պահպանման և խտրականության բացառման, քաղաքական չեզոքության և քաղաքական զսպվածության, կոռուպցիոն բնույթի դեպքերի և այլ իրավախախտումների հետ կապված հարցերը:

2) Իր պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը.ներառում է Սահմանադրության, օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները չկատարելը, զբաղեցրած պաշտոնում իր իրավունքներն ու պարտականությունները սահմանող իրավական ակտերին չտիրապետելը, իր լիազորություններն իրականացնելիս մարդու և քաղաքացու իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունը չապահովելը, պահանջվող մասնագիտական որակավորում և գործնական հմտություններ չապահովելը, սահմանած կարգով հերթապահություն չիրականացնելը, օրենքով սահմանված կարգով և ժամկետներում անցնել ատեստավորում և վերապատրաստում չանցնելը և այլն[114]:

3) Աշխատանքային ներքին կարգապահական կանոնները պարբերաբար խախտելը. ներառում է Կոմիտեում աշխատանքի ընդունման և ազատման կարգի, աշխատանքի ռեժիմի, աշխատաժամանակի հաշվարկի, աշխատողներին խրախուսելու, կարգապահական պատասխանատվության ենթարկելու և այլ հարցերի վերաբերյալ կանոնների խախտումը:

4) Օրենքով սահմանված սահմանափակումները կամ անհամատեղելիության կամ (...) շահերի բախմանն առնչվող պահանջները չպահպանելը. Պաշտոն զբաղեցնող անձը պետք է խուսափի շահերի բախման իրավիճակի առաջացումից, ձեռնպահ մնա շահերի բախման իրավիճակում գործողություն (անգործություն) կատարելուց կամ որոշում ընդունելուց, այդ թվում՝ որոշման կայացմանն ուղղված նախապատրաստական աշխատանքներին (փաստաթղթերի նախագծերի կազմում, քննարկումների կազմակերպում, որոշման վրա ազդեցություն ունեցող հանձնախմբերի ձևավորում և այլն) մասնակցելուց կամ այլ կերպ որոշման կայացման գործընթացին մասնակցելուց: Պաշտոն զբաղեցնող անձի մասնավոր շահը ներառում է որևէ արտոնություն իրեն կամ իր հետ փոխկապակցված անձանց, ինչպես նաև այն անձանց կամ կազմակերպություններին, որոնց հետ ինքը կամ իր հետ փոխկապակցված անձն ունի գործարար, քաղաքական կամ այլ գործնական կամ անձնական հարաբերություններ:

5) Առաքինության ստուգման բացասական արդյունքները: Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների առաքինության ստուգման կարգը դեռևս հաստատված չէ Կոմիտեի նախագահի կողմից: Այն գտնվում է նախագծային փուլում և մշակվել է միջազգային, առավելապես ուկրաինական փորձի հիման վրա[115]: Հակակոռուպցիոն կոմիտեի կանոնադրությանը[116] համապատասխան ծառայողների առաքինության ստուգումը, այդ թվում՝ պրովոկացիոն եղանակներով, պետք է իրականացնի Կոմիտեի ներքին անվտանգության վարչությունը:

Վերը նշված հարցերի, մասնավորապես վարքագծի կանոնների դրսևորման, բարեվարքության համակարգի, անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների առնչությամբ **Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողն իրավունք ունի ստանալու խորհրդատվություն**

---

[113] Տե՛ս ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի վարքագծի կանոնները սահմանելու մասին N 30-Լ հրամանը
[114] Տե՛ս Հակակոռուպցիոն կոմիտեի մասին օրենքի 29-րդ հոդվածը
[115] Կոմիտեի ծառայողի հետ անցկացված խորին հարցազրույցի արդյունքում ձեռք բերված տեղեկատվություն
[116] Տե՛ս ՀԿԿ կանոնադրությունը՝ https://www.anticorruption.am/hy/pages/show/Statute

հակակոռուպցիոն կոմիտեի բարեվարքության հարցերով կազմակերպչից[117]: Գործնականում որոշ մարմիններում այս ինստիտուտը արդյունավետ չի գործում՝ կա՛մ նրանց հաստիքները թափուր են, կա՛մ էլ բարեվարքության հարցերով կազմակերպչի գործառույթները ժամանակավորապես վերապահված են այլ ծառայողի կամ պաշտոնատար անձի[118]: **Հակակոռուպցիոն կոմիտեում բարեվարքության հարցերով կազմակերպչին առանձին պաշտոն տրված չէ**[119]**, վերջինս հանդիսանում է Կոմիտեի անձնակազմի կառավարման վարչության աշխատակից և իրականացնում է բարեվարքության հարցերով կազմակերպչի գործառույթները ի լրումն իր գործառույթների:** Այս կառուցակարգը հակակոռուպցիոն կոմիտեում ներդրվել է 26.06.23թ. -ից, սակայն դեռևս դրա կիրարկման և բարեվարքության հարցերով կազմակերպչի գործառույթների վերաբերյալ իրազեկման աշխատանքների անհրաժեշտություն կա[120]: Հաշվի առնելով բարեվարքության հարցերով կազմակերպչի կարևոր դերակատարությունը, գտնում ենք, որ դրա համար անհրաժեշտ է նախատեսել առանձին հաստիք՝ ապահովելով վերջինիս գործառույթների վերաբերյալ ծառայողների պատշաճ իրազեկումը:

Ծառայողական քննության նախնական ուսումնասիրությունն իրականացվում է հնարավորինս սեղմ ժամկետում, բայց ոչ ավելի, քան ծառայողական քննություն հարուցելուց սկսած 20 օրվա ընթացքում: **Արդյունքում կազմվում է եզրակացություն: Կարգապահական խախտման առկայության դեպքում դրանում նշվում է նաև առերևույթ կարգապահական խախտման իրավական գնահատականը:** Եզրակացությունը ներկայացվում է ՆԱՎ-ի պետին, որը համաձայնության դեպքում ստորագրությամբ հաստատում է այն: Այնուհետև եզրակացությունը ներկայացվում է Կոմիտեի նախագահին, որն էլ այն ուղարկում է Հանձնաժողովին՝ կարգապահական վարույթ հարուցելու հարցը լուծելու համար:

Հակակոռուպցիոն կոմիտեում կարգապահական խախտման փաստի առթիվ ծառայողական քննություն հարուցելու նպատակով Կարգապահական հանձնաժողով է ներկայացվել 3 միջնորդություն.1 միջնորդություն ինքնավար պաշտոն զբաղեցնող և 2 միջնորդություն օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձանց վերաբերյալ: Ներկայացված միջնորդություններից 1-ով որոշում է կայացվել ծառայողական քննություն հարուցելը մերժելու մասին, որը վերաբերել է ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի, 2-ով հարուցվել է ծառայողական քննություն:
Նախնական ուսումնասիրության արդյունքներով մեկ եզրակացությամբ հաստատվել է կարգապահական պատասխանատվության համար հիմք հանդիսացող կարգապահական խախտման դեպքը: Այդ եզրակացության հիման վրա հարուցվել է կարգապահական վարույթ[121]*:*

Կարգապահական վարույթ

Կարգապահական վարույթը բաղկացած է եզրակացության քննարկման, լսումների և որոշումների կայացման փուլերից: Կոմիտեի նախագահի կողմից եզրակացությունը ստանալուց հետո Հանձնաժողովի

---

[117] Տե՛ս Հակակոռուպցիոն կոմիտեի մասին ՀՀ օրենքի 34.2 հոդվածը, Հանրային ծառայության մասին ՀՀ օրենքի 46 հոդվածը

[118] Օրինակ՝ համայնքապետարանի աշխատակազմի բարեվարքության հարցերով կազմակերպչի գործառույթները հիմնականում վերապահվել են աշխատակազմի քարտուղարին կամ այլ աշխատակիցների, տե՛ս https://www.arlis.am/Annexes/7/2023_N1871hav.1.pdf

[119] Բարեվարքության հարցերով բոլոր կազմակերպիչները զբաղեցնում են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով սահմանված Մ2 ենթախմբի պաշտոններ, որոնց պաշտոնի անձնագրով սահմանվում է, որ մասնագետը անմիջական ենթակա և հաշվետու է ստորաբաժանման ղեկավարին:

[120] Կոմիտեի ծառայողների հետ անցկացված խորին հարցազրույցի արդյունքում ձեռք բերված տեղեկատվություն

[121] Տե՛ս ՀԿԿ 08.05.2024թ.-ի գրությունն ի պատասխան ԻՊԱՍ 30.04.2024թ.-ի հարցմանը

նախագահը հրավիրում է նիստ: **Եզրակացության քննարկման արդյունքում հանձնաժողովը որոշում է կայացնում կարգապահական վարույթ հարուցելու կամ չհարուցելու մասին:**

Կարգապահական վարույթ չի հարուցվում, եթե լրացել է կարգապահական վարույթի տևողության ժամկետը՝ մեկ ամիսը /հիմքերն ի հայտ գալուց հետո՝ 30-օրյա ժամկետը/, բացառությամբ հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի բացակայության դեպքերի: Այդ դեպքերում կարգապահական վարույթի տևողությունը կարող է երկարաձգվել հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի բացակայության ժամանակահատվածով[122]:

Նախ, օրենքով և հրամանով մեկնաբանված չեն «ծառայողի բացակայության դեպքերը», դրանց շրջանակը, հարգելի կամ անհարգելի լինելու չափորոշիչները: Միևնույն ժամանակ, օրենքի մեկ այլ դրույթում՝ կապված կարգապահական տույժի նշանակման ժամկետների հետ, բացառությունները պայմանավորվել են առավել կոնկրետ իրավիճակներով՝ հիվանդություն կամ արձակուրդում գտնվելու ժամանակաշրջան /ընդ որում այս ցանկը նույնպես կարելի է ընդլայնել, ներառելով, օրինակ՝ գործուղման ժամանակահատվածը/, ինչն առավել ընդունելի է: Հետևաբար, գտնում ենք, որ անհրաժեշտ է զերծ մնալ ընդհանրական ձևակերպումներից, դրանց հաղորդելով հստակություն և չափելիություն՝ ապահովելու համար իրավական որոշակիության պահանջները:

Երկրորդ, գտնում ենք, որ 30-օրյա ժամկետը լրանալու հիմքով կարգապահական վարույթ չհարուցելու կարգավորումը խնդրահարույց է, քանզի գործող ընթացակարգային հերթականության արդյունքում միայն հաղորդում ստանալուց մինչև կարգապահական վարույթ հարուցելու գործընթացը արդեն իսկ տևում է 22 օրից ավելի[123]: 30-օրյա ժամկետի սահմանումը և դրա չպահպանումը Հանձնաժողովի և Կոմիտեի ծառայողների ծանրաբեռնվածության կամ այլ պատճառով, չի կարող իրավաչափ համարվել հաղորդում/միջնորդություն ներկայացրած անձի իրավունքների ու շահերի պաշտպանության տեսանկյունից:

Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշում կայացնելու դեպքում Հանձնաժողովը քննարկում է լսումներ անցկացնելու հարցը: Մինչ կարգապահական խախտման վերաբերյալ փաստական տվյալների հետազոտումը սկսելը Կոմիտեի ՆԱՎ-ի նախնական ուսումնասիրություն իրականացնող ծառայողը ներկայացնում է եզրակացությունը, ըստ անհրաժեշտության տրվում են հարցեր, այնուհետև Հանձնաժողովն անցնում է նախնական ուսումնասիրության նյութերի հետազոտմանը, որի ընթացքում լսումների մասնակիցները իրավունք ունեն ներկայացնել պարզաբանումներ և հարցեր տալ: Անձանց բացատրությունը կարող է վերցվել նաև տեսակապի միջոցով: Կարգապահական հանձնաժողովը կարգապահական վարույթի ընթացքում կարող է իրականացնել նախնական ուսումնասիրություն իրականացնող անձին վերապահված լիազորությունները կամ դրանց կատարումը վերապահել նախնական ուսումնասիրություն իրականացրած անձին:

Լսումներից հետո Հանձնաժողովը հեռանում է խորհրդակցական սենյակ: Կարգապահական հանձնաժողովը կարգապահական խախտման հարցը քննելիս քվեարկությամբ որոշում է կարգապահական խախտման փաստի առկայությունը, կատարված խախտման մեջ հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի մեղավորության հարցը և պատասխանատվության ենթարկելու կապակցությամբ որոշում կայացնելու համար անհրաժեշտ այլ հարցեր: Այս հարցերի քննարկումից հետո, Հանձնաժողովը գաղտնի

---

[122] Տես Հակակոռուպցիոն կոմիտեի մասին ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը, ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում ծառայողական քննություն իրականացնելու կարգը սահմանելու մասին N 57-Լ հրամանի 48-րդ, 51-րդ կետերը

[123] Ծառայողական քննության հիմքերն ի հայտ գալուց՝ հաղորդում, միջնորդություն ստանալուց հետո մինչև 2 օրյա ժամկետում Հանձնաժողովի անդամները քվեարկում են ծառայողական քննություն հարուցելու հարցը, կայացնում որոշում, որոշումն ուղարկում Կոմիտեի նախագահին, նախագահը այդ որոշումը ուղարկում է ՆԱՎ-ի պետին, ՆԱՎ-ի պետը՝ նույն վարչության ծառայողին, վերջինս մինչև 20 օր տևողությամբ կարող է իրականացնել նախնական ուսումնասիրություն, կազմել եզրակացություն, ուղարկել ՆԱՎ-ի պետին, ՆԱՎ-ի ստորագրում և ուղարկում է Կոմիտեի նախագահին, Կոմիտեի նախագահը՝ Հանձնաժողովին, որից հետո Հանձնաժողովը որոշում է կայացնում կարգապահական վարույթ հարուցելու կամ չհարուցելու մասին:

քվեարկությամբ, ձայների պարզ մեծամասնությամբ /Հանձնաժողովի անդամն իրավունք չունի ձեռնպահ մնալ քվեարկությունից/ կայացնում է հետևյալ որոշումներից մեկը[124]՝

1) կարգապահական խախտման փաստի բացակայության մասին

2) կարգապահական խախտման փաստի առկայության և Կոմիտեի ծառայողի մեղավորության մասին

3) կատարված կարգապահական խախտման մեջ Կոմիտեի ծառայողի մեղավորության բացակայության մասին:

Ի դեպ, եթե հարուցված կարգապահական վարույթի տևողությունը, Հանձնաժողովի քվորում չունենալու պատճառով, գերազանցում է օրենքով սահմանված մեկամսյա ժամկետը, ապա վարույթը թողնվում է անհետևանք, որի վերաբերյալ կայացվում է որոշում: Այլ կերպ, եթե հնարավոր չի լինում 30 օրվա ընթացքում ապահովել հանձնաժողովի անդամների կեսից ավելիի ներկայությունը և քվեարկությունը նիստի ընթացքում, ապա կարգապահական վարույթը պարզապես թողնվում է անհետևանք:

Այս առումով նշենք, որ Կարգապահական հանձնաժողովի անդամները ներկայացված են տարբեր կառույցների կողմից, անկախ են և գործում են հասարակական հիմունքներով, հետևաբար թույլ են նաև նրանց գործառույթների նկատմամբ վերահսկողության մեխանիզմները: Գտնում ենք, որ նման իրավիճակում՝ հանձնաժողովի անդամի բացակայության դեպքում, անհրաժեշտ է նախատեսել կարգապահական վարույթի տևողության երկարաձգման հնարավորություն, ինչպես նախատեսված է կոմիտեի ծառայողի բացակայության դեպքում:

Հանձնաժողովի որոշումը եռօրյա ժամկետում ուղարկվում է Կոմիտեի նախագահին կամ Կոմիտեի ծառայողին պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին, որի հիման վրա էլ վերջինս համապատասխան որոշմամբ կամ հրամանով Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի նկատմամբ նշանակում է կարգապահական տույժ՝ կարգապահական խախտման ծանրությունից ելնելով՝ զգուշացում, նկատողություն, խիստ նկատողություն, դասային աստիճանի իջեցում՝ մեկ աստիճանով, պաշտոնի իջեցում՝ մեկ աստիճանով, պաշտոնից ազատում:

Հարուցված մեկ կարգապահական վարույթով որոշում է կայացվել կարգապահական խախտման փաստի առկայության և Կոմիտեի ծառայողի /օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձի/ մեղավորության մասին:
Կարգապահական վարույթի արդյունքով մեկ ծառայողի /օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձի/ նկատմամբ նշանակվել է կարգապահական տույժ:

Կարգապահական տույժը նշանակվում է, եթե վեց ամսից ավելի չի անցել կարգապահական խախտումը հայտնաբերելու օրվանից՝ չհաշված հիվանդության կամ արձակուրդում գտնվելու ժամանակահատվածը:

Կարգապահական տույժի նշանակման ժամկետն օրենքը պայմանավորել է խախտումը հայտնաբերելու օրով[125], հաշվի չառնելով այն հանգամանքը, որ փաստացի, նախագծով առկա կարգավորումների համաձայն՝ խախտումը հայտնաբերելուց հետո, Կոմիտեի ծառայողի բացակայություններով պայմանավորված ծառայողական քննությունը կարող է ձգձգվել մինչև վեց ամիս և ավելին, և ծառայողը,

[124] Դեմ քվեարկած անդամն իրավունք ունի ներկայացնել հատուկ կարծիք, որը կցվում է որոշմանը

[125] Ըստ նախագծի՝ կարգապահական տույժը նշանակվում է, եթե վեց ամսից ավելի չի անցել կարգապահական խախտումը հայտնաբերելու օրվանից՝ չհաշված հիվանդության կամ արձակուրդում գտնվելու ժամանակաշրջանը:

փաստացի չի ենթարկվի կարգապահական տույժի՝ այդ հիմքով: Այստեղ առկա է անպատժելիության վտանգ, որը հնարավոր է կանխարգելել ***կոմիտեի ծառայողի հարգելի բացակայության դեպքը՝ հիվանդության կամ արձակուրդում գտնվելու ժամանակաշրջանի նման ընդհանուր ժամկետներում չհաշվելով, ինչպես նաև կարգապահական տույժի նշանակման ժամկետը 6 ամսվա փոխարեն առնվազն 12 ամիս նախատեսելով:***

Նշենք, որ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը կամ Կոմիտեի ծառայողին պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը կարգապահական խախտում կատարած Կոմիտեի ծառայողին կարող է ազատել կարգապահական տույժից, եթե նման արարք կատարել է առաջին անգամ, զղջացել է և աջակցել է ծառայողական քննության իրականացմանը: Բացի այդ, եթե կարգապահական տույժ նշանակվելու օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողը նոր կարգապահական տույժի չի ենթարկվել, ապա նա համարվում է տույժ չունեցող:

Ամփոփելով կոմիտեի ծառայողի նկատմամբ ծառայողական քննության ուսումնասիրությունը, միաժամանակ առաջարկում ենք ծառայողական քննությունների արդյունքները հանրության համար դարձնել տեսանելի՝ կիսամյակային և տարեկան հաշվետվությունների, լրահոսային հրապարակումների միջոցով՝ Կոմիտեի թափանցիկ և հաշվետու գործունեության երաշխիքների շրջանակներում: Այս առումով հաջողված օրինակ է ՀՀ քննչական կոմիտեի գործելաոճը, ով պարբերաբար հրապարակում է կարգապահական հանձնաժողովի որոշումները՝ ժողովածուների տեսքով[126]:

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ՔՆՆԻՉՆԵՐԻ ԾԱՆՐԱԲԵՌՆՎԱԾՈՒԹՅՈՒՆ. ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐ

2023թ. -ի ընթացքում Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից քննարկվել և սահմանված կարգով ընթացք է տրվել 3793 դիմում-հաղորդման, ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց վարույթում քննվել է 1801 քրեական վարույթ, որոնցից ավարտվել են 513-ը: Ավարտված վարույթներից 169-ը՝ 399 անձանց վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան[127]: Հաշվի առնելով, որ 2023թ. -ին միջին հաշվարկով համալրված է եղել մոտ 50 քննիչի հաստիք, ստացվում է, որ ընթացիկ տարում յուրաքանչյուր քննիչ քննել է մոտ 36 քրեական վարույթ /միաժամանակ 15-ից 24 վարույթ՝ ցանկալի 4-ից 5 վարույթի փոխարեն[128]/:

Քննիչների նման ծանրաբեռնվածությունը ի թիվս այլ ազդող գործոնների, պայմանավորվել է նաև Կոմիտեի կողմից քննվող հանցանքների շրջանակով: Վերջին՝ 2022թ. -ի դեկտեմբերի 16-ին կատարված փոփոխություններով[129]՝ մինչև 2024թ. -ի հունվարի 1-ը հարուցված և քննվող կոռուպցիոն բնույթի քրեական գործերով նախաքննությունը շարունակելու էին իրականացնել այն մարմինները, որոնք մինչև այդ նշված գործերով իրականացրել են նախաքննություն, իսկ հակակոռուպցիոն կոմիտեն մինչև 2024թ. -ի հունվարի 1-ը իրականացնելու էր միայն այն կոռուպցիոն հանցագործությունների նախաքննությունը, որոնք կատարվել են պաշտոնատար անձանց կողմից՝ իրենց պաշտոնեական դիրքի հետ կապված, և որոնք կապված չեն բռնություն գործադրելու, դրա սպառնալիքի, զենք կամ հատուկ միջոց օգտագործելու հետ: Հակակոռուպցիոն կոմիտեի քննիչները 2024թ. -ի հունվարի 1-ից պետք է կատարեին նաև ՀՀ քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված բոլոր կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ վարույթներով

---

[126] Տե՛ս ՀՀ քննչական կոմիտեի կողմից հրապարակված փաստաթղթերը՝ https://www.investigative.am/news/categories/kargapahakan-handznazhoghovi-pastatghter#grid

[127] Տե՛ս ՀԿԿ տարեկան հաշվետվությունները՝ https://www.anticorruption.am/hy/pages/show/report

[128] Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի հետ խորին հարցազրույցի տվյալ, համեմատություն ուկրաինական փորձի հետ

[129] Տե՛ս 2022թ.-ի դեկտեմբերի 16-ի ՀՀ օրենքը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին, հղումը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=172456

նախաքննությունը: Սակայն, Հակակոռուպցիոն կոմիտեն, հաշվի առնելով քննիչների ծանրաբեռնվածությունը, ինչպես նաև այն հանգամանքը, որ ոչ շահադիտական նպատակներով և բռնություն գործադրելով հանցագործությունները չունեն կոռուպցիոն բնույթ, առաջարկություն է ներկայացրել նմանատիպ հանցագործությունները կոռուպցիոն հանցանքների ցանկից հանելու վերաբերյալ: Արդյունքում, ՀՀ քրեական օրենսգրքի հավելված N 1-ում կատարվել են փոփոխություններ և լրացումներ[130], որոնցով կոռուպցիոն հանցանքներից բացառություններ են նախատեսվել այն արարքները, որոնք կատարվել են ոչ շահադիտական դրդումներից ելնելով և բռնություն գործադրելով, բռնություն գործադրելու սպառնալիքով կամ զենք կամ հատուկ միջոց օգտագործելով:

Օրինակ՝ ոստիկանության բաժնում ոստիկանի կողմից բռնության կամ ցույցի ժամանակ անհամաչափ ուժի կիրառման դեպքում, արարքների մեջ չկան կոռուպցիոն տարրեր:

Հակակոռուպցիոն կոմիտեի քննիչ

Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից առաջարկություն է ներկայացվել նաև կոռուպցիոն հանցանքների ցանկից հեռացնելու մասնավոր ոլորտում, մասնավոր ընկերությունների ծառայողի կողմից կատարված յուրացումները՝ վստահված գույքի հափշտակությունները[131] (ցանկից հանել ՀՀ քրեական օրենսգրքի 256-րդ հոդվածի 2-րդ մասը), սակայն այս մասով օրենսդրական փոփոխություններ դեռևս չեն կատարվել:

Հակակոռուպցիոն կոմիտեի քննիչների ծանրաբեռնվածությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ քրեական դատավարության նոր իրավակարգավորումների արդյունքում գրեթե բոլոր հանցանքների մասին հաղորդումներով որպես կանոն նախաձեռնվում են քրեական վարույթներ /*ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 178-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ առերևույթ հանցանքի մասին պատշաճ հաղորդում ստանալու յուրաքանչյուր դեպքում քննիչն անհապաղ, սակայն ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում կազմում է քրեական վարույթ նախաձեռնելու մասին արձանագրություն*/:

Քրեական վարույթի շրջանակներում առանցքային է քննիչների և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձանց համագործակցության արդյունավետ կազմակերպման հարցը: Կոմիտեի հաստիքների համամասնությունից երևում է, որ գործնականում օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձանց թիվը կարող է բավարար չլինել քրեական վարույթներով քննիչին աջակցելիս:

Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձանց գործառույթը, աշխատանքի ծավալն այնքան շատ է, որ մեկ քրեական վարույթի շրջանակներում նույն օպերլիազորը կարող է իրականացնել 10-ից ավելի գաղտնի քննչական գործողություններ՝ մի քանի անձի հեռախոսային հաղորդակցության վերահսկում, ներքին դիտում, արտաքին դիտում: Հետևաբար, հետաքննական գործը մեկ օպերլիազորի հանձնելը կարող է հանգեցնել աշխատանքի ժամանակավոր դադարի:

Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայող

[130] Տե՛ս ՀՀ քրեական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=189458

[131] Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի հետ խորին հարցազրույցի տվյալ

Քննիչների ծանրաբեռնվածությունը, քննվող վարույթների ժամկետների ձգձգումները պայմանավորված են նաև բազմաթիվ քրեական վարույթներով միջազգային իրավական օգնության հարցերով: Դա ամիսներ տևող գործընթաց է, որի ժամանակ յուրաքանչյուր քայլ պետք է կատարվի ՀՀ միջազգային պայմանագրերին համապատասխան: Քննիչը իրավական օգնություն ցույց տալու հարցումը ներկայացնում է անմիջական հաղորդակցության միջոցով կամ ՀՀ գլխավոր դատախազության միջոցով՝ դրա կատարման նպատակով օտարերկրյա պետության իրավասու մարմին փոխանցելու համար: «Այդ հարցման և կից հավելվածների /մեծածավալ հաշվապահական փաստաթղթեր, բանկային գաղտնիքի վերաբերյալ տվյալներ/ կազմումը գործնականում տևում է առնվազն 3 օր, քանի որ կազմվում է միջազգային տարբեր պայմանագրերին համապատասխան ձևաչափերով, կառուցվածքով, տվյալներով, իսկ որևէ թերացման պատճառով դրանք կարող են ուղղակի մնալ անպատասխան կամ մերժվել: Հետևաբար, եթե մեկ քննիչն ունենա միջազգային իրավական օգնության հարցերով մոտ 5 քրեական վարույթ, ապա 15 օր կծախսի միայն այդ միջնորդությունների կազմման համար, ինչի արդյունքում մյուս քրեական վարույթները այդ ընթացքում կմնան անշարժ»[132]:

Երբ իրավական փոխօգնության միջնորդություններ ենք ուղարկում տարբեր երկրներ՝ յուրաքանչյուր երկիր իր ձևով է կազմում փաստաթղթերը: Հաճախ մեզ ուղարկում են ոչ թե էլեկտրոնային ֆայլ՝ excel, word, այլ թղթային փաստաթուղթը՝ սկանավորված տարբերակով, որում առկա տեղեկատվության՝ բանկային հաշիվների մուտքերը, ելքերը, մնացորդը ուսումնասիրելը տեխնիկապես բարդ է:

Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայող

Գործնականում, ծանրաբեռնվածության վրա ազդեցություն են ունեցել նաև հանրային քրեական հետապնդման ժամկետների սահմանումը նոր քրեական դատավարության օրենսգրքով[133]: Մասնավորապես, կախված հանցանքի ծանրությունից, մինչդատական վարույթում հանրային քրեական հետապնդումն այն հարուցելու պահից կարող է տևել 3-ից 10 ամիս[134]: Մինչդեռ, օբյեկտիվ իրականության մեջ կան դեպքեր, երբ միջին ծանրության հանցանքը, օրինակ՝ կաշառք տալը ունենում է 50-ից 100 դրվագ, իսկ հանրային քրեական հետապնդման ժամկետը 5 ամիս է:

Քրեական հետապնդման ժամկետները չափազանցված քչացվել են: Որպեսզի այն ինչ-որ մի օր, թեկուզ մեկ դեպքով չհանգեցնի ժամկետները պահպանելու նպատակով քննության որակի նվազման և դրա հետևանքով մեղադրյալի ռեաբիլիտացիոն հիմքով արդարացման, անհրաժեշտ է քրեական հետապնդման ողջամիտ ժամկետներ սահմանել գոնե բազմադրվագ հանցանքներով քրեական վարույթներով:

Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայող

Քննության ժամկետների խնդիրը արտահայտվում է նաև հայտարարագրերում կեղծ տվյալներ ներկայացնելու, հայտարարագրման ենթակա տվյալները թաքցնելու վերաբերյալ վարույթներով: Դրանք նույնպես միջին ծանրության հանցանքներ են, որոնց դեպքում քրեական հետապնդման ժամկետը 5 ամիս

---

[132] Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի հետ խորին հարցազրույցի տվյալ:
[133] ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, 192 հոդված, 1 մաս
[134] 1) երեք ամիս՝ ոչ մեծ ծանրության հանցանքի վերաբերյալ մեղադրանքով.
2) հինգ ամիս՝ միջին ծանրության հանցանքի վերաբերյալ մեղադրանքով.
3) ութ ամիս՝ ծանր հանցանքի վերաբերյալ մեղադրանքով.
4) տասն ամիս՝ առանձնապես ծանր հանցանքի վերաբերյալ մեղադրանքով:

է: «Մինչդեռ, յուրաքանչյուր հայտարարագրի գործով ստուգվում են անձի գույքերը, դրամական միջոցները, առաջ է գալիս երկրից դուրս ակտիվները ստուգելու անհրաժեշտությունը, որպես կանոն, դեպի դուրս տեղափոխված ակտիվներ են հայտնաբերվում՝ թեկուզ անվանափոխված, քննվում է այդ ակտիվների իրական չափը, ձեռքբերման եղանակը, ժամանակը, պատկանելիությունը և այլն: Ապա դրանք սառեցնելու, վերադարձնելու համար պահանջվում է տևական ժամանակահատված, ուղարկվում է իրավական օգնության միջնորդություն, որի պատասխանը, սովորաբար ստացվում է 6 ամիս հետո: Իսկ, եթե իրավական օգնության միջնորդության հասցեատիրոջ մոտ առաջանում են լրացուցիչ հարցեր, պահանջվում են պարզաբանումներ, օրինակ՝ դատարանի որոշում՝ բանկային գաղտնիք պահանջելու դեպքում, ապա այս ժամկետները կարող են հասնել մինչև 1 տարի»[135]: Պրակտիկայում քրեական վարույթով իրավական օգնություն ցույց տալու մասին միջազգային հարցման պատասխանը ստանալու հիմքով քրեական հետապնդման ժամկետը կասեցվում է, սակայն, միևնույնն է, կասեցման ժամկետը չի կարող գերազանցել 5 ամիսը:

Որպես կանոն միջպետական հարցումների պատասխանները ձգձգվում են, իրենց ներքին ընթացակարգերի, հետադարձ նամակագրության և այդ նամակների թարգմանության հետ կապված: Հակակոռուպցիոն Կոմիտեն թարգմանչական ծառայությունների մրցույթ է հայտարարում և հաղթող կազմակերպությունը իրականացնում է թարգմանչական ծառայությունները[136]:

Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայող

Քրեական վարույթներով քննիչների կողմից կատարվում են նաև տեղեկատվության պահանջով հարցումներ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններին, իրավաբանական անձին կամ ցանկացած այլ կազմակերպությանը: Գործնականում, գույքի վերաբերյալ հարցումները խնդիր չեն ներկայացնում, սակայն անձին վերաբերող և բժշկական[137], նոտարական, բանկային[138] կամ հարակից գաղտնիք պարունակող տեղեկությունները կարող են հավաքվել միայն դատարանի որոշմամբ:

Դատարանները բանկային գաղտնիքի ստացման կոնկրետ ժամկետներ են սահմանում, օրինակ՝ 10 օրում, ավելի կարճ ժամանակում, բայց, քանի որ Հայաստանում բանկերը շատ են, տեղեկատվությունը չենք հասցնում ստանալ: Գործնականում այդ որոշումը ուղարկվում է Կենտրոնական բանկ, Կենտրոնական բանկը տարբեր բանկերից հավաքում է առկա տեղեկատությունը, ինչը բանկային համակարգի ծանրաբեռնվածությունից ելնելով երբեմն բավականին ուշ է ստացվում և ժամանակային խնդիր է առաջանում:

Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայող

Քննիչների ծանրաբեռնվածության համատեքստում կարևոր է անդրադառնալ նաև քրեական վարույթի էլեկտրոնային ամրագրման հարցերին: 2023թ.-ի սեպտեմբերի 1-ից Հակակոռուպցիոն կոմիտեում գործարկվել է մինչդատական քրեական վարույթի էլեկտրոնային համակարգը («e-criminal case»)՝ քրեական գործերի մինչդատական վարույթի գործընթացների արդյունավետության բարելավման, ֆինանսական և

---

[135] Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի հետ խորին հարցազրույցի տվյալ:

136 Ուսումնասիրության ժամանակահատվածում թարգմանչական ծառայություններ է մատուցել «ԱՐԹ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը

[137] բացառությամբ բժշկական օգնություն և սպասարկում ստանալու համար դիմելու կամ այն ստանալու մասին տվյալի

[138] Ներառում է բանկային գաղտնիքը, ապահովագրական գաղտնիքը, արժեթղթերի շուկայի ոլորտի ծառայողական գաղտնիքը, կենսաթոշակային գաղտնիքը, ինչպես նաև վարկային տեղեկատվությունը և վարկային պատմությունը

մարդկային ռեսուրսների խնայողության, քրեական գործերի քննության ընթացքում սխալների, թերությունների, բացթողումների հնարավորության նվազեցման, քրեական գործերի քննության ընթացքում ապացույցների ձեռքբերման դյուրացման նպատակով: ՀՀ-ում համակարգից օգտվողների փոխհամագործակցությունը համակարգող մարմին է հանդիսանում ՀՀ դատախազությունը:

Հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական քրեական վարույթի էլեկտրոնային համակարգի օգտատերեր են հանդիսանում միայն ինքնավար պաշտոն զբաղեցնող անձինք[139], մինչդեռ համակարգի ստեղծման ռազմավարական նպատակն էր ապահովել պաշտոնական առցանց նամակագրությունը, էլեկտրոնային փաստաթղթերի շրջանառությունը գործի բոլոր մասնակիցների՝ օրինակ՝ տուժողի, մեղադրյալի, վկայի և քննիչի միջև, ընձեռել գործի ընթացքին առցանց հետևելու հնարավորություն, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց համար հնարավորություն ստեղծել առցանց կապ հաստատել, դիմում, բողոք և այլ փաստաթղթեր ներկայացնել պետական մարմիններին[140]:

Համակարգի նեդրման անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ դրա արդյունքում կբարելավվի գործերի քննության արդյունավետությունը, կբարձրանա վարույթն իրականացնող մարմինների և դատախազության նկատմամբ վստահության մակարդակը, կնվազեցվեն գործի քննության ծախսերը, կոռուցպիոն ռիսկերը[141]:

«E-criminal case» համակարգը գործարկվում է մասնակիորեն՝ առկա ծրագրային տեխնիկական խնդիրների պատճառով: Համակարգը մշակվել է դեռևս հին քրեադատավարական իրավակարգավորումների ժամանակահատվածում և, օրինակ՝ արձանագրություններ կան, որոնցում նշված չէ հակակոռուպցիոն կոմիտեի անունը: Հիմնականում համակարգով ստացվում է իրականացնել քրեական վարույթի նախաձեռնումը և մերժումը: Կա նաև ստորագրման խնդիր: Թղթային հաղորդում ստանալու դեպքում քննիչներն այն բոլոր պարտադիր վավերապայմաններով մուտքագրում են համակարգ: Յուրաքանչյուր հաջորդ գործողություն պարտադիր պահանջում է նախորդի ամբողջական լրացում, սակայն միշտ չէ, որ դա հնարավոր է, պետք է առնվազն պարտադիր դաշտը հանել և վերադառնալու, լրացնելու հնարավորություն տալ /*օրինակ՝ հանցանքի մասին հաղորդումը ձևակերպելու, ապա դրա հիման վրա վարույթ նախաձեռնելու կամ չնախաձեռնելու համար պարտադիր պահանջվում է հաղորդում ներկայացրած անձի հանրային ծառայության համարանիշը, մինչդեռ շատ քաղաքացիներ հաղորդում ձևակերպելիս չեն նշում իրենց հանրային ծառայության համարանիշը*/[142]:

Համակարգից զատ, քննիչները վարույթի մասնակիցների հետ նամակագրություն և փաստաթղթերի փոխանցում են իրականացնում նաև էլեկտրոնային փոստի միջոցով, քանի որ դա նախընտրելի տարբերակ է վարույթի մասնակիցների համար: Այս առումով, հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողներն ունեն պաշտոնական էլեկտրոնային փոստեր, հատուկ անվտանգային համակարգ, որը տարբերվում է սովորական անձնական էջից և ֆիքսում է օրինակ՝ անձին նամակը հասանելի դառնալու պահը[143]:

Ծրագիրը շատ լավ գործիք է, որը լիարժեք աշխատելու դեպքում կթեթևացնի քննիչների, դատախազների աշխատանքը: Նաև քաղաքացիների համար հեշտ կլինի, ովքեր կարող են մտնել համակարգ և ստանալ քննիչի կողմից ուղարկված փաստաթղթերը:

Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայող

---

[139] Տե՛ս ՀԿԿ 21.05.24թ.-ի գրությունը ի պատասխան ԻՊԱՍ 13.05.2024թ.-ի հարցմանը:

[140] Տե՛ս ՀՀ կառավարության 21 հուլիսի 2022 թվականի N 1133-Լ որոշման Հավելված 1, էջ 10՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=166582

[141] Տե՛ս ՀՀ կառավարության 21 հուլիսի 2022 թվականի N 1133-Լ որոշման Հավելված 2, Նպատակ 1, Գործողություն 16՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=166582

[142] Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի հետ խորին հարցազրույցի տվյալ:

[143] Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի հետ խորին հարցազրույցի տվյալ:

Ստացվում է, էլեկտրոնային համակարգի ստեղծման նպատակներից էր քրեական վարույթի արդյունավետությանը, ողջամիտ ժամկետների պահպանմանը, քննիչի ծանրաբեռնվածության թեթևացմանը նպաստելը, մինչդեռ փաստացի քննիչների աշխատանքը դարձել է դժվար, հաճախ կրկնակի /թղթային և էլեկտրոնային/ և ժամանակատար, իսկ քրեական վարույթի մյուս մասնակիցներն առհասարակ հասանելիություն չունեն համակարգին:

ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՀԱՆՑԱՆՔՆԵՐՈՎ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հակակոռուպցիոն կոմիտեում քննվող քրեական վարույթներով փորձաքննություններն անցկացվում են տարբեր փորձագիտական հիմնարկներում: Փորձաքննություններն առավելապես նշանակվում են ՀՀ արդարադատության նախարարության «Փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ում, Փորձաքննությունների ազգային բյուրոյում, ՀՀ առողջապահության նախարարության Դատաբժշկական գիտագործական կենտրոնում և ՀՀ Ներքին գործերի նախարարության ոստիկանության փորձաքրեագիտական վարչությունում: Հակակոռուպցիոն կոմիտեի քննիչները քրեական վարույթի շրջանակներում փորձաքննություններ են նշանակում նաև մասնավոր ընկերություններում, որոնք ունեն համապատասխան լիցենզիաներ: Մասնավոր ընկերություններում փորձաքննություններն ավելի արագ են իրականացվում, որակով չեն զիջում մյուս հիմնարկներին, ինչը հավանաբար պայմանավորված է ծանրաբեռնվածության աստիճանով:

Հիմնականում նշանակվում են համալիր փորձաքննություններ ապրանքագիտական, ֆինանսատնտեսական, դատահաշվապահական, շինարարարատեխնիկական ոլորտներում: Գործնականում նկատվում է նշված ոլորտների փորձագետների պակաս:

Տևական ժամանակով նույնիսկ ՀՀ արդարադատության նախարարության «Փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ում ապրանքագիտական և անշարժ գույքի գնահատման փորձագետ չկար:

Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայող

Փորձագետների պակասի պատճառով, երբեմն նշանակված փորձաքննություններն անցկացվել են 6 ամիս անց: Օրենքը թույլ է տալիս կասեցնել քրեական հետապնդման ժամկետները մինչև նշանակված փորձաքննության եզրակացության ստացումը, սակայն այդ ժամկետները նույնպես սահմանափակ են: «Սովորաբար, ժամկետային խնդիրներից խուսափելու համար փորձաքննությունները նշանակվում են հենց քրեական վարույթի սկզբից /*օրինակ՝ ի սկզբանե պարզ է, որ հափշտակության դեպքում հափշտակված գույքի արժեք պետքէ որոշվի և միանգամից նշանակվում է ապրանքագիտական, հաշվապահական փորձաքննություն*/»[144]:

Խնդիրը պայմանավորված է ՀԿԿ գործերի բնույթով. պետությունից ապօրինի օգտագործվող հողամասերի մասով, կառուցված, պատմական ժամանակների ոճով

[144] Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի հետ խորին հարցազրույցի տվյալ:

կառուցված մի քանի սեփական տների կառուցման վրա ծախսված գումարի որոշման մասով, համայնքային հողամասերի ապօրինի օտարման, տրված շինթույլտվությունների իրավաչափության, զբոսայգիների, պուրակների, տարածքների մասնավորեցման մասով անհրաժեշտ է նշանակել շինարարատեխնիկական ապրանքագիտական և տնտեսագիտական համալիր փորձաքննություններ: Վատնումների, յուրացումների, դիրքի չարաշահման գործերով պետք է պարզել օբյեկտների շուկայական արժեքը, որի համար անհրաժեշտ է նշանակել դատահաշվապահական, ֆինանսատնտեսական փորձաքննության անհրաժեշտություն:
Այս ոլորտներում փորձագետների պակաս կա, որովհետև այլ օբյեկտիվ հիմքով չի կարող պատճառաբանվել փորձաքննության նման երկար տևողությունը:
Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայող

Փորձաքննության օբյեկտները ծավալուն են, հասնում են մի քանի հազար էջի, ներառում են նախագծա-նախահաշվային փաստաթղթերը, կատարողական ակտերը շինարարության ընթացքում, համադրման ակտերը, ծախսված աշխատանքների ակտերը, գնման ընթացակարգի փաթեթները և մի շարք այլ փաստաթղթեր, որոնք փորձագետը պետք է վերլուծի, կատարի հետազոտական աշխատանք, տա եզրակացություն:

Հակակոռուպցիոն կոմիտեում քրեական վարույթներով ծախսերի հաշվառում չի իրականացվում[145], հետևաբար հնարավոր չէ պարզել առանձին քննչական և դատավարական գործողությունների, իրականացված փորձաքննությունների ծախսերը: Դրանք յուրաքանչյուր քրեական վարույթով կարող են էականորեն տարբեր լինել կախված վարույթի ծավալից և տևողությունից:

Կարևոր է նշել, **որ հակակոռուպցիոն կոմիտեն պայմանագրային հիմունքներով ունի ներգրավված փորձագետներ[146]**, որոնք Կոմիտեի ծառայողներին տրամադրում են խորհրդատվություն, աջակցություն, օգնում վերլուծությունների, հաշվետվությունների և եզրակացությունների հարցում: Վերջիններիս հակակոռուպցիոն կոմիտեի կողմից հատկացվել են աշխատասենյակներ, տրամադրվել գույք և նյութատեխնիկական միջոցներ:

Փորձագետները ուսումնասիրում են քրեական վարույթներով անցնող անձանց փաստաթղթերը, ցույց տալիս կատարված գործարքների թույլ տեղերը, անհամապատասխանությունները, նախանշում ելակետային տվյալները: Քննիչները զուգահեռաբար աշխատում են փորձագետների հետ՝ քրեական վարույթներով ստացված թվերի աղբյուրները հասկանալու, դրանից բխող գործողությունները ճիշտ ու տրամաբանորեն կառուցելու նպատակով:

Հաճախ Կոմիտեի փորձագետների կողմից նյութերի ուսումնասիրության արդյունքում, փորձաքննություն նշանակելու անհրաժեշտություն չի լինում: Սակայն, հաշվի առնելով, որ վերջիններս տալիս են մասնագիտական խորհրդատվություն, ոչ թե փորձագիտական կարծիք կամ եզրակացություն, ուստի առանձին որոշմամբ փորձաքննության նշանակումը նույնպես կարևոր է քրեական վարույթով փորձագետի եզրակացությունը որպես ապացույց ամրագրելու նպատակով: «Շատ հաճախ Կոմիտեի փորձագետների օժանդակությամբ իրականացված զննության վերլուծության արդյունքներով փորձաքննությունների նշանակումը հանգեցնում է փորձաքննության ժամկետների կրճատման՝ հաշվի առնելով, որ վերլուծությունն իրենց կողմից արդեն կատարված է»[147]:

---

[145] ՀԿԿ 18.09.23թ. գրություն՝ ի պատասխան ԻՊԱՍ 12.09.23թ.-ի հարցման:

[146] Որպես փորձագետներ ներգրավվել են Մելիք Հովհաննիսյանը, Արտաշես Ոսկանյանը և Գարեգին Այվազյանը, հղումը՝ https://www.anticorruption.am/hy/announcement/view/183

[147] Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի հետ խորին հարցազրույցի տվյալ:

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ԲՅՈՒՋԵ, ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ ԵՎ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱԳԵՑՎԱԾՈՒԹՅՈՒՆ

2023թ. -ի պետական բյուջեով Հակակոռուպցիոն կոմիտեին հատկացվել է 3,305,844,000 ՀՀ դրամ՝ կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման և քննության ապահովման ծրագրի շրջանակներում: Ընդ որում, հաստիքների թվի ավելացումը չի անդրադարձել Կոմիտեի բյուջեի վրա, քանի որ հաստիքներն ամբողջությամբ չեն համալրվել: Կոմիտեն, բացի պետական բյուջեից հատկացվող միջոցներից, այլ ֆինանսավորումներ չի ունեցել:

Կոմիտեի դեպոզիտ հաշիվ ունենալու նպատակով 2022 թ. -ի հոկտեմբերի 26-ին կատարվել են օրենսդրական փոփոխություններ[148]. նախատեսվել է, որ Կոմիտեն ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետարանում կարող է ունենալ դեպոզիտ հաշիվ, քրեական գործերով՝ հանցագործության հետևանքով պետությանը և հասարակությանը պատճառված վնասների վերականգման գործընթացի, այդ թվում նաև՝ հանցավոր ճանապարհով ձեռք բերված գումարների կարճ ժամկետներում վերադարձի, ինչպես նաև գույքի վրա կալանք դնելու վերաբերյալ քննչական գործողության պատշաճ կատարման ապահովման նպատակով[149]: Փաստացի, 2023թ. -ի դեկտեմբերից Հակակոռուպցիոն կոմիտեն ունի դեպոզիտ հաշիվ: Սակայն, քրեական վարույթներով՝ հանցագործության հետևանքով պետությանը պատճառված վնասների վերականգնված գումարները փոխանցվում են «Պետությանը պատճառված վնասի փոխհատուցում» 900005028155 գանձապետական հաշվին: Կոմիտեի դեպոզիտ հաշվին գումարները փոխանցելու փոխարեն դրանք մեկ միասնական հաշվին փոխանցելու պրակտիկան նախընտրելի է դիտարկվել պետության կողմից՝ յուրաքանչյուր տարի պետությանը պատճառված վնասի վերականգնման հանրագումար ունենալու նպատակով: Բացի այդ, տարբեր հաշվեհամարներին նման բնույթի կատարվող վճարումները դժվարացնում են Կառավարության լիազոր մարմնի աշխատանքը, քանի որ վերջինս, ըստ էության, հնարավորություն չունի դիտարկելու այդ գումարների գոյացման աղբյուրը[150]: Ընդ որում, դեռևս Կոմիտեի նախագահի կողմից չի սահմանվել Հակակոռուպցիոն կոմիտեի դեպոզիտ հաշվի ֆինանսական միջոցների տնօրինման կարգը:

Հակակոռուպցիոն կոմիտեն իր բնականոն գործունեության ապահովման համար չկանխատեսված ծախսերի ֆինանսավորման նպատակով ունի նաև պահուստային ֆոնդ: Պահուստային ֆոնդի մեծությունը հավասար է տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքով հակակոռուպցիոն կոմիտեում պաշտոն զբաղեցնող անձանց աշխատավարձի ֆոնդի երկու տոկոսին: 2023թ. -ին Կոմիտեի պահուստային ֆոնդից հատկացված միջոցներով չկանխատեսված ծախսերը հիմնականում հանդիսացել են Կոմիտեին հատկացված շենքերի նորոգման աշխատանքները, ինչպես նաև հատուկ նշանակության տեխնիկական միջոցների և սարքավորումների ձեռքբերումը:

---

148 Տե՛ս «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին ՀՀ օրենքը՝ https://www.arlis.am/documentview.aspx?docid=170549

149 Տե՛ս «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի հիմնավորումները՝ https://www.e-draft.am/projects/4180/about

150 Տե՛ս նախագիծը՝ https://www.e-draft.am/projects/5534/justification, ԶԼՄ հրապարակումը՝ https://arm.sputniknews.ru/20221101/petutjany-pattsharvats-vnasi-verakangnman-miasnakan-hashvehamar-kgvortsi-50723000.html

Ըստ ռազմավարական դրույթների՝ 2024թ. -ի 2-րդ կիսամյակում դատարանների շենքային պայմանների բարելավման գործընթացի մեկնարկից 4 տարի հետո պետք է գործի Հակակոռուպցիոն դատարանի և Հակակոռուպցիոն կոմիտեի նոր շենքային համալիրը[151]:

Հակակոռուպցիոն կոմիտեի համար շենք հիմնելու գործընթացն սկսվել է դեռևս 2021թ. -ին: Նախատեսվել էր այն կառուցել Երևան քաղաքի Աջափնյակ համայնքի Սիլիկյան թաղամասի 12-րդ փողոց N 86 հասցեի շուրջ 15 հեկտար հողամասում, սակայն նախագծման ընթացքում պարզվել է, որ հողը, որի վրա կառուցվելու է շենքը, դամբարանադաշտ է և հանդիսանում է հուշարձանային գոտի: Հետագայում նախատեսվել է Հակակոռուպցիոն կոմիտեի շենքը կառուցել Նուբարաշենում՝ կառուցվելիք Արդարադատության թաղամասում[152]: Սակայն, քննարկումների արդյունքում, ՀՀ կառավարության 2023թ. -ի հուլիսի 27-ի նիստում որոշում է կայացվել **Հակակոռուպցիոն կոմիտեի շենքը կառուցել Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Արղության փողոց 2-րդ նրբանցք 10 հասցեում**[153]: Նշված հասցեն որոշվել է Հակակոռուպցիոն կոմիտեի նախընտրությամբ՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի կողմից ներկայացված առաջարկներից[154]:

Նշենք, որ մինչ Կոմիտեի նոր շենքային համալիրի կառուցումը Հակակոռուպցիոն կոմիտեի քննչական գործառույթներ իրականացնող և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձինք տեղակայվել են Երևան քաղաքի Վաղարշ Վաղարշյան 13ա /կենտրոնական վարչական շենք/ և Մոսկովյան 1 հասցեներում գտնվող շինություններում, որոնք նորոգվել և հագեցվել են համապատասխան տեխնիկական միջոցներով և սարքավորումներով:

Նոր հաստիքները համալրելու պարագայում շենքային պայմանների խնդիրը դառնալու է օրհասական:

Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայող

Փաստացի, 2023թ. -ին Հակակոռուպցիոն կոմիտեում հնարավոր է եղել յուրաքանչյուր քննիչի համար ապահովել առանձին աշխատասենյակ, սակայն իրավիճակը կարող է փոխվել հաստիքների ամբողջական համալրումից հետո:

Իդեալական քննիչի աշխատանքային պայմանը պետք է լինի մեկ աշխատասենյակ- մեկ քննիչ տրամաբանության սահմաններում, առավել ևս հիմա, երբ տեսաձայնագրվում են քննչական գործողությունները: Հնարավոր չէ իրավիճակ, երբ նույն աշխատասենյակում աշխատեն երկու քննիչ ու իրենց աշխատանքը չտուժի դրանից, քանի որ մի քննիչը ստիպված է լինելու պլանավորել իր գործողությունները այն ժամին, երբ մյուս քննիչը գործողություն չի ունենա անելու, բացի այդ երկրորդ քննիչը դուրս է գալու

[151] 2019-2022թթ.-ի հակակոռուպցիոն ռազմավարություն, 2022-2026թթ.-ի ՀՀ դատական և իրավական բարեփոխումների ռազմավարություն: 2023-2026թթ.-ի հակակոռուպցիոն ռազմավարության մեջ շենքային պայմանների մասին կարգավորումներ չկան:

[152] Տե՛ս ԶԼՄ հրապարակումը՝ https://www.1lurer.am/hy/2023/02/22/%D5%94%D5%B6%D5%B6%D5%A1%D6%80%D5%AF%D5%BE%D5%A5%D5%AC-%D5%A7-%D4%B1%D6%80%D5%A4%D5%A1%D6%80%D5%A1%D5%A4%D5%A1%D5%BF%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%A9%D5%A1%D5%B2%D5%A1%D5%B4%D5%A1%D5%BD-%D5%AF%D5%A1%D5%BC%D5%B8%D6%82%D6%81%D5%A5%D5%AC%D5%B8%D6%82-%D5%B0%D5%A1%D6%80%D6%81%D5%A8/885969

[153] ՀՀ կառավարության 27 հուլիսի 2023թ. N1250- Ա որոշում, հղումը՝ https://www.e-gov.am/gov-decrees/item/40886/, տե՛ս նաև՝ https://www.youtube.com/watch?app=desktop&v=3q3yiFucGOY

[154] Տե՛ս ԶԼՄ հրապարակումը՝ https://hayeli.am/?p=723349&l=am

աշխատասենյակից մյուս քննիչի գործողության ժամանակ, որպեսզի քննչական գործողության ընթացքում կողմնակի անձինք ներկա չգտնվեն:

Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայող

Կոմիտեի նոր՝ միասնական շենքում քննչական և օպերատիվ-հետախուզական գործունեության կազմակերպումը կարևորվում է նաև աշխատանքի արագ և արդյունավետ կազմակերպման, ինչպես նաև ինֆորմացիայի արտահոսքի կանխարգելման տեսանկյունից: Օրինակ՝ նամակագրությունը քննիչների և օպերլիազորների միջև փոխանցվում է փոստային ծառայության միջոցով կամ հեռահար եղանակներով, խցանումների ժամանակ շենքից շենք գնալով, մինչդեռ հնարավոր կլիներ նույն շենքում փաստաթղթերն ու տեղեկատվությունը արագ փոխանցել միմյանց, արդյունավետ կառավարելով ժամանակն ու ռեսուրսները:

Նշենք, որ **Հակակոռուպցիոն կոմիտեն տեղակայված է միայն Երևան քաղաքում, այն չունի մարզային/տարածքային ստորաբաժանումներ:** Ի սկզբանե հակակոռուպցիոն ռազմավարությամբ նախատեսվել էր կազմավորել առնվազն 2 տարածքային բաժին, սակայն հետագայում Կոմիտեի սահմանափակ թվով հաստիքներով և ռեսուրսներով պայմանավորված քննարկման առարկա է դարձվել առհասարակ մարզային ստորաբաժանումների անհրաժեշտության հարցը: Բացառապես Երևան քաղաքում տեղակայված լինելը քրեադատավարական տեսանկյունից բացասաբար չի անդրադառնում քրեական վարույթի ընթացքի և կոնկրետ գործողությունների վրա, քանի որ օրենսդրությունը թույլ է տալիս Քննչական կոմիտեի մարզային ստորաբաժանումներին տեղում նախաձեռնել հրատապ գործողությունները, ապա վարույթը փոխանցել հակակոռուպցիոն կոմիտեին:

Իդեալական մասով կուզեինք ունենալ մարզային ստորաբաժանումներ, որովհետև դա կբերեր օպերատիվ իրավիճակի վերլուծության: Քննիչը տեղում ավելի օպերատիվ կգործեր, բայց պետք է նշել, որ ներկայումս մարզեր գնալու համար քննիչի տրանսպորտային միջոցի վառելիքի վրա ծախսվող խնդիրները չնչին են՝ համեմատ նրա, եթե մարզերում աշխատակազմ պահվի՝ համապատասխան հաստիքներով, շենքային պայմանների ապահովմամբ, նյութատեխնիկական ծախսերով և այլն:

Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայող

Հակակոռուպցիոն կոմիտեում նյութատեխնիկական հագեցվածության, կենցաղային պայմանների, տրանսպորտային սարքավորումների, կապի միջոցների և ինտերնետային ծառայությունների հետ կապված խնդիրներ չեն արձանագրվել[155]:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հակակոռուպցիոն կոմիտեի հաստիքների համալրում.

Այսպես, ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեին հատկացված 80 ինքնավար պաշտոնների համալրման նպատակով 2023թ. -ին անցկացվել են 6 մրցույթներ: Նոր մրցույթներն արդեն անցկացվել են օրենքով նախատեսված հիմնական մրցութային հանձնաժողովի կողմից՝ կազմված Կոմիտեի նախագահի

[155] Հակակոռուպցիոն կոմիտեի թվով 3 ծառայողների հետ խորին հարցազրույցների արդյունքներ

նշանակած Կոմիտեի երեք ծառայողից, Կառավարության առաջադրած մեկ անձից և ՔՀԿ մեկ ներկայացուցչից[156]: Վեց մրցույթներից երեքին խորհրդակցական ձայնի իրավունքով ներգրավվել է միջազգային փորձագետ: Միջազգային փորձագետը միացել է տեսակապի միջոցով, ընդ որում արձանագրվել են տեսակապի որակի և թարգմանության հետ կապված խնդիրներ: Հետագա մրցույթների շրջանակներում Կոմիտեն մի քանի անգամ հրապարակել է հայտարարություն՝ մրցութային հանձնաժողովի աշխատանքներին խորհրդակցական ձայնի իրավունքով միջազգային փորձագետի ներգրավման համար, սակայն հայտարարված մրցույթին հայտեր չեն ներկայացվել[157]: Վեց մրցույթներից մեկին՝ 2023թ.-ի դեկտեմբերի 18-ին առաջին անգամ խորհրդակցական ձայնի իրավունքով ներգրավվել է հոգեբան, չնայած հոգեբանի ներգրավման հնարավորություն նախատեսված է եղել դեռևս 2021թ.-ի հոկտեմբերից[158]: Քաղաքացիական հասարակության կազմակերպություն ներկայացնող անդամի ընտրության համար նոր մրցույթ չի հայտարարվել: Մրցույթները մշտադիտարկվել են «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպության ներկայացուցիչ դիտորդի կողմից: Նշենք, որ ոչ բոլոր մրցույթներին է ապահովվել Հանձնաժողովի բոլոր անդամների մասնակցությունը, ինչը որպես այդպիսին օրենսդրության խախտում չէ[159], սակայն կարող է բացասաբար անդրադառնալ հանձնաժողովի աշխատանքների օբյեկտիվության և արդյունավետության վրա:

Կոմիտեի ինքնավար պաշտոնների համալրման մրցույթն անցկացվել է փաստաթղթերի ուսումնասիրության, թեստավորման/գրավոր, բարեվարքության ուսումնասիրության, հարցազրույցի և արդյունքների ամփոփման փուլերով: Կոմիտեի ինքնավար պաշտոնների թեկնածուներին ներկայացվող պահանջների գնահատման ընդհանուր առավելագույն միավորը 100-ն է: Թեստավորման/ գրավոր փուլի առավելագույն միավորը 50-ն է, անցողիկը՝ 35-ը: Հարցազրույցի փուլի համար առավելագույն միավորը 50-ն է, անցողիկը՝ 35-ը, բայց այն նախապայմանով, որ բարեվարքության միավորը լինի առնվազն 22:

Ի տարբերություն Կոմիտեի ծառայողների առաջին կազմի համալրման մրցույթների, 2023թ.-ին անցկացված երկրորդ կազմի համալրման մրցույթներում պարտադիր պահանջ է եղել թեկնածուների օտար լեզուների իմացության ստուգումը, սակայն այս հարցին հարցազրույցների ընթացքում որևէ անդրադարձ չի կատարվել /գործընթացը ըստ ամենայնի սահմանափակվել է փաստաթղթի /դիպլոմի, հավաստագրի/ ներկայացմամբ/:

Դիտարկված մրցույթների հարցազրույցի փուլին մասնակցել է թեստավորման փուլը հաղթահարած 59 թեկնածուներից միայն 45-ը, որոնցից միայն 7-ն են եղել իգական սեռի ներկայացուցիչներ: Դիտարկված մրցույթներում ընդհանուր առմամբ հաղթող է ճանաչվել 40 թեկնածու (թեստավորման մասնակցած թեկնածուների 53%-ը), որոնցից 6-ը՝ կին (հաղթող ճանաչվածների 15%-ը)[160]: Դիտարկված վեց մրցույթներին մասնակցած թեկնածուներից միայն 39%-ն է հաղթահարել այն: Հատկանշական է, որ դիտարկված մրցույթներից որոշներն ի սկզբանե մրցակցային չեն եղել, քանի որ դիմողների թիվն ավելի քան կրկնակի անգամ պակաս է եղել թափուր հաստիքներից (տե՛ս, օրինակ՝ 2023թ.-ի հունվարի 18-ին հայտարարված մրցույթը՝ Հակակոռուպցիոն կոմիտեի 39 ինքնավար պաշտոնների համալրման նպատակով):

---

[156] Կոմիտեի ծառայողների առաջին կազմի ընտրության համար ձևավորվող մրցութային հանձնաժողովի կազմն այլ էր՝ հակակոռուպցիոն ոլորտի քաղաքականությունը մշակող լիազոր մարմնի երկու և Գլխավոր դատախազության, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի և քաղաքացիական հասարակության մեկական ներկայացուցիչ (ընդհանուր՝ 5 անդամ):

[157] Տե՛ս միջազգային փորձագետի ներգրավման վերաբերյալ հայտարարությունը՝ https://anticorruption.am/hy/announcement/view/242?fbclid=IwAR3Ldgn1w3_0k51abbBIHvJPGyNvcQ8-wN-6e4kTiDVybjHSypAnofKJHq8

[158] Տե՛ս Հակակոռուպցիոն կոմիտեի մասին ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 10-րդ կետի 4-րդ ենթակետը, հղումը՝ https://www.arlis.am/documentview.aspx?docid=151799

[159] Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է Հանձնաժողովի անդամների առնվազն կեսից ավելին:

[160] Նշված թվերն արտացոլում են մրցույթում մասնակցած և հաղթող ճանաչված անձանց թիվը, սակայն ոչ բոլոր հաղթողներն են անցել ՀԿԿ-ում ծառայության:

Հարցազրույցի փուլերի ընթացքում թեկնածուներին հարցեր են ուղղվել իրենց անձնական որակների և թեկնածուի պաշտոնը զբաղեցնելու համար անհրաժեշտ աշխատանքային ձեռքբերումների վերաբերյալ՝ կրթության, մասնագիտական փորձի, տվյալ պաշտոնում նշանակվելու նրանց շարժառիթի ու ակնկալիքի, ՀԿԿ առանձնահատկությունների, կոռուպցիայի վտանգավորության, կաշառք վերցնելու կամ տալու ավելի վտանգավոր լինելու, իրենց ուժեղ և թույլ կողմերի, քննչական խմբում աշխատելու, նախաձեռնողականության, աշխատանքում առաջնահերթություններ սահմանելու ունակության, հաղորդակցման հմտությունների, գործընկերոջ հանցանքի մասին վերադասին զեկուցելու, պաշտոնական դիրքից ելնելով որևէ արտոնություն ստանալու, սեղմ ժամկետում որոշում կայացնելու, քրեական ենթամշակույթի նկատմամբ վերաբերմունքի, ՀԿԿ դիմելու շարժառիթի, կատարած վարչական իրավախախտումների, կարգապահական խախտումների, քրեական վարույթների և քրեական հետապնդումների և այլն: Ոչ բոլոր հարցերն են տրվել բոլոր թեկնածուներին, եղել են նաև բացառիկ հարցեր կապված թեկնածուի քաղաքական հայացքների (չեզոքության), ոչ ավանդական սեռական կողմնորոշում ունեցող ենթակայի նկատմամբ թեկնածուի վերաբերմունքի հետ և այլն: Թեկնածուների անձնական որակները գնահատելու նպատակով ուղղված հարցերը հիմնականում եղել են ընդհանրական բնույթի, որոնց տրվել են նույնպիսի ընդհանրական և վերացական բնույթի պատասխաններ, օրինակ՝ կոռուպցիայի, քրեական ենթամշակույթի նկատմամբ վերաբերմունքը, թեկնածուի նախաձեռնողականությունը, թիմում աշխատելու կարողությունը, մինչդեռ որոշ ոլորտների վերաբերյալ տեղայնացված հարցերը՝ հիփոթետիկ իրավիճակների համատեքստում ներկայացնելու միջոցով, կարող էին լինել ավելի արդյունավետ և ենթադրել թեկնածուի կողմից չափելի պատասխաններ:

Ընդ որում, ի տարբերություն առաջին կազմի համալրման մրցույթների, երբ միջազգային փորձագետը Հանձնաժողովին տրամադրում էր ընդհանուր գնահատական-կարծիք թեկնածուի վերաբերյալ, երկրորդ կազմի համալրման մրցույթներում փաստացի նվազեցվել է միջազգային փորձագետի դերը, ումից անգամ խորհրդատվական բնույթի կարծիք չի հարցվել հարցազրույցից հետո:

Թեկնածուների բարեվարքությունը գնահատվել է գույքային դրության, շահերի բախման, քրեական, կարգապահական, վարչական պատասխանատվության, էթիկայի կանոնների, քրեական ենթամշակույթի, պաշտոնական դիրքի և հեղինակության, քաղաքական չեզոքությանն առնչվող չափանիշների հիման վրա՝ հաշվի առնելով նաև Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի տրամադրած բարեվարքության վերաբերյալ եզրակացությունը: ԿԿՀ-ի կողմից տրված բարեվարքության բացասական եզրակացություն ստացած որևէ թեկնածու մրցույթը չի հաղթահարել: Եղել են դեպքեր, երբ մինչև ՀԿԿ մրցույթին դիմելը թեկնածուներից ոմանք տեղյակ չեն եղել համասեփականատեր լինելու հանգամանքի մասին, նրանցից մի մասը տեղեկացել է ԿԿՀ եզրակացությունը ստալուց հետո, իսկ ոմանք՝ բարեվարքության թերթիկը լրացնելու նպատակով Կադաստրի կոմիտե հարցում անելու արդյունքում: Հարցազրույցի ընթացքում քննարկված հարցերից պարզ է դարձել, որ թեկնածուների մոտ բարեվարքության ստուգման համատեքստում արձանագրված հիմնական խնդիրներ են եղել՝ համատեղ բնակվող ընտանիքի անդամի կողմից հայտարարագիր չներկայացնելը, հայտարարագրում ոչ բոլոր եկամուտները նշելը եկամուտների բաժնում, այդ թվում՝ օտարված գույքից ստացված, տարեվերջի ու տարեսկզբի մնացորդի անհամապատասխանությունը և այլն: Ե՛վ ԿԿՀ-ն, և՛ Մրցութային հանձնաժողովը խնդրահարույց (ռիսկային) են համարել այն հանգամանքը, որ թեկնածուներից ոմանք խոշոր գումար են պահում կանխիկ եղանակով, որը կարող է ստեղծել կոռուպցիոն ռիսկեր: Հատկանշական է, որ որպես նման պրակտիկայի բացատրություն թեկնածուները նշում են չպլանավորված բժշկական ծախսեր կատարելու անհրաժեշտության դեպքում կանխիկ գումարի արագ հասանելիության անհրաժեշտությունը: Բացի այդ, որոշ թեկնածուներ խոստովանել են, որ ինքնուրույն չեն լրացնում հայտարարագիրը՝ վկայակոչելով հմտությունների պակասը: Որոշ թեկնածուներ էլ հայտարարագրում չեն նշել փաստացի տիրապետման տակ գտնվող գույքը, օրինակ՝ այլ անձանց անվամբ ձևակերպված ավտոմեքենաները, որոնք փաստացի վարել են իրենք: Բարեվարքության շրջանակներում քննարկվել են նաև թեկնածուների քրեական, վարչական և կարգապահական պատասխանատվության հետ կապված հարցերը: Որոշ թեկնածուներ

ունեցել են վարչական տույժեր, հիմնականում ՃԵԿ խախտումների համար: Որոշ դեպքերում թեկնածուները պնդել են, որ վարչական իրավախախտումը կատարել է իրենց ընտանիքի անդամներից մեկը, սակայն իրենց անվամբ է ձևակերպվել, քանի որ որևէ քայլ չեն ձեռնարկել հստակեցնելու իրավախախտում կատարող անձին: Եղել են նաև թեկնածուներ, ովքեր անցել են քրեական գործերով՝ տարբեր կարգավիճակներում, ինչպես նաև թեկնածուներ, ովքեր ենթարկվել են կարգապահական պատասխանատվության: Հատկանշական է, որ թեև թեկնածուներից ոմանք նշել են, որ համաձայն չեն եղել կարգապահական տույժի հետ, նրանցից ոչ ոք այն չի բողոքարկել՝ հարաբերությունները չվատթարացնելու կամ ներքին բողոքարկման մեխանիզմի արդյունավետ չլինելու նկատառումից ելնելով:

ՀԿԿ ծառայողների թեկնածուների մասնագիտական պատրաստում և ծառայողների վերապատրաստում.

ՀՀ արդարադատության ակադեմիայի պաշտոնական կայքում[161] Հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոնների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման ուսուցման ծրագրերը[162] առաջին անգամ հրապարակվել են 2023թ. -ին: 2023թ. -ի ընթացքում մասնագիտական պատրաստում են անցել Հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոնների թեկնածուների ցուցակում ընդգրկված 6 անձինք[163]: Մինչ այդ մրցույթը հաղթահարած թեկնածուները չեն անցել մասնագիտական պատրաստում, քանի որ համապատասխանել են օրենքով սահմանված ուսումնառությունից ազատման պահանջներին: 2023թ. -ի ընթացքում ուսումնառությունից ազատված են եղել 19 թեկնածու:

Վերապատրաստումների վերաբերյալ նշենք, որ տարբերակվում են պարտադիր և ոչ պարտադիր վերապատրաստումներ: 2023թ. -ի ընթացքում Հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոն զբաղեցնող անձինք դեռևս պարտադիր վերապատրաստում չեն անցել[164], քանի որ լրացած չի եղել նրանց պաշտոնավարման երկու տարին: 2023թ. -ին Արդարադատության ակադեմիայի պաշտոնական կայքում կոռուպցիային առնչվող նոր դասընթացներ չեն ավելացվել: 2023թ. -ի ընթացքում Հակակոռուպցիոն կոմիտեի 87 ծառայող /ինքնավար պաշտոն զբաղեցնող և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձինք/ անցել են ոչ պարտադիր՝ միջազգային և տեղական վերապատրաստումներ: Նշենք, որ մինչև 2023թ. -ի երկրորդ եռամսյակը, վերապատրաստումներից ազատման տարբեր հիմքեր էին նախատեսված Կոմիտեի ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձանց համար. վերապատրաստում չէին անցնում միայն օպերատիվ հետախուզական գործունեություն իրականացնող այն ծառայողները, որոնց ծառայության սահմանային տարիքը լրանալուն մնացել էր երկու տարվանից պակաս ժամանակ, ինչպես նաև այն կին ծառայողները, որոնք ունեին մինչև երեք տարեկան երեխա: 2023թ. -ին համապատասխան կարգերում կատարված փոփոխությունների արդյունքում օպերատիվ հետախուզական գործունեություն իրականացնող ծառայողների վերապատրաստումներից ազատման նշված հիմքերը հեռացվել են[165]:

Կարգապահական հանձնաժողովի ստեղծում և համապատասխան կարգերի ընդունում.

[161] Տե՛ս ՀՀ արդարադատության ակադեմիայի պաշտոնական կայքէջը՝ https://aoj.am/full-time-education
[162] Տե՛ս ուսումնական ծրագրերը՝ https://aoj.am/full-time-education/training-programs/2023/investigator
[163] ՀԿԿ 08.05.2024թ.-ի գրությունը ի պատասխան ԻՊԱՍ 30.04.2024թ.-ի հարցմանը
[164] ՀԿԿ 08.05.2024թ.-ի գրությունը ի պատասխան ԻՊԱՍ 30.04.2024թ.-ի հարցմանը
[165] Փոփոխությունները կատարվել են ԻՊԱՍ առաջարկությունների հիման վրա. հիմք՝ Հակակոռուպցիոն կոմիտեի ստեղծման և ընթացիկ գործունեության ուսումնասիրություն 2022թ.-ի ԻՊԱՍ զեկույց՝ առաջարկություններով և Զեկույցի վերաբերյալ Հակակոռուպցիոն կոմիտեի դիտարկումները:

Կարգապահական հանձնաժողովի ստեղծում նախատեսող օրենսդրական նախագիծն[166] ուժի մեջ է մտել 2023թ.-ի հուլիսի 29-ին[167]: Օրենսդրական փոփոխություններով սահմանվել է կարգապահական հանձնաժողովի կազմը՝ բաղկացած ութ անդամից. *ՀԿԿ նախագահի տեղակալներից մեկը՝ կոմիտեի նախագահի որոշմամբ, ՀԿԿ վիճակահանությամբ ընտրվող[168] մեկ, մեկ օպերատիվ-հետախուզական ստորաբաժանման ծառայող, Գլխավոր դատախազության ներկայացրած մեկ դատախազ, Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացրած մեկ ներկայացուցիչ, մեկ իրավաբան գիտնական[169], վարչապետի առաջարկությամբ ներկայացված հակակոռուպցիոն ոլորտի քաղաքականության մշակումն իրականացնող մարմնի երկու ներկայացուցիչ*: Հանձնաժողովի կազմում ընդգրկված չեն ներկայացուցիչներ քաղաքացիական հասարակության կառույցներից, ինչպես նաև նախատեսված չէ հանձնաժողովի նիստերին դիտորդների ներկայության հնարավորություն:

Նոր կարգավորումներով, կարգապահական խախտման փաստի առթիվ հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի նկատմամբ ծառայողական քննություն կարող է հարուցվել արդեն նաև ֆիզիկական կամ իրավաբանական անձի, պետական և տեղական ինքնակառավարման մարմնի կամ պաշտոնատար անձի հաղորդումների, զանգվածային լրատվության միջոցների հրապարակումների հիման վրա:

2023թ.-ին կարգապահական խախտման փաստի առթիվ ծառայողական քննություն հարուցելու նպատակով Կարգապահական հանձնաժողով է ներկայացվել 3 միջնորդություն:

Ստացված հաղորդումների/միջնորդությունների հիման վրա կարգապահական հանձնաժողովը որոշում է կայացնում կամ ծառայողական քննություն հարուցելը մերժելու կամ ծառայողական քննություն հարուցելու մասին: 2023թ. ներկայացված 3 միջնորդություններից 1-ով որոշում է կայացվել ծառայողական քննություն հարուցելը մերժելու մասին, 2-ով հարուցվել է ծառայողական քննություն:

Ծառայողական քննություն հարուցելու մասին որոշում կայացնելու դեպքում, որոշումը և ծառայողական քննության նյութերը Կոմիտեի նախագահի միջոցով տրամադրվում են Ներքին անվտանգության վարչությանը՝ նախնական ուսումնասիրության կատարումը կազմակերպելու համար: Արդյունքում, ՆԱՎ աշխատակցի կողմից կազմվում է եզրակացություն, ներառյալ՝ խախտման իրավական գնահատականը, որը տրամադրվում է կարգապահական հանձնաժողովին՝ կարգապահական վարույթ հարուցելու հարցը քննարկելու նպատակով: 2023թ.-ին նախնական ուսումնասիրության արդյունքներով ՆԱՎ-ի կողմից մեկ եզրակացությամբ հաստատվել է կարգապահական պատասխանատվության համար հիմք հանդիսացող կարգապահական խախտման դեպքը: Այդ եզրակացության հիման վրա հարուցվել է կարգապահական վարույթ[170]:

Կարգապահական վարույթ չի հարուցվում, եթե լրացել է կարգապահական վարույթի տևողության ժամկետը՝ մեկ ամիսը /հիմքերն ի հայտ գալուց հետո՝ 30-օրյա ժամկետը/, բացառությամբ հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի բացակայության դեպքերի[171]: Գտնում ենք, որ 30-օրյա ժամկետը լրանալու հիմքով կարգապահական վարույթ չհարուցելու կարգավորումը խնդրահարույց է, քանզի գործող ընթացակարգի համաձայն՝ կարգապահական խախտման մասին հաղորդում ստանալուց մինչև կարգապահական վարույթ

---

[166] Տե՛ս նախագծի պատմությունը՝ http://www.parliament.am/draft_history.php?id=14118&lang=arm

[167] Տե՛ս «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքում փոփոխություններ եվ լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքը՝ https://www.arlis.am/documentview.aspx?docid=180535

[168] Տե՛ս Հակակոռուպցիոն նախագահի՝ 2023թ.-ի օգոստոսի 16-ի թիվ 43-Լ հրամանի հավելվածով սահմանված Հակակոռուպցիոն կոմիտեի կարգապահական հանձնաժողովի կազմում վիճակահանությամբ ընտրվող հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների վիճակահանության անցկացման կարգը:

[169] Տե՛ս Հակակոռուպցիոն նախագահի՝ 2023թ.-ի օգոստոսի 16-ի թիվ 43-Լ հրամանի հավելվածով սահմանված Հակակոռուպցիոն կոմիտեի կարգապահական հանձնաժողովի կազմում իրավաբան գիտնականի ընտրության կարգը:

[170] Տե՛ս ՀԿԿ 08.05.2024թ.-ի գրությունն ի պատասխան ԻՊԱՍ 30.04.2024թ.-ի հարցմանը

[171] Տես Հակակոռուպցիոն կոմիտեի մասին ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը, ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում ծառայողական քննություն իրականացնելու կարգը սահմանելու մասին N 57-Լ հրամանի 48-րդ, 51-րդ կետերը

հարուցելու հարցի լուծումն արդեն իսկ տևում է 22 օրից ավելի[172]: Սա հաղորդում ներկայացրած անձի կամքից անկախ հանգամանք է, որի համար վերջինս չպետք է կրի դրա բացասական հետևանքները, իսկ կարգապահական խախտում թույլ տված ծառայողը ազատվի պատասխանատվությունից: Բացի այդ, մեկնաբանված չէ նաև «ծառայողի բացակայության դեպքերը», դրանց շրջանակը, հարգելի կամ անհարգելի համարվելու չափորոշիչները:

Այսպես, կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշում կայացնելու դեպքում Հանձնաժողովն ըստ անհրաժեշտության անցկացնում է լսումներ: Այս փուլում ևս առկա է նկատելի խնդիր. եթե հարուցված կարգապահական վարույթի տևողությունը, Հանձնաժողովի քվորում չունենալու /անդամների կեսից ավելիի մասնակցությունը չապահովելու/ պատճառով, գերազանցում է օրենքով սահմանված մեկամսյա ժամկետը, ապա վարույթը թողնվում է անհետևանք: Գտնում ենք, որ հանձնաժողովի անդամների բացակայության դեպքում, անհրաժեշտ է նախատեսել կարգապահական վարույթի տևողության երկարաձգման հնարավորություն, ինչպես կոմիտեի ծառայողի բացակայության դեպքում է:

Կարգապահական վարույթի արդյունքում, հանձնաժողովի կողմից կայացվում է հետևյալ որոշումներից մեկը[173]՝կարգապահական խախտման փաստի բացակայության մասին, կարգապահական խախտման փաստի առկայության և Կոմիտեի ծառայողի մեղավորության մասին, կատարված կարգապահական խախտման մեջ Կոմիտեի ծառայողի մեղավորության բացակայության մասին: *2023թ. -ին հարուցվել է մեկ կարգապահական վարույթ[174], որի արդյունքում* որոշում է կայացվել կարգապահական խախտման փաստի առկայության և Կոմիտեի ծառայողի մեղավորության մասին:

Որոշումն ուղարկվում է Կոմիտեի նախագահին՝ կարգապահական տույժ նշանակելու նպատակով: 2023թ. -ին կարգապահական վարույթի արդյունքով մեկ ծառայողի նկատմամբ Կոմիտեի նախագահի կողմից նշանակվել է կարգապահական տույժ*:* Այստեղ ևս բախվում ենք ժամկետային խնդիրների. կարգապահական տույժը նշանակվում է, եթե վեց ամսից ավելի չի անցել կարգապահական խախտումը հայտնաբերելու օրվանից՝ չհաշված հիվանդության կամ արձակուրդում գտնվելու ժամանակահատվածը: Գտնում ենք, որ հաշվի չի առնվել օրենքի մեկ այլ դրույթ, որով նախատեսվում է Կոմիտեի ծառայողի բացակայության դեպքը (բացակայության դեպքերի շրջանակ չի ուրվագծվում, դա կարող է լինել գործուղումը կամ այլ զբաղվածությունը), որը կարող է կրել տևական բնույթ՝ ընդհուպ 6 վեց ամսից ավելին: Հետևաբար, զուտ խախտումը հայտնաբերելու օրով պայմանավորված ժամկետի հաշվարկը, կհանգեցնի Կոմիտեի ծառայողի անպատժելիությանը, ուստի անհրաժեշտ է ժամկետի հաշվարկման բացառությունների շարքում, ի լրումն հիվանդության կամ արձակուրդում գտնվելու ժամանակահատվածի, նախատեսել նաև Կոմիտեի ծառայողի բացակայության դեպքերը, ընդհանուր ժամկետը սահմանելով առնվազն 12 ամիս՝ 6 ամսվա փոխարեն:

Կոմիտեի հրապարակայնության և հաշվետվողականության սկզբունքների տրամաբանությամբ, հանրային վերահսկողության և թափանցիկության նպատակով, գտնում ենք, որ անհրաժեշտ է ծառայողական քննությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներառել Կոմիտեի հրապարակային հասանելի՝ տարեկան կամ կիսամյակային հաշվետվություններում կամ հրապարակել առանձին նյութի տեսքով:

---

[172] Ծառայողական քննության հիմքերն ի հայտ գալուց՝ հաղորդում, միջնորդություն ստանալուց հետո մինչև 2 օրյա ժամկետում Հանձնաժողովի անդամները քվեարկում են ծառայողական քննություն հարուցելու հարցը, կայացնում որոշում, որոշումն ուղարկում Կոմիտեի նախագահին, նախագահը այդ որոշումը ուղարկում է ՆԱՎ-ի պետին, ՆԱՎ-ի պետը՝ նույն վարչության ծառայողին, վերջինս մինչև 20 օր տևողությամբ կարող է իրականացնել նախնական ուսումնասիրություն, կազմել եզրակացություն, ուղարկել ՆԱՎ-ի պետին, ՆԱՎ-ի ստորագրում և ուղարկում է Կոմիտեի նախագահին, Կոմիտեի նախագահը՝ Հանձնաժողովին, որից հետո Հանձնաժողովը որոշում է կայացնում կարգապահական վարույթ հարուցելու կամ չհարուցելու մասին:

[173] Դեմ քվեարկած անդամն իրավունք ունի ներկայացնել հատուկ կարծիք, որը կցվում է որոշմանը

[174] Տե՛ս ՀԿԿ 08.05.2024թ.-ի գրությունն ի պատասխան ԻՊԱՍ 30.04.2024թ.-ի հարցմանը

Նշենք, որ Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողը կարգապահական պատասխանատվության հիմքերի հետ կապված հարցերով իրավունք ունի ստանալու խորհրդատվություն բարեվարքության հարցերով կազմակերպչից[175]: Հակակոռուպցիոն կոմիտեում բարեվարքության հարցերով կազմակերպչին առանձին պաշտոն տրված չէ[176], վերջինս հանդիսանում է Կոմիտեի անձնակազմի կառավարման վարչության աշխատակից և իրականացնում է բարեվարքության հարցերով կազմակերպչի գործառույթները ի լրումն իր գործառույթների: Հաշվի առնելով բարեվարքության հարցերով կազմակերպչի կարևոր դերակատարությունը, գտնում ենք, որ դրա համար անհրաժեշտ է նախատեսել առանձին հաստիք՝ ապահովելով վերջինիս գործառույթների վերաբերյալ ծառայողների պատշաճ իրազեկումը:

Հակակոռուպցիոն կոմիտեի քննիչների ծանրաբեռնվածություն. ազդող գործոններ.

2023թ. -ին միջին հաշվարկով համալրված է եղել մոտ 50 ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց հաստիք, ստացվում է, որ ընթացիկ տարում յուրաքանչյուր ինքնավար պաշտոն զբաղեցնող անձ քննել է մոտ 36 քրեական վարույթ. միաժամանակ 15-ից 24 վարույթ՝ ցանկալի 4-ից 5 վարույթի փոխարեն[177]: Նման ծանրաբեռնվածությունը ի թիվս այլ ազդող գործոնների, պայմանավորվել է նաև Կոմիտեի կողմից քննվող հանցանքների շրջանակով, ինչի հիմքով Կոմիտեի առաջարկով ՀՀ քրեական օրենսգրքի հավելված N 1-ում կատարվել են փոփոխություններ և լրացումներ[178]՝ ցանկից բացառելով այն արարքները, որոնք կատարվել են ոչ շահադիտական դրդումներից ելնելով և բռնություն գործադրելով, բռնություն գործադրելու սպառնալիքով կամ զենք կամ հատուկ միջոց օգտագործելով:

Ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց աշխատանքի արդյունավետությունն ուղղակիորեն պայմանավորված է նաև օպերլիազորի պաշտաճ և արագ աշխատանքի կազմակերպումից: Սակայն, Կոմիտեի հաստիքների համամասնությունը դիտարկելով, պարզ է դառնում, որ գործնականում օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձանց թիվը կարող է բավարար չլինել քրեական վարույթներով քննիչին աջակցելու համար՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ մեկ օպերլիազորը մեկ քրեական վարույթի շրջանակներում կարող է իրականացնել միաժամանակ մի քանի գաղտնի քննչական գործողություններ:

Հակակոռուպցիոն կոմիտեի քննիչների ծանրաբեռնվածությունը պայմանավորվում է նաև քրեական դատավարության նոր իրավակարգավորումներով, մասնավորապես՝ գրեթե բոլոր հանցանքների մասին հաղորդումներով քրեական վարույթներ նախաձեռնելու պարտականությամբ և քրեական հետապնդման սեղմ ժամկետներով, որոնք գործնականում բավարար չեն բազմադրվագ կոռուպցիոն հանցագործություններով, մեծածավալ փաստաթղթերով հայտարարագրերի ստուգման կամ միջազգային իրավական օգնության միջնորդություն ենթադրող վարույթներով քննության համար: Միջազգային իրավական օգնություն ցույց տալու հարցումը և կից մեծածավալ հավելվածները /ըստ անհրաժեշտության թարգմանությամբ/ գործնականում կազմվում են առնվազն 3 օրում: Հետևաբար, եթե մեկ քննիչն ունենա միջազգային իրավական օգնության հարցերով մոտ 5 քրեական վարույթ, ապա 15 օր կծախսի միայն այդ միջնորդությունների կազմման համար[179]: Քրեական վարույթների տևողության վրա անդրադառնում են նաև քննիչների կողմից տեղեկատվության պահանջով հարցումները, քանի որ, օրինակ՝ բժշկական[180],

---

[175] Տե՛ս Հակակոռուպցիոն կոմիտեի մասին ՀՀ օրենքի 34.2 հոդվածը, Հանրային ծառայության մասին ՀՀ օրենքի 46 հոդվածը

[176] Բարեվարքության հարցերով բոլոր կազմակերպիչները զբաղեցնում են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով սահմանված Մ2 ենթախմբի պաշտոններ, որոնց պաշտոնի անձնագրով սահմանվում է, որ մասնագետը անմիջական ենթակա և հաշվետու է ստորաբաժանման ղեկավարին:

[177] Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի հետ խորին հարցազրույցի տվյալ, համեմատություն ուկրաինական փորձի հետ

[178] Տե՛ս ՀՀ քրեական օրենսգրքում լրացումներ եվ փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=189458

[179] Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի հետ խորին հարցազրույցի տվյալ:

[180] բացառությամբ բժշկական օգնություն և սպասարկում ստանալու համար դիմելու կամ այն ստանալու մասին տվյալի

բանկային[181] գաղտնիք պարունակող տեղեկությունները կարող են հավաքվել միայն դատարանի որոշմամբ: Հաշվի առնելով, քննիչների ծանրաբեռնվածությունը և այն հանգամանքը, որ քրեական վարույթի նախաձեռնման, փաստաթղթերի և տեղեկությունների հավաքագրման, միջազգային իրավական օգնություն ցույց տալու հարցման կազմման պարտականությունը այնուամենայնիվ գտնվում է քննիչի գործառույթների շրջանակներում և դրանք պատվիրակել հնարավոր չէ, ուստի հնարավոր լուծումը կարող է լինել քննիչների հաստիքների թվի ավելացումը:

Քրեական գործերի մինչդատական վարույթի գործընթացների արդյունավետության բարելավման նպատակով 2023թ. -ի սեպտեմբերի 1-ից Հակակոռուպցիոն կոմիտեում գործարկվել է մինչդատական քրեական վարույթի էլեկտրոնային համակարգը («e-criminal case»): Հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական քրեական վարույթի էլեկտրոնային համակարգի օգտատերեր են հանդիսանում միայն ինքնավար պաշտոն զբաղեցնող անձինք[182], մինչդեռ համակարգի ստեղծման ռազմավարական նպատակն էր ապահովել պաշտոնական առցանց նամակագրությունը, էլեկտրոնային փաստաթղթերի շրջանառությունը գործի բոլոր մասնակիցների՝ օրինակ՝ տուժողի, մեղադրյալի, վկայի և քննիչի միջև[183]: «E-criminal case» համակարգը գործարկվում է մասնակիորեն՝ առկա ծրագրային տեխնիկական խնդիրների պատճառով: Համակարգը մշակվել է դեռևս հին քրեադատավարական իրավակարգավորումների ժամանակահատվածում և, օրինակ՝ արձանագրություններ կան, որոնցում նշված չէ հակակոռուպցիոն կոմիտեի անունը, ուստի անհրաժեշտ է համապատասխանեցնել: Բացի այդ, յուրաքանչյուր հաջորդ գործողություն պարտադիր պահանջում է նախորդի ամբողջական լրացում, սակայն միշտ չէ, որ դա հնարավոր է, պետք է առնվազն պարտադիր դաշտը հանել և վերադառնալու, լրացնելու հնարավորություն տալ[184]:

Կոռուպցիոն հանցանքներով փորձաքննություններ.

Հակակոռուպցիոն կոմիտեում քննվող քրեական վարույթներով փորձաքննություններն անցկացվում են տարբեր փորձագիտական հիմնարկներում: Հիմնականում նշանակվում են համալիր փորձաքննություններ ապրանքագիտական, ֆինանսատնտեսական, դատահաշվապահական, շինարարարատեխնիկական ոլորտներում: Գործնականում նկատվում է նշված ոլորտների փորձագետների պակաս: Հատկանշական է, որ մասնավոր ընկերություններում փորձաքննություններն ավելի արագ են իրականացվում, որակով չեն զիջում մյուս հիմնարկներին: Փորձագետների պակասի պատճառով, երբեմն նշանակված փորձաքննություններն անցկացվում են 6 ամիս անց: Օրենքը թույլ է տալիս կասեցնել քրեական հետապնդման ժամկետները մինչև նշանակված փորձաքննության եզրակացության ստացումը, սակայն այդ ժամկետները նույնպես սահմանափակ են: Կարևոր է նշել, որ հակակոռուպցիոն կոմիտեն պայմանագրային հիմունքներով ունի ներգրավված փորձագետներ[185], որոնք Կոմիտեի ծառայողներին տրամադրում են խորհրդատվություն, աջակցություն, օգնում վերլուծությունների, հաշվետվությունների և եզրակացությունների հարցում:

Հակակոռուպցիոն կոմիտեի բյուջե, շենքային պայմաններ և նյութատեխնիկական հագեցվածություն.

2023թ. -ի պետական բյուջեով Հակակոռուպցիոն կոմիտեին հատկացվել է 3,305,844,000 ՀՀ դրամ: Կոմիտեն այլ ֆինանսավորումներ չի ունեցել: 2023թ. -ի դեկտեմբերից Հակակոռուպցիոն կոմիտեն ունի

---

[181] Ներառում է բանկային գաղտնիքը, ապահովագրական գաղտնիքը, արժեթղթերի շուկայի ոլորտի ծառայողական գաղտնիքը, կենսաթոշակային գաղտնիքը, ինչպես նաև վարկային տեղեկատվությունը և վարկային պատմությունը

[182] Տե՛ս ՀԿԿ 21.05.24թ.-ի գրությունը ի պատասխան ԻՊԱՍ 13.05.2024թ.-ի հարցմանը:

[183] Տե՛ս ՀՀ կառավարության 21 հուլիսի 2022 թվականի N 1133-Լ որոշումը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=166582 :

[184] Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի հետ խորին հարցազրույցի տվյալ:

[185] Որպես փորձագետներ ներգրավվել են Մելիք Հովհաննիսյանը, Արտաշես Ոսկանյանը և Գարեգին Այվազյանը, հղումը՝ https://www.anticorruption.am/hy/announcement/view/183

դեպոզիտ հաշիվ, սակայն, քրեական վարույթներով՝ հանցագործության հետևանքով պետությանը պատճառված վնասների վերականգնված գումարները փոխանցվում են մեկ միասնական՝ «Պետությանը պատճառված վնասի փոխհատուցում» 900005028155 գանձապետական հաշվին: Հակակոռուպցիոն կոմիտեն իր բնականոն գործունեության ապահովման համար չկանխատեսված ծախսերի ֆինանսավորման նպատակով ունի պահուստային ֆոնդ, որը հիմնականում ծախսվել է Կոմիտեին հատկացված շենքերի նորոգման աշխատանքների, հատուկ նշանակության տեխնիկական միջոցների և սարքավորումների ձեռքբերման համար: ՀՀ կառավարության 2023թ. -ի հուլիսի 27-ի նիստում որոշում է կայացվել Հակակոռուպցիոն կոմիտեի շենքը կառուցել Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Արողության փողոց 2-րդ նրբանցք 10 հասցեում[186]: Կոմիտեի նոր՝ միասնական շենքում քննչական և օպերատիվ-հետախուզական գործունեության կազմակերպումը կարևորվում է նաև աշխատանքի արագ և արդյունավետ կազմակերպման, ինֆորմացիայի արտահոսքի կանխարգելման տեսանկյունից: Տվյալ պահին Կոմիտեն չունի շենքային/աշխատասենյակի ապահովվածության խնդիր, սակայն նոր հաստիքները համալրելու պարագայում շենքային պայմանների խնդիրը դառնալու է օրհասական: Նշենք, որ Հակակոռուպցիոն կոմիտեն տեղակայված է միայն Երևան քաղաքում, այն չունի մարզային/տարածքային ստորաբաժանումներ, փոխարենը Քննչական կոմիտեի մարզային ստորաբաժանումները տեղում նախաձեռնում են հրատապ գործողությունները, ապա վարույթը փոխանցել հակակոռուպցիոն կոմիտեին: Հակակոռուպցիոն կոմիտեում նյութատեխնիկական հագեցվածության, կենցաղային պայմանների, տրանսպորտային սարքավորումների, կապի միջոցների և ինտերնետային ծառայությունների հետ կապված խնդիրներ չեն արձանագրվել[187]:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գործնական բնույթի առաջարկություններ

1. Ձանքեր գործադրել ՀԿԿ թափուր պաշտոնների համալրման մրցույթների անցկացումը պլանավորել այնպիսի ժամկետներում, որպեսզի առավելագույնս ապահովվի հանձնաժողովի անդամների ներկայացուցչականությունը:
2. Ապահովել թեկնածուների օտար լեզուների իմացության վերաբերյալ տեղեկատվությունը, ներառյալ թեկանուոծեի տիրապետած օտար լեզուն, գնահականը կամ հիմքը:
3. Վերանայել թեստավորման փուլերում տարբեր ինքնավար պաշտոնների /ՀԿԿ պետի տեղակալի, վարչության պետի, քննիչի և այլն/ համար կազմված հարցաշարերը, տարանջատելով դրանք՝ ըստ համապատասխան բարդության և բնույթի:
4. Հարցազրույցի փուլում ապահովել բոլոր թեկնածուներին հարցաշարի նույնաբովանդակ հարցերի առաջադրումը, բացառելու համար անհավասար մրցակցության և գնահատման ռիսկը:
5. Թեկնածուների անձնական որոշ որակներ և հայացքներ / կոռուպցիայի կամ քրեական ենթամշակույթի նկատմամբ վերաբերմունքը, թեկնածուի նախաձեռնողականությունը, թիմում աշխատելու կարողությունը, քաղաքական զսպվածությունը, ազդեցությունների նկատմամբ դիմադրողականությունը և այլն/ գնահատելու նպատակով ընդհանրական հարցի փոխարեն ներկայացվել իրավիճակային հարցադրումներ, որոնցում թեկնածուն կնրարագրի իր հնարավոր վարքագիծը:
6. Վերապատրաստումների արդյունավետության բարձրացման նպատակով Կոմիտեի ծառայողների շրջանում անցկացնել կարիքների գնահատում և սահմանել վերապատրաստումների առաջնահերթությունները և կոնկրետ ուղղությունները, այդ թվում՝ մարդու իրավունքների ոլորտում:

---

[186] ՀՀ կառավարության 27 հուլիսի 2023թ. N1250- Ա որոշում, հղումը՝ https://www.e-gov.am/gov-decrees/item/40886/, տե՛ս նաև՝ https://www.youtube.com/watch?app=desktop&v=3q3yiFucGOY

[187] Հակակոռուպցիոն կոմիտեի թվով 3 ծառայողների հետ խորին հարցազրույցների արդյունքներ

7. Մշակել և Արդարադատության ակադեմիայի պաշտոնական կայքում հրապարակել հեռաուսուցման նոր դասընթացներ՝ կոռուպցիայի և հարակից թեմաներով:
8. Հակակոռուպցիոն կոմիտեում ծառայողական քննությունների /կարգապահական վարույթների/ վերաբերյալ տեղեկատվությունը ներառել Կոմիտեի հրապարակային հասանելի՝ տարեկան կամ կիսամյակային հաշվետվություններում կամ հրապարակել առանձին նյութի տեսքով:
9. Վեր հանել և լուծել Հակակոռուպցիոն կոմիտեում գործարկվող մինչդատական քրեական վարույթի էլեկտրոնային համակարգի («e-criminal case») տեխնիկական խնդիրները:
10. Համալրել ապրանքագիտական, ֆինանսատնտեսական, դատահաշվապահական, շինարարարատեխնիկական և ՀԿԿ գործունեությանն առնչվող այլ ոլորտներում փորձագետների թիվը:
11. Կոմիտեի հաստիքների համալրմանը զուգահեռ բարելավել Կոմիտեի շենքային պայմանները՝ ապահովելով առանձին աշխատասենյակներ ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց համար:

Օրենսդրական բնույթի առաջարկություններ

12. Փոփոխություններ և լրացումներ կատարել Հակակոռուպցիոն կոմիտեի մասին ՀՀ օրենքի 34. 1-րդ հոդվածի 2-րդ մասում, ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի կարգապահական հանձնաժողովի աշխատակարգը սահմանելու մասին N 56-L հրամանի հավելվածի 3-րդ կետում՝ նախատեսելով Կոմիտեի կարգապահական հանձնաժողովի կազմում քաղաքացիական հասարակության կառույցների ներկայացուցիչների ընդգրկվածություն, ինչպես նաև հանձնաժողովի նիստերին դիտորդների ներկայության հնարավորություն:
13. Փոփոխություններ և լրացումներ կատարել Հակակոռուպցիոն կոմիտեի մասին ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 8-րդ կետում, ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում ծառայողական քննություն իրականացնելու կարգը սահմանելու մասին N 57-L հրամանի հավելվածի 48-րդ, 51-րդ կետերում. սահմանել Կոմիտեի ծառայողի բացակայության դեպքերի շրջանակը:
14. Փոփոխություններ և լրացումներ կատարել ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում ծառայողական քննություն իրականացնելու կարգը սահմանելու մասին N 57-L հրամանի հավելվածի 70-րդ կետում, կարգապահական հանձնաժողովի քվորում չունենալու դեպքում նախատեսելով կարգապահական վարույթի տևողության մեկամսյա ժամկետի երկարաձգման հնարավորություն:
15. Փոփոխություններ և լրացումներ կատարել Հակակոռուպցիոն կոմիտեի մասին ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 14-րդ կետում, ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում ծառայողական քննություն իրականացնելու կարգը սահմանելու մասին N 57-L հրամանի հավելվածի 76-րդ կետում, կարգապահական տույժի նշանակման ժամկետից բացառություն նախատեսելով նաև ծառայողի բացակայության դեպքերը և կարգապահական տույժի նշանակման ընդհանուր ժամկետը սահմանել առնվազն 12 ամիս՝ 6 ամսվա փոխարեն:
16. Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի կառավարման ստորաբաժանումում նախատեսել բարեվարքության հարցերով կազմակերպչի առանձին հաստիք՝ շահերի բախման, անկախության և ազդեցությունների չեթարկվելու նպատառումներից ելնելով:
17. Սահմանել Հակակոռուպցիոն կոմիտեի դեպոզիտ հաշվի ֆինանսական միջոցների տնօրինման կարգը:
18. Վերանայել դիտորդին ներկայացվող պահանջները՝ նվազեցնելով պահանջները և համահունչ դարձնելով դատական և դատախազական մարմիններում հաստիքների համալրման գործընթացի դիտորդների նկատմամբ ներկայացվող պահանջներին: